


ՄՈՒՐԱԳԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՑԱԽԻ ԴՊՐՈՅԸ



AKKAMUJIRIYU
MAY 1950

AKKAMUJIRIYU



GOVERNMENT OF MADRAS
MADRAS

АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ИСКУССТВ

МУРАД АСРАТЯН

АРЦАХСКАЯ ШКОЛА
АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ

ЕРЕВАН

1992

ՎՅԵՂԵՂ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՏԻՏՈՒՏ

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՅԱՆԻ ԴՊՐՈՑԸ

A II
83254

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1992

Տպագրվում է Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ճարտարապետության գոկոտոր-
պրոֆեսոր Վ. Մ. Հարությունյան

Գիրքը հրատարակության են ևրաշխավորել գրախոսներ՝
ճարտարապետության մեկնածուներ
Կ. Կ. Ղաֆադարյանը և Կ. Վ. Բալյանը

Հասրաթյան Մուրադ

Հ 368 Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը./Պատ.
խմբ.՝ Վ. Մ. Հարությունյան.—Եր.: ՀՀ ԳԱ հրատ., 1992. 121
էջ, 19 թերթ նկ.:

Գիրքը նվիրված է պատմական Հայաստանի Արցախ նահանգի ճարտարա-
պետության ձևավորման և զարգացման պատմությանը՝ վաղ միջնադարից մինչև
XIX դ.: Հանդամանորին ներկայացվում է ևրկրամասի XII—XIII դդ. շինարա-
րական արվեստը, հիմնավորվում այդ ժամանակաշրջանում առանձին արցախ-
յան ճարտարապետական դպրոցի գոյությունը, վեր հանվում նրա առանձնահատ-
կությունները:

Գիրքը հասցեագրվում է ճարտարապետներին, հնադեղներին, արվեստարան-
ներին և ընթերցող լայն շրջաններին:

4902000000

Հ ————— 80—91

703 (02)—92

ԳՄԴ 85.113 (22) 1

ISBN 5—8080—0286—9

Պատմական Հայաստանի Արցախ նահանգի առաջին հիշատակությունը վերաբերում է մ. թ. ա. VIII դարին¹: Արարատյան թագավորության արքա Սարգուր 2-րդի Մովքում պահպանված արձանագրությունում նշվում է, որ նա իր արշավանքով հասել է Ուրտեխինի երկրին: Սեպագիր այլ արձանագրություններում երկրամասը կոչվում է նաև Ուրտեխե. այստեղից էլ սերում է հայերեն Արցախ անունը: Հին հույներին երկրամասը ծառուխ էր Օբխիստենա անվանումով (Ստրաբոն), որը արտացոլում է հայերեն «Արցախ»-ը:

Արարատյան թագավորության անկումից հետո Արցախը, ըստ Մովսես Խորենացու վիկայության Երվանդունյաց Հայաստանի մասն էր կազմում (Ինչպես և նրան հարևան Սյունիքը և Ուտիքը): Տիգրան Մեծի օրոք Արցախը Արտաշեսյան Հայաստանի կազմում գտնվելու մասին է վիկայում այստեղ Տիգրանակերտ քաղաքի հիմնադրման փաստը (Սեբեոս): Ըստ Ստրաբոնի ևս Օբխիստենան (Արցախը) Հայաստանի նահանգներից էր:

Չույն և հոմեացի այլ հեղինակները նույնպես միանգամայն որոշակի նշում են, որ Արցախը և Ուտիքը, որոնք գտնվում էին Քուռ գետի աջափնյակում, Հայաստանի մասն են կազմում, որի սահմանը հարևան Աղվանական թագավորության հետ հանդիսանում էր Քուռը (Պլինիոս Ավագ, Կլավդիոս Պտղոմեոս, Պլուտարքոս, Դիոն Կասիոս): Արցախի մասին ընդարձակ տեղեկություններ կան վաղ միջնադարի հայ պատմիչների մոտ: Ըստ «Աշխարհացույցի» Արցախը Հայաստանի 10-րդ նահանգն էր և բազկացած էր 12 գավառից:

Արցախը Հայաստանի կազմում մնաց մինչև նրա անկախության կորուստը՝ 428 թ.: V դարի վերջում Արցախի և Ուտիքի հարավում առաջացավ առանձին հայկական Առանշահիկների իշխանությունը: Վաղ միջնադարում Արցախը անվանվում էր նաև Փոքր Սյունիք (Մովսես Խորենացի): X—XIII դդ. Արցախը հիմնականում կոչվում էր Խաչեն՝ համանուն ամրոցի անունով, որը Առանշահիկ իշխանների նստավայրն էր: Այդ դարերում նույնպես Ար-

¹ Արցախի աշխարհագրության, պատմության, էթնիկական կազմի վերաբերյալ ամփոփ շարադրանքը տե՛ս «Нагорный Карабах. Историческая справка». Изд-во АН Арм. ССР, Ер., 1988.

ցախ-Խաչենը Հայաստանի անբաժան մասն էր կազմում՝ պատահական չէ, որ բյուզանդական կայսր Կոնստանդին Միրանածինը Խաչենի իշխանին հասցեագրված նամակը ուղարկում է «Հայաստան»: XIII դ. Խաչենի հայկական իշխանության հզորության ապացույցն է նրա տիրակալ Հասան Զալալի «արքա» կոչումը արձանագրություններում:

Ուշ միջնադարում Արցախը (արդեն ավելի հայտնի «Ղարաբաղ» օտարամուտ անունով), ի տարբերություն Հայաստանի մյուս մարզերի, պահպանեց իր համեմատական անկախությունը հանձինս հինգ իշխանությունների՝ մեքեթությունների (Վարանդաձի, Խաչենի, Գիղակի, Զրաբերդի, Գյուլիստանի): Սակայն հնուց ի վեր հայարնակ այս երկրամասի համար ճակատագրական նշանակություն ունեցավ XVI դ. սկիզբը, երբ Փոքր Ասիայից ու Միջին Ասիայից մահմեդական քուլթր զանգվածները տեղափոխվեցին Արցախ և դարձան առաջնակ: Արցախ—Ղարաբաղը XVII—XVIII դդ. դարձավ հայկական ազատագրական շարժման կենտրոնը: Եվ վերջապես, 1813 թ., ռուս-պարսկական պատերազմից հետո, Արցախ-Ղարաբաղը միացվեց Ռուսաստանին:

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Արցախը, ինչպես և պատմական Հայաստանի առանց բացառության մյուս բոլոր նահանգները, հարուստ է տարբեր դարաշրջանների պատմության և մշակույթի հուշարձաններով: Մի քանի հազարի է հասնում պաշտամունքային, աշխարհիկ, մեմորիալ ճարտարապետական կառույցների թիվը, որոնք թվագրվում են վաղ միջնադարից մինչև XIX դարը: Պեսոք է նկատի ունենալ նաև, որ այժմ պահպանված հուշարձանները հրեմնի գոյություն ունեցողների սոսկ մի մասն են կազմում. օրինակ, միայն V դ. Արցախում հարյուրավոր եկեղեցիներ և տաճարներ են կառուցվել¹, իսկ այժմ դրանցից փաստորեն ոչ մեկը մնել չի հասել:

Արցախի ճարտարապետական հուշարձանները ուսումնասիրության առարկա դարձան արդեն XIX դարում: Հրատարակվեցին, առաջին հերթին, երկրամասի զլխավոր վանքերի արձանագրությունները, պատմական տեղեկությունները նրանց մասին, տրվեց շենքերի նկարագրությունը²: XIX դ. և XX դ. սկզբի պատմագիտական հետազոտությունները նույնպես բավական կարևոր փաստական նյութ են պարունակում արցախյան հուշարձանների մասին³: Արժեքավոր են նաև ուղեգրությունները, ճամփորդական նոթերը, հիշատակարանները⁴: XIX դ. նկարագրական բնույթի տեղեկությունները այսօր արժեքավորվում են նրանով, որ անցած հարյուրամյակում, դժբախտաբար, արցախյան հուշարձանները բնության արհաւիրքներից, ինչպես նաև մարդու ձեռքով բավականին վնասվել են, ոչնչացվել են բազմաթիվ ար-

1 Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Ազվանից աշխարհի, Եր., 1969, էջ 265:
 2 Ա. Զալալյանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տիֆլիս, 1842:
 3 Մ. Կարապետյանց, Ստորագրություն Կաթողիկե էջմիածնի և հինգ զավառացն Ալբարատա, հ. 2, էջմիածին, 1842:
 Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895:
 Ե. Կալայան, Վարանդա, «Աղղաղրական հանդես», Բ գիրք, Թիֆլիս, 1897:
 4 Մ. Բարխուդարյանց, Պատմություն Ազուանից, Ա հատոր, Թիֆլիս, 1901, Բ հատոր, Թիֆլիս, 1907:
 Կ. Կոստանյանց, Հայոց վանքերը, համառոտ տեսություն, Մոսկով, 1886:
 Խաչիկ Դադյան, Նյութեր ուսումնասիրության Ազվանից պատմության, «Արարատ», 1896, № 1:
 Բաֆֆի, Խամայի մելիքությունները, Վիեննա, 1906:
 4 Առ, Իմ հիշատակարանը, Շուշի, 1860:

ձանագրություններ, քանդակներ, խաչքարեր, քանդակված վանական համալիրների շատ շինություններ: Եվ ահա այդ տվյալներն են, որ տպագիր կամ ձեռագիր, (արխիվներում պահվող), իրենք արդեն փաստական նյութի դեր են խաղում: Ժամանակակից պատմական ուսումնասիրություններից պետք է նշել Հ. Ոսկյանի, Բ. Ուլուբաբյանի աշխատությունները⁵, մեծ է Ս. Բարխուդարյանի ծառայությունը Արցախի վիճագրական արձանագրությունների հավաքման գործում⁶:

Սակայն ցավով պետք է նշել, որ արցախյան հուշարձանները, որոնք ինքնին գեղարվեստական տեսակետից քավական արժեքավոր են և ողջ հայ մշակույթի: անբաժան ու կարևոր մի հատվածը, ճարտարապետության հայ մասնագետների կողմից ուսումնասիրության առարկա դարձան միայն վերջերս. մի ուշացում, որը մեծ վնաս հասցրեց հայ արվեստաբանությանը: Արցախի ճարտարապետության մասնագիտական տեսանկյունով առաջին հետազոտողը եղավ հայ արվեստի խոշոր գիտակ Ա. Յակոբսոնի մենագրական հետազոտությունը Գանձասարի վանքի մասին, որը հետագայում վերամշակումներով վերահրատարակվեց հոդվածներով և գրքույկով⁷: Հայ ճարտարապետության գլուխգործոց Գանձասարի վանքը փաստորեն Արցախի ամենալավ ուսումնասիրված հուշարձանախումբն է՝ Ա. Յակոբսոնից հետո այդ համալիրին նվիրված մի շարք այլ մենագրություններ տպվեցին ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում⁸: 1970-ական թվականների կեսերից միայն, փաստորեն, խորհրդային Հայաստանում սկսվեց արցախյան հուշարձանների ճարտարապետության մասնագիտական ուսումնասիրությունը: Առաջին հերթին հրատարակվեցին վանական համալիրները՝ Ամարասը, Դադիվանքը, Խաթրավանքը⁹: Արցախի ճարտարապետական հուշարձանախումբերին

5 Հ. Ոսկյան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953:

Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Եր., 1975:

6 Գիվան հայ վիճագրության, պրակ 5, Ս. Բարխուդարյան, Արցախ, Եր., 1982:

7 А. Л. Якобсон, Гандзасарский монастырь, «Исследования по истории культуры народов Востока (Сборник в честь академика И. А. Орбели)», А. Л. Якобсон, Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.), Вестник общественных наук АН Арм.ССР, 1977, № 12.

А. Л. Якобсон, Гандзасар, Ереван, 1987.

8 Բ. Ուլուբաբյան, Գանձասար, Եր., 1981:

Բ. Ուլուբաբյան, Մ. Հասրաբյան, Գանձասարի վանքը, «Հայկազյան հայագիտական հանդես», հ. 5, Բեյրութ, 1973:

В. Ulubabian, M. Hasratian. Gandzasar, Milano, 1987.

9 Բ. Ուլուբաբյան, Դադի կամ Խուֆա վանք, «Էջմիածին», 1971, Բ—Է: Մ. Հասրաբյան, Ամարասի ճարտարապետական համալիրը, «Լրագրեր», 1975, № 5 Բ. Ուլուբաբյան, Մ. Հասրաբյան, Դադիվանք, «Հայկազյան հայագիտական հանդես», հ. 8, Բեյրութ, 1980:

Բ. Ուլուբաբյան, Մ. Հասրաբյան, Խաղավանք-Խաթրավանք, «Հայկազյան հայագիտական հանդես», հ. 10, Բեյրութ, 1984:

և հուշակոթողներին նվիրվեցին նաև հանրապետական և միջազգային գիտաթո-
ղութները ղեկուցումները: Գիտարշավների ընթացքում հայտնաբերվեցին բու-
րովին անհայտ մի շարք հուշարձաններ, որոնցից Մոխրենիսի վաղ միջնա-
դարին պատկանող եկեղեցին իր հորինվածքով բացառիկ տեղ է զբաղում հայ
ճարտարապետության մեջ¹⁰: Ուսումնասիրվեցին ու հրատարակվեցին ուշ
միջնադարի հուշարձանախմբերը, ինչպես վանական, այնպես էլ աշխար-
հիկ¹¹:

Լեոնային Ղարաբաղի հանրապետության տարածքի պատմա-մշակու-
թային հուշարձանները հրատարակման գործում 1970-ական և 1980-ական
թթ. մեծ աշխատանք է կատարել պատմաբան Շ. Մկրտչյանը, որի հայերեն
և ռուսերեն լեզվով տպագրված և հարուստ պատկերազարդում ունեցող զըր-
քերը պարունակում են մարզի միջնադարյան ճարտարապետական կառույց-
ների մեծ մասի նկարագրությունը և հատակագիծը (Իր, Ա. Ղուլյանի, Մ.
Սարգսյանի և հիմնականում Ս. Կարապետյանի կատարած)¹²:

1985 թ. առաջին անգամ հայ ճարտարապետության պատմությանը նը-
վիրված ընդհանրացնող աշխատանքում (Վ. Հարությունյան) որպես Հայաս-
տանի մշակույթի օրդանական մասը ներկայացվեցին Արցախի միջնադարյան
և ուշ միջնադարի կարևոր հուշարձանախմբերը, մասնագիտական վերլու-
ծություններ և գնահատականով, չափազորությունների բարձրորակ կատարու-
մով աչքի ընկնող գծագրական աղյուսակներով¹³:

1980-ական թթ. Արցախի ճարտարապետության ուսումնասիրություններ
զբաղվեցին նաև արտասահմանյան գիտնականները (Պաոլո Կոնենո, Ադրիա-
նո Ալպագո Նոյելլո, Ժան-Միշել Թիերի և ուրիշներ): 1988 թ. ՀՆՍՀ ԳԱ ար-
վեստի ինստիտուտի և Միլանի պոլիտեխնիկ ինստիտուտի կողմից համատեղ
հրատարակվող մատենաշարով լույս տեսավ Ղարաբաղի ճարտարապետու-
թյանը նվիրված հատորը¹⁴, Փարիզում տպված հայ արվեստին նվիրված մն-
ծածավալ մենագրություն մեջ հեղինակները արժանի տեղ են հատկացրել

10 Շ. Մկրտչյան, Ռ. Արգարյան, Ս. Կարապետյան, Մոխրենիսի «Օխոթ դոնի» վանքը,
«Էջմիածին», 1982, Ժ—ԺԱ:

11 Ա. Ղուլյան, Արցախի պալատական ճարտարապետության երկու հուշարձան, «Լրարեր
հաս. գիտ.», 1982, № 10:

Ս. Կարապետյան, XVII դարի վանական երկու համալիր Արցախում, ՊԲՀ, 1985, № 1:

Ա. Ղուլյան, Ռ. Արգարյան, Արցախի Քաղաքատեղ բերդավանք, ՊԲՀ, 1988, № 1:

12 Շ. Մկրտչյան, Լեոնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները,
Կր., 1980 (նույնը վերամշակված՝ 1985 թ.):

Ս. Мкртчян, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван.
1988.

13 В. Арутюнян, Каменная летопись армянского народа, Ереван, 1985.

14 P. Cuneo, M. A. Lala Comneno, S. Manukian, Gharabagh, Milano, 1988.

J. M. Thierry, P. Donabedian, Les arts arméniens, Paris, 1987.

Գանձասարի ու Գաղիվանքի համալիրներին, իսկ Հոռոմ հրատարակված Պառլո Կունեոյի երկհատոր կոթողային աշխատանքում առանձին բաժնով ներկայացված են Արցախի մինչ այդ գրականության մեջ հայտնի բոլոր հուշարձանները¹⁵:

Փաստական նյութի այսպիսի խոշոր կուտակումը հնարավորություն տրվեց անցնել արցախյան ճարտարապետության հետազոտման հաջորդ փուլին՝ բացահայտելու նրա առանձնահատկությունները որպես ստեղծագործական ինքնուրույն դպրոցի: Մասնագիտական գրականության մեջ առաջին անգամ հայկական միջնադարյան ճարտարապետության Արցախի դպրոցի գոյությունը նշել է Պառլո Կունեոն¹⁶: Հետագա ուսումնասիրությունները հաստատեցին այդ գիտական վարկածը և այժմ Անիի, Սյունիքի, Լոռու, Վասպուրականի ճարտարապետական դպրոցների շարքում իր արժանի տեղն ունի Արցախյանը¹⁷:

* * *

1970-ական թթ. Արցախի հայկական ճարտարապետական հուշարձանները դարձան ադրբեջանական մասնագետների ուշադրության առարկան և: Սակայն նրանց աշխատանքներում պարզորոշ նկատվում է վաղօրոք ծրագրված մի նպատակ՝ «աղվանացնել» (իսկ հեղինակների հասկացողությամբ՝ ադրբեջանացնել) այդ հուշարձանները: Ռ. Գեյուշևի հոդվածը Գանձասարի մասին¹⁸, Գ. Ախունդովի և Մ. Ախունդովի շեկուցումները հանրապետական գիտական կոնֆերանսում և վրացական արվեստին նվիրված միջազգային 4-րդ սիմպոզիումում¹⁹ ունեն միայն մի նպատակ՝ հայ ճարտարապետությունից օտարացնել նրա գլուխգործոցներից մեկը՝ Գանձասարի վանքը: Այդ փորձերի հակագիտական բնույթը համոզիչ բացահայտված է Ա. Յակոբսոնի քննադատական աշխատանքում²⁰: Զեկուցումների և հոդվածների հեղինակ-

¹⁵ P. Cuneo. Architettura Armena dal IV al XIX secolo, Roma, 1968.

¹⁶ P. Cuneo. Le scuole regionali nell'architettura Armena, „Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena-1975“, Venezia, 1978.

¹⁷ М. Асратян, Арцахская школа армянской архитектуры, «IV Международный симпозиум по армянскому искусству. Тезисы докладов», Ереван, 1985.

¹⁸ Р. Геюшев, О конфессионально-этнической принадлежности Гандзасарского монастыря, «Материальная культура Азербайджана», VII, Баку, 1973.

¹⁹ Д. Ахундов, М. Ахундов, Культурная символика и картина мира, запечатленная на храмах и стенах Кавказской Албании «IV Международный симпозиум по грузинскому искусству», Тбилиси, 1983.

²⁰ А. Л. Якобсон, «Гандзасарский монастырь и хачкары: факты и вымыслы», Историко-филологический журнал, Ереван, 1984, № 2.

ներին «...չի մտահոգում ոչ տաճարին ժամանակակից, նրա պատերի վրայի հայերեն բաղմամբով արձանագրությունները, ... ոչ կառուցման ժամանակը՝ XIII դ. առաջին կեսը, երբ Աղվանքը որպես պետական միավորում վաղուց արդեն գոյություն չունի, ոչ էլ տաճարի ու գավթի ձևը՝ զուտ հայկական...»²¹: Նրանք լուսավոր անցնում են նաև այն փաստի կողքով, որ եաշենի բնակչությունը ինչպես հնում, այնպես էլ տաճարի կառուցման ժամանակ, և նաև ավելի ուշ, ժամանակակիցների վկայությամբ, եղև է միայն հայերից բաղկացած²²: Աղջուսթյամբ հայ էր և Գանձասարի վանքի կառուցողը՝ իշխան Հասան Ջալալյանը, ինչի մասին է վկայում տաճարի պատերի արձանագրություններից բացի²³, նաև պատմիչ Կիրակոս Գանձակեցին²⁴: Ինչ վերաբերում է Գանձասարին որպես Աղվանքի կաթողիկոսության կենտրոնի, ապա աղբբեջանցի հեղինակները շրջանցում են այն փաստը, որ Գանձասարի վանքը Աղվանքի կաթողիկոսությունը այստեղ տեղափոխվելուց մոտ երկու դար առաջ է կառուցվել:

Գ. և Մ. Ախունդովները, խոսելով Գանձասարի վանքի դեկորի մասին, ձգտում են «միթրայացնել» կանոնական, համաքրիստոնեական պատկերազրական թեմաները, որոնք հանդիպում են տաճարի և գավթի քանդակներում, ինչպես նաև միջնադարյան հայ արվեստի ինքնատիպ հուշարձաններ խաչքարերի վրա: Այսպիսի փորձերը գիտության հետ ոչ մի կապ չունեն և հարկ չկա կանգ առնել դրանց վրա:

Արցախի հուշարձանների մասին գրում է նաև Ռ. Գեյուշևը իր 1986 թ. տպագրած գրքում²⁵: Այստեղ մենք գործ ունենք մի այլ ակնհայտ միտումի՝ որոշ հուշարձաններ ներկայացնել ավելի հին, քան նրանք թվագրվում են (դա իր կարծիքով կնպաստի նրանց հետագա «աղվանացնելուն»): Օրինակ, Գաղիվանքի հյուսիսային միանավ եկեղեցին, որն ինչպես ճարտարապետական առանձնահատկություններով, հարդարանքով, այնպես էլ արձանագրությամբ պատկանում է XIII դ., գրքում թվագրվում է VI—VII դդ.²⁶: Հեղինակը թվագրման ժամանակ պետք է հաշվի առնի (ի դեպ, նա մասնագիտությամբ ճարտարապետ չէ), որ, առաջին, պատերի հաստուճյան մեջ իրա-

21 А. Л. Якобсон, Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.), с.75.

22 Strabo, XI XIV 5. Мовсес Каланкатуац, История страны Алуанк, Ереван, 1984, с. 39, 94. Киракос Гандзакечи, История Армении, М. 1976, с. 132.

23 И А. Орбели, Надписи Гандзасара и Аваптука, Пгр., 1919.

24 Киракос Гандзакечи, История Армении, Тифлис, 1909, с. 254 (на арм. яз.).

25 Р. Геошоев, Христианство в Кавказской Албании. Баку, 1984.

26 նույն տեղում, էջ 86:

կանացված ավանդատները կարելի է կառուցել միայն եկեղեցու հիմնական ծավալի հետ միասին (Ռ. Գեյուշեին խանգարող XIII դ. արձանագրությունը գտնվում է հյուսիսային ավանդատում, և այդ պատճառով հեղինակը այն համարում է հետագայում կառուցված), և, երկրորդ, արսիդի պատերի զանգվածում տեղագրված այսպիսի ավանդատները երևան են եկել դարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում: Եկեղեցու կառուցողական տեխնիկայի հետագոտությունը նույնպես ցույց է տալիս, որ ավանդատները և շինքի հիմնական ծավալը միաժամանակ են կառուցված: Գրքում կա նաև բացահայտ թյուրիմացություն՝ Ամարասի այժմյան բաղնիքիկան, որն ամբողջովին կառուցվել է 1858 թ., թվագրվում է մերթ IV դ.²⁷, մերթ VII դ. վերջ և VIII դ. սկիզբ²⁸:

Հեղինակի այն փաստարկը, որ Դադիվանքում և Ամարասում պեղումներով գտնվել են IV—VII դդ. խեցեղեն (որի հիման վրա և նա թվագրում է այդ հուշարձանները), կարող է միայն մի բան հաստատել. այդ եկեղեցիները կառուցվել են տվյալ ժամանակաշրջանից ոչ վաղ: Իսկ վաղ միջնադարի մշակութային շերտի վրա շինություններ են կանգնեցվել հետագա բոլոր դարերում, և, ցավոք, նույնիսկ մեր օրերում:

Ազրբեջանի միջնադարյան ճարտարապետությունը նվիրված Գ. Ախունդովի գրքում արդեն կա Արցախի հուշարձանների «աղվանացման», այսինքն ազրբեջանացման «տեսական հիմքը»²⁹: Նա գրում է. «Աղվանների մեծ մասը, որը հարեց մահմեդական կրոնին, հետագայում սկսեց կոչվել ազրբեջանցիներ, իսկ քրիստոնեությունը ընդունածները... աստիճանաբար սկսեցին հայեր կոչվել»³⁰: Եվ, որպես եզրակացություն այս դրույթից, նա ազրբեջանցիներին համարում է Աղվանքի մշակույթի միակ ժառանգներ: Բայց այս անարամաբանական դրույթի առնչությամբ մի բնական հարց է ծագում՝ ինչու՞ մահմեդականությունը ընդունած «աղվանա-ազրբեջանցիները» Աղվանքի (Արցախի) քրիստոնեական եկեղեցիների ու վանքերի «տերերն» են, իսկ քրիստոնյա «աղվանա-հայերը» — ոչ:

Իր գրքում Գ. Ախունդովը նորից «միթրայացնում» է Գանձասարի աստվածաշնչային ու ավետարանական թեմաներով պատկերաքանդակները: Մանրամասն խոսում է և Դադիվանքի մասին: Ծանոթ չլինելով այդ հուշարձանին, Գ. Ախունդովը միանգամայն այլ վանքի՝ Խաթրավանքի եկեղեցու ասիմետրիկ լուծման մասին Բ. Ուլուբարյանի խոսքերը վերագրում է Դադիվանքին³¹, և

27 Նույն տեղում, էջ 83:

28 Նույն տեղում, էջ 89:

29 Д. Ахундов, Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986.

30 Նույն տեղում, էջ 225:

31 Նույն տեղում, էջ 226:

հրատարակելով Գաղիվանքի տաճարի սիմետրիկ հատակագիծը (որը պատկանում է հայկական գմբեթավոր դահլիճների շարքին), տակը գրում է, որ տաճարը ասիմետրիկ է լուծված «հատակագծային լուծման մեջ և հայկական միջնադարյան ոչ մի համալիրում իր անալոգը չունի»³²: Այսպիսի խեղափոխումները գրքում շատ կան: Գ. Ախունդովի աշխատանքի մեթոդի մասին պատկերացում է տալիս հետևյալ փաստը. խոսելով Գաղիվանքի պալատական դահլիճի մասին, նա մի ամբողջ էջ արտապրել է (առանց հեղինակին նշելու) հայ մշակույթի ու արվեստի պրոբլեմներին նվիրված IV հանրապետական կոնֆերանսում իմ ունեցած զեկուցման տպագրված թեզիսներից³³: Գ. Ախունդովը ներկա էր այդ կոնֆերանսին, որտեղ և ծանոթացավ խեղրոտ առարկա այս հուշարձանին և ստացավ կոնֆերանսի նյութերի ժողովածուն: Սակայն նա իր գրքում իմ տեքստի մեջ որոշ փոփոխություններ է մտցրել. եթե ես գրում եմ, որ այս դահլիճը «միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության եզակի հուշարձան է»³⁴, ապա Գ. Ախունդովի մոտ այն «միջնադարյան Աղվանքի աշխարհիկ ճարտարապետության եզակի հուշարձան է»³⁵: Ես գրում եմ, որ դահլիճն «ունի այդ դարաշրջանի հայկական գավիթներին ու ժամատներին բնորոշ հորինվածք», որով և «տարբերվում է խաչվող կամարներով միասնական ծածկով մեզ հասած միջնադարյան հայկական պալատներից»³⁶, իսկ Գ. Ախունդովը բերում է միայն վերջին տողերը՝ տարբերության մասին:

Գ. Ախունդովը Գաղիվանքի որմնանկարները վերագրում է վանքի տաճարը կառուցող իշխանուհի Արզուխաթունին և զրանք հայտարարում է աղվանական: Սակայն նա մոռանում է (կամ շրջանցում է) այն փաստը, որ, ըստ Կիրակոս Գանձակեցու, Արցուխաթունը Հայաստանի հյուսիսում Մահկանաբերդի իշխանության տիրակալ հայ իշխան Սաղուն Արծրունու քույրն էր³⁷:

Գ. Ախունդովի գրքում որպես աղվանական հիշատակված են նաև ինչպես Արցախի, այնպես էլ Սյունիքի հայկական եկեղեցիներ, վանքեր, խաչքար-մահարձաններ. Մոխրենիսը (VI դ.), Ծիծեռնավանքը (V—VI դդ.), Առաջածորը (XIII դ.), Եղիշե առաքյալը (XIII դ.), Ծար գավառի ս. Աստվածածին վանքը (XII դ.) և ուրիշներ³⁸: Սյունիքի հայտնի Ծիծեռնավանքի

³² Նույն տեղում, էջ 226:

³³ М. М. Асратян, Архитектура дворцового зала хаченских князей в Дадиванке. IV Республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Тезисы докладов, Ереван, 1979.

³⁴ Նույն տեղում:

³⁵ Գ. Ախունդով, նշված աշխ., էջ 228:

³⁶ Մ. Հասարյան, նշված աշխ., էջ 165:

³⁷ Կիրակոս Գանձակեցի, նշված աշխ., էջ 203:

³⁸ Գ. Ախունդով, նշված աշխ., էջ 223—224, 228, 230, 234, 246:

եռանալ բազիլիկան (այժմ Աղբբեջանի կաշինի շրջանում) «աղվանացված» է հետևյալ հիմնավորումով. մուլթերի մի գույզը տեղադրված է մուտքերից մեկի դիմաց՝ մի բան, որ իբր թե չի հանդիպում «Հայաստանի և Վրաստանի քրիստոնեական պաշտամունքային ճարտարապետության մեջ»³⁹։ Սակայն Միծեռնավանքի մուլթերը նախնական փայտե ծածկը քարով փոխարինելու վերակառուցման արժույթը է⁴⁰։ Այդ նույն պատճառով Եղվարդի և Երեբունյքի վաղ միջնադարյան հայկական բազիլիկաներում նույնպես մուլթերը դրված են որոշ մուտքերի դիմաց։ Այդպես է նաև Տեկորի տաճարում (V դ.)։ Ի դեպ, Միծեռնավանքի վերանորոգման արձանագրությանը, որը գտնվում էր բազիլիկայի հարավային մուտքի վերևում, մի բանի տարի առաջ պոկեղ-հանել են շարվածքից և այժմ անհետացել է⁴¹։

Եռանկյուղ Աղվանք-Արցախի, ինչպես և Սյունիքի շինարարական և այլ արձանագրությունների մասին, ես չեմ նշում նրանց լեզուն, որովհետև նրանք բոլորն էլ, առանց բացառության, հայերեն են⁴²։

Գ. Ախունդովի գրքում որպես «աղվանական» են ներկայացված Արցախի, նաև Սյունիքի ու Նախիջևանի տարածքում գտնվող խաչքարերը⁴³։ Օրինակ, «աղվանական» են հայտարարված Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ առևտուր անող Զուղայի հայ վաճառականների գերեզմանաքարերը։ Այստեղ, ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են։

Գ. Ախունդովը ստեղծել է և հայկական հուշարձանների «աղբբեջանացման» դպրոց։ Նրա հետևորդները Բաքվում Հանրապետական գիտական կոնֆերանսում (1982 թ.) հանդես եկան զեկոլոցումներով, որոնցում, օրինակ, Գանձասարի XVII դ. վանական շենքերն ու պարիսպները ներկայացված են որպես աղբբեջանական (Ֆ. Մամեդով), կամ Նախիջևանի տարածքի բոլոր հայկական եկեղեցիները հայտարարված են սոսկ «քրիստոնեական» (կարծես ոչ քրիստոնեական եկեղեցիներ էլ են լինում), առանց նրանց ազգային պատկանելությունը նշելու, իսկ նրանց բառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածքը, որը վաղ միջնադարից տարածված էր ողջ քրիստոնեական ճարտարապետության մեջ (հատկապես Բյուզանդիայում, Ռուսաստանում, Վրաստանում), բխեցված է Աղբբեջանի «կրակի տաճարներից» և «աղբբեջանական բնակելի տան տարր այվանից» (Գ. Մամեդով)⁴⁴։ Գաղի

39 Գ. Ախունդով, նշված աշխ., էջ 224։

40 Մոռա Հասարյան, Միծեռնավանք, ՊՐԶ, 1980, № 2։

41 Նույն տեղում, էջ 53։

42 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Ս. Բարխուդարյան, Արցախ։

43 Գ. Ախունդով, նշված աշխ., էջ 236—252։

44 Республиканская научная конференция. «Проблемы развития архитектуры и градостроительства в Азербайджанской ССР». Тезисы докладов, Баку, 1982.

վանքից արևմուտք գտնվող սուրբ Աստվածածին վանքը (XII դ.) ներկայացված է որպես «աղվանական» (Տ. Աբդուլահա), իսկ ինքը՝ Դ. Ախունդովը իր զեկուցման մեջ որպես «աղվանական» է հռչակում ինչպես Լեոնային Ղարաբաղի, այնպես էլ Նախիջևանի բոլոր հայկական զմբեթավոր եկեղեցիները⁴⁵:

Ամփոփելով այս բոլորը, կարելի է հաստատել, որ այսպիսի աշխատանքները ծայրահեղ միտումնավոր են, ուղղակի հակազիտական և Արցախի մշակույթի պատմությունը ներկայացնում են ծուռ հայելիով:

45 Նույն տեղում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Արցախի ճարտարապետությունը վաղ միջնադարից սկսած զարգացել է այն ընդհանուր օրինաչափությունների հիման վրա, որը բնորոշ է եղել ողջ հայկական շինարարական արվեստին: Յավոք, Արցախի տարածքում IV—VII դդ. սակավաթիվ հուշարձաններ են պահպանվել: Այդ հազվագյուտ կառույցների շարքում ամենակարևորը միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական և մշակութային կենտրոն Ամարասի վանքն է, որը պահպանում է պատմական Արցախի Մյուս Հաբանդ գավառում¹ (այժմ Լեռնային Ղարաբաղի հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի տարածքում): Ամարասի վանքի եկեղեցին հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը IV դ. սկզբում²: Բայց, «...ավազակների արշավանքների պատճառով ու եկեղեցու կառուցվածքի խիստ մեծ լինելու հետևանքով ոչ ոք չկարողացավ շինել այնպիսին, որ Մեծ Գրիգորը հիմնադրել էր»³: Սակայն, Ամարասի եկեղեցու նախնական հորինվածքի մասին այլ տեղեկություններ չկան, որ չափազանց արժեքավոր կլինեին հայ ճարտարապետության սկզբնավորման շատ խնդիրների պարզաբանման համար:

Ամարասի հատկապես նշանավոր է դառնում IV դ. կեսերից, երբ այնտեղ թաղում են Գրիգոր Լուսավորչի թոռանը՝ Գրիգորիսին, որը նահատակվել էր Աղվանքում քրիստոնեություն տարածելու ժամանակ⁴: Մինչ այդ Գրիգորիսը շինել և նորոգել էր այդ «կողմերի բոլոր եկեղեցիները, մինչև Ատրրպատականի կողմերի գավառները»⁵:

Գրիգորիսը զոհվել է 338 թ.⁶: Նրան թաղել են Լուսավորչի հիմնադրած եկեղեցու արևելյան կողմում⁷: V դ. սկզբում, ըստ ավանդության, Ամարա-

1 Ս. Տ. Երևմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի»-ի, Եր., 1963, էջ 70:

2 Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Եր., 1968, էջ 75:

3 Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969, էջ 48:

4 Մովսես Խաբենացի, Հայոց պատմություն, Եր., 1940, էջ 175: «Պատմություն Հայոց» արարելու Կիրակոս վարդապետի Գանձակեցվոյ Քիֆիս, 1909, էջ 183:

5 Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, էջ 73:

6 Մաղափա արևելախոսույցու Օրմանյան, Աղգապատում, հ. Ա, Բեյրութ, 1959, էջ 139:

7 Մովսես Կաղանկատվացի, էջ 48:

սում Մենսոպ Մաշտոցը հիմնում է առաջին դպրոցը, միաժամանակ վերականգնում է քրիստոնեական հավատը Արցախ-Ուտիքում⁸: Նույն դարի վերջում, Առանշահի վաչագան Գ (Բարեպաշտ) թաղավորը գտնում է Գրիգորիսի գերեզմանի արդեն մոռացված տեղը և «հրամայում է գերեզմանի վրա մատուռ հիմնել, շտապ ավարտել ու անվանել Սուրբ Գրիգորիսի մատուռ»⁹։ Հավանաբար այդ ժամանակաշրջանում Ամարասի եկեղեցին արդեն ավերված է եղել կամ խարխուլ, որովհետև «...շուտափուլից կերպով ու երկուդով գլուխ բերին սուրբ եկեղեցու կառուցումը»¹⁰: Վաչագանը Գրիգորիսի մատուռները հայտնաբերել, հետևաբար մատուռն ու եկեղեցին կառուցել է 489 թ.¹¹: Ահա այդ մատուռն է, որ մինչև այսօր, համարյա նույնությամբ, պահպանվել է Ամարասի վանքի եկեղեցու բնի տակ: Սակայն V դ. վերջում Գրիգորիսի դամբարանը գտնվել է եկեղեցու կողքին: Հետագայում է, որ եկեղեցու բազմաթիվ վերակառուցումների ընթացքում, եկեղեցին կառուցվել է անմիջապես մատուռ-դամբարանի վրա:

Սկսած V դ. Ամարասը եղել է երկրամասի խոշոր կրոնական կենտրոններից մեկը և եպիսկոպոսանիստ բնակավայր: 821 թ. Ամարասը, ողջ գավառի հետ մեկտեղ, ասպատակվել է Պարտավի արաբների կողմից¹², XIII դ. աջն կողգատել են մոնղոլական հրոսակները, իսկ 1387 թ. Անկիթեմուրի արշավանքների ժամանակ խիստ ավերվել է¹³: Բայց վանքը, իր անընդմեջ դբրծող դպրոցով, շարունակել է մնալ որպես կրոնական և մշակութային կենտրոն: XV—XVI դդ. այնտեղ ծանր պայմաններում բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր են գրվել¹⁴: Եվ, հավանաբար, հենց այդ ժամանակաշրջանում էլ, շատ վանքերի հետ մեկտեղ, ավերվել է նաև Ամարասը, որովհետև արդեն XVII դ. այն հիմնովին վերակառուցվում է: Գանձասարի Պետրոս կաթողիկոսը XVII դ. երրորդ քառորդում նորոգում է վարանգայի եպիսկոպոսական կենտրոն Ամարասը և վերջինիս հոգևորականների համար ամառանոց ծառայող Հերհեր գյուղում կառուցում Գրիգորիսի անվամբ նոր եկեղեցի¹⁵: Այս եկեղեցու հարավային դռան ճակատի արձանագրության մեջ սրբշակի նշվում է. «Շնորհօքն Քրիստոսի ևս Բարսեղ եպիսկոպոս աշա-

A II 83254

8 Նույն տեղում, էջ 70:

9 Նույն տեղում, էջ 60:

10 Նույն տեղում, էջ 59:


11 Մ. Օրմանյան, Նշվ. աշխ., էջ 516:

12 Մովսես Կաղանկատվացի, էջ 255:

13 Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանց, Պատմություն Աղվանից, հ. Ա, Քիֆլիս, 1901, էջ 170—174:

14 Լ. Ա. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ, Եր., 1967, էջ 459—460:

15 Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաբու, 1895, էջ 104:



կերտ Պետրոս կաթողիկոսին և ծնողան իմ Աղայն և Գիւլաղայն ի գաւառնն Վարանդու, ի գեղջէ Գիշուն նորոգեալ պայծառացուցի զսուրբ աթոռս Ամարասայ, պարսպոք շրջապատեցաք հանդերձ յոգնաթիւ սենեկոք, զեկեղեցիս շքեղեցուցաք զարդուք, տուաք լինել զեկեղեցիս անուամբ սրբոյն Գրիգորիսի հովարան սուրբ աթոռոյն Ամարասայ, որ և մասն բերեալ ի նմանն ամփոփեցաք աստ, հիմնարկեցաւ ՌՃԺԶ (1667) թվին, կատարեցաւ ՌՃԻԵ (1676)-ին»¹⁶:

XIX դ. երկրորդ քառորդում, Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո, Ամարասի վանքի համալիրը, որն ուներ բավական ուժեղ պաշտպանական կառուցվածքներ, օգտագործվել է որպես սահմանամերձ ամրոց, իսկ 1832—1847 թթ. եղել է ռուս-պարսկական սահմանի մաքսատունը¹⁷:

Սակայն, արդեն XIX դ. կեսերին Ամարասն ամայանում է: Այդ ժամանակաշրջանում Ամարաս եկած Սարգիս Զալալյանցը ցավով նշում է առաջին այցելութունից հետո վանքում տեղի ունեցած փոփոխությունները. «Յառաջին տեսութեան իմում վանքն Ամարաս էր ի շինութեան, ըստ որում ի սենեակս նորին զտեղեղալ կայր արքունի մաքսատունն, և գոյն վարդապետ ոմն՝ որ սպասավորեր դամբարանի սրբոյն Գրիգորիսի, իսկ այժմ հեռացեալ է անտի որպես մաքսատուն նոյնպես և վարդապետն. և վանքն Ամարասայ մնացեալ է յաւերակ դրութեան»¹⁸: Հավանաբար վնասված է եղել վանքի եկեղեցին, որովհետեւ պարիսպները և քաղաքացիական շենքերը հասել են մինչև մեր օրերը առանց էական նորոգումների, իսկ եկեղեցին Զալալյանցի այցելութունից շատ շանցած հիմնովին վերակառուցվում է: Փաստորեն դա հնի տեղում նոր եկեղեցու կառուցում էր, որովհետեւ, ինչպես քիչ հետո կտեսնենք, ամբողջապես փոխվում է նաև հորինվածքը: Մինչև այդ՝ 1848 թ. Ամարասի վանքը ցարական իշխանութունից ետ է վերցնում Գանձասարի մետրոպոլիտ Տեր Բաղդասարը¹⁹:

Եկեղեցին կառուցվում է 1858 թ.՝ շուշեցիների նյութական օժանդակութլամբ²⁰, իսկ նրա հյուսիսային նավում տեղադրված Գրիգորիսի տապանաքարը պատրաստել է շուշեցի ճարտարապետ Միրալի Տեր-Իսրայիլյանցը 1898 թ.²¹: XIX դ. վերջում վանքն ուներ կավվածքներ՝ վարելահողեր, այգի,

16 Նույն տեղում, էջ 105:


17 Ս. Եփրեկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903—1905, էջ 136:

18 Ս. Զալալյանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ. Տիդիս, 1858, էջ 336:

19 Ս. Եփրեկյան, Նշված աշխ., էջ 136:

20 Նույն տեղում:

21 Ե. Լալայան, վարանդա, «Ազգագրական հանդես» Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 38:



1. Ամարաս: Եկեղեցու և Գրիգորիսի դամբարանի ընդլայնական կտրվածքը

ջրաղաց²²: Վանքից հարավ, Ամարաս գետակի աջ ափի համեմատաբար բարձր լանջին նկատվում են շինությունների հետքեր, հանդիպում են կավե խողովակներ, գերեզմանաքարեր: Ենթադրվում է, որ դրանք Ամարաս գյուղաքաղաքի ավերակներն են²³:

Ամարասի վանքի համալիրում հայ արվեստի ու ճարտարապետության պատմության համար ամենաարժեքավորը և հետաքրքրականը Գրիգորիսի դամբարանն է: Այն եկեղեցու բեմի տակ կառուցված, միանավ, թաղածածկ փոքր դահլիճ է, որն այժմ մուտք ունի աղոթասրահի հարավ-արևելյան ան-

²² Նույն տեղում:

²³ Մ. Բաբխուրյանց, Արցախ, էջ 115:

կյունից՝ ավանդատան դռան առջևից: Այստեղից վեց աստիճան ցած դամբարանի նախամուտքն է, ուր բացվում է թաղածածկ, արևմուտքից արևելք ձգված թունելանման տաբաժություն (3 մ երկարությամբ), որի մեջ, իր հերթին, կան քարե յոթ աստիճաններ: Նախամուտքի թաղն ունի արտակարգ շեշտված, պայտածե կտրվածք: Թե՛ թաղը, և թե՛ պատերը (ինչպես և ողջ դամբարանը) շարված են մոտակա հազար լեռան մաքուր տաշած քարերից: Նախամուտքի արևելյան ճակատն ունի երեսակալով լուսամուտածե խորշ, իսկ բացվածքի պայտածե վերջավորության շուրջը փորագրված է հնգաշերտ գոտի, որը երկու կողմերից հորիզոնական ձգվում է մինչև ընդերկայնական պատերին հասնելը: Խորշի երկու կողմերում քանդակված են մեկական արմավենի: Հարավային կողմի արմավենին լավ է պահպանվել: Այն բավականին ոճավորված է, ճյուղերը քանդակված են նշտարածե տերևների նման, բնի երկու կողմերում կան անհամաչափ խոշոր կլոր պտուղներ: Նման ոճավորված քանդակներ բնորոշ են Հայաստանի IV—V դդ. ճարտարակետական հուշարձաններին (Քասաղի բազիլիկա, Տեկորի տաճար): Խորշի հյուսիսային կողմի արմավենու վերին մասը չի պահպանվել (քարը ջարդված է), սակայն ստորին մասից երևում է, որ այն իր ձևով առաջին արմավենու կրկնությունն է: Նախամուտքի պատերի պարագծով, թաղի հիմքի բարձրությամբ, ձգվում է միևնույն երկրաչափական զարդաքանդակի կրկնությամբ փորագրված քանդակազարդ գոտի: Զարդաքանդակը ուղղանկյուն է, «ոսկե հատման» համաչափություններով (8×13 սմ), որը անկյունագծերով և խաչածե կողմերով բաժանվում է ութ հավասար եռանկյունիների: Հետաքրքրական է, որ այս երկրաչափական զարդաքանդակը վաղ միջնադարի հայ ճարտարապետության մեջ հանդիպում է հատկապես V դ. հուշարձաններում: Միևնույն քանդակն է օգտագործված Փարբիի Ծիրանավոր միանավ եկեղեցու (V դ.) աբսիդի խոչակների վերին մասում, Ամարասի դամբարանի հետ համարյա միաժամանակ կառուցված Տեկորի ս. Սարգիս գմբեթավոր բազիլիկայի (478—490) հյուսիսային ճակատի որմնասյան խաբիսի վրա, ինչպես նաև Արցախի ու Սյունիքի սահմանում գտնվող Ծիծեռնավանքի (IV դ., վերակառուցված V դ.) մուրթերի վրա:

Նախամուտքից դուռ է բացվում դեպի դամբարանի թաղման խույր: Դռան ուղղանկյուն բացվածքի մեջ, պատի հաստության հաշվին արված են երեք աստիճաններ, որոնք իջնում են մինչև դամբարանի հատակը: Դամբարանի հատակագիծը ուղղանկյուն է, արևելքից-արևմուտք ձգված (1,90×3,75, բարձրությունը՝ 3,5 մ): Պատերը և պայտածե կտրվածքով թաղը կառուցված են մաքուր տաշած բազալտից: Հարավային դռան դիմաց, հյուսիսային պատի արևելյան ծայրում կա մի այլ դուռ, որը տանում է դեպի

դամբարանի երկրորդ մուտքը: Սա իր ձևերով և շափերով առաջինի կրկնությունն է և լուծված է նրան սիմետրիկ: Սակայն վերջին վերակառուցման ժամանակ այս մուտքը փակվել է և կիսով չափ հողով լցվել: Ուսումնասիրության համար մատչելի են միայն նախամուտքի արևելյան պատը՝ բարձրության կիսով չափ, նրա առջևի ուղղանկյուն հարթակը և զեպի վեր տանող հինգ աստիճանները: Այստեղ ևս արևելյան պատի վրա կա նույն պարակալով պսակված, պայտածև կամարով խորշ: Խորշից վերև լցված է հողով, սակայն անկասկած է, որ հյուսիսային նախամուտքը և՛ ձևերով, և՛ հարդարանքով եղել է հարավայինի կրկնությունը:

Դամբարանի հյուսիսային մուտքը հավանաբար փակվել է մինչև Ամարասի եկեղեցու XIX դ. վերակառուցումը, որովհետև զբանից հետո այցելողները նրա առկայության մասին չեն հիշատակում²⁴: Ինչ վերաբերում է այդ երկու մուտքերի նախնական ձևերին՝ երկարությունը և աստիճանների քանակին, ապա պարզվում է, որ սկզբնական հորինվածքի նախամուտքերն ունեցել են ընդամենը հինգ աստիճան (զույգ միջի աստիճաններով՝ ութը): Դա առաջին հերթին հաստատվում է նախամուտքի զարդադուռու և ծածկի թաղի երկարությունը, որոնք շարունակվում են մինչև հինգերորդ աստիճանը, ապա հայտնի է դառնում նաև Զալայանի վկայությունից, որը նշում է, թե զեպի դամբարան «...ը (8) աստիճան պարտ է իջանել»²⁵: Իսկ XIX դ. վերջին այցելուները հիշատակում են արդեն 18 աստիճանի առկայությունը²⁶, որը պայմանավորված է վերակառուցման ժամանակ եկեղեցու հատակի նիշի զգալի բարձրացմամբ: Այն փաստը, որ դամբարանը իր նախնական հորինվածքով ոչ թե լրիվ գետնափոր է եղել, այլ կիսով չափ բարձր է գտնվել զետեից, ապացուցվում է թաղման խցի արևմտյան պատի լուսամուտի առկայությամբ, որն ունի 0,9 մ բարձրություն (ծածկի թաղից ցածր է տեղադրված 0,3 մ), ավարտվում է պայտածև կամարով, և IV—V դդ. հայ ճարտարապետական այլ հուշարձանների նման զեպի դուրս համարյա չի լայնանում: Լուսամուտի երեսակալը նույնն է, ինչ նախամուտքի խորշինը: Ահա այս լուսամուտի բարձրությունը ցույց է տալիս, որ Ամարասի դամբարանի ծավալը սկզբնական շրջանում նվազագույնը 1,5—2,0 մ բարձր է եղել զետեից (գումարված է նաև ծածկի հաստությունը):

Դամբարանը արևելյան կողմում ավարտվում է պայտածև կամարով ծածկված նեղ և երկար խորշով ($0,96 \times 1,28$ մ), որի կամարը նստում է պարզ տրամագծով իմպոստների վրա (սալիկ, կորագիծ վերջավորությամբ): Խորշը արևելքից փակված է անմշակ քարի և խճի շարվածքով, սակայն

24 Ե. Լալայան, Վարանդա, էջ 38:

25 Ս. Զալայանց, եջված աշխ., էջ 196:

26 Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 113, Ե. Լալայան, Վարանդա, էջ 38:

պարզ երևում է, որ այն շարունակվում է կրթաբնույթի զանգվածից այն կողմ՝ ևս: Այդ շարվածքը տեղադրությունը համընկնում է եկեղեցու արևելյան պատի հիմքի հետ: Հետևաբար, դամբարանը ելք է ունեցել և արևելքից, որը նշում են նաև Մ. Բարխուդարյանը և Ե. Լալայանը²⁷: 1961 թ. եկեղեցու արևելյան ճակատի հիմքերը դրսից պեղելիս (Լ. Ազարյան, Ա. Ավետիսյան) այդտեղ հայտնաբերվել են դեպի դամբարան տանող աստիճաններ:

Խորշը՝ հետևաբար և դամբարանի արևելյան մուտքը փակվել են XIX դ., այժմյան եկեղեցին կառուցելիս: Սակայն պարզ չէ, թե այդ մուտքը եղե՞ն է դամբարանի սկզբնական հորինվածքում: Խորշի երկայնական պատերի շարվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախնական են (այսինքն V դ. կառուցված) միայն նրանց մի մասը՝ 0,8 մ երկարությունը: Այս հատվածը կառուցված է նույն քարից և շինարարական նույն տեխնիկայով, ինչպիսին է ողջ դամբարանը: 0,8 մ երկարությամբ ձգվում են նաև խորշի կամարի իմպոստները, իսկ շարունակությունը, պարզ երևում է, որ հետագայում է ավելացված: Պետք է ենթադրել, որ այն ավելացվել, հետևաբար և դամբարանի արևելյան մուտքը բացվել է Ամարասի վանքի եկեղեցու XVII դ. հիմնովին վերակառուցման ժամանակ, երբ այն ստացել է քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածք: Իսկ Ամարասի դամբարանի իր արևելյան խորշով ունի նույն հորինվածքը, ինչպիսիք ունեն Գայանեհինը՝ էջմիածնում, Մաշտոցինը՝ Օշականում:

Հորինվածի և Գայանե նահատակ կույսերի վկայարաններով դամբարանները կառուցել են Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ 2-րդը, IV դարի սկզբերին²⁸: Սակայն նույն դարում դրանք հիմնովին ավերվել են պարսից Շապուհ արքայի արշավանքների ժամանակ²⁹, որից հետո Սահակ կաթողիկոսը (387—439) վերակառուցել է այդ վկայարանները³⁰: 618 թ. Կոմիտաս կաթողիկոսը բանդել է Հորինվածի դամբարանի վրայի մատուռը և կառուցել ներկայիս տաճարը³¹, իսկ Գայանեի վկայարանի տեղում 630 թ. Եզր կաթողիկոսը կառուցել է քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածքով, այժմ կանգուն եկեղեցին: Վերջինիս բնի տակ պահպանվել է Սահակի կառուցած վկայարանի ստորին մասը՝ ուղղանկյուն, թաղսծածկ դամբարանը, որը մուտք ունի եկեղեցու հարավային ավանդատնից:

Հայաստանի V դ. դամբարաններից, Ամարասի հետ ունեցած իր նմանություններով, առանձնապես հետաքրքիր է Մեսրոպ Մաշտոցի դամբարանը Օշա-


²⁷ նույն տեղում:

²⁸ «Ազաթանդեղայ Պատմություն», Թիֆլիս, 1883, էջ 440—446:

²⁹ «Տիեզերական պատմություն Ստեփանոս վարդապետի Տարօնեցու», Փարիզ, 1895, էջ 76:

³⁰ նույն տեղում:

³¹ «Պատմություն Սերեոսի եպիսկոպոսի», Թիֆլիս, 1913, էջ 141:



2. Ամրառա: Գրիգորիսի դամբարանի (489 թ.) հատակագիծը, կտրվածքները, մանրամասները

կանում: Այն կառուցվել է 442/43 թթ., Մաշտոցի մահվանից երեք տարի հետո. «...երեք տարի անցնելուց հետո՝ վահան Ամատունուն հաջողվեց... սքանչելի տաճար կառուցել տաշած, քանդակած քարերով և տաճարի ներսից շինեց Մբբի գերեզմանը»³²: Օշականի տաճարը բազմիցս վերակառուցվել է, որի հետևանքով էր նախնական հորինվածքը չի պահպանվել: Ներկայիս եկեղեցին կառուցել է Գևորգ կաթողիկոսը՝ 1875 թ.³³: Սակայն եկեղեցու բնմի տակ պահպանվել է Մաշտոցի դամբարանը, որի մուտքը այժմ հարավային ավանդատնից է: Դամբարանն արևելքից արևմուտք ձգված ուղղանկյուն (2,7×4,0 մ) թաղածածկ խուց է, և Ամարասի նման, արևելքում ավարտվում է ուղղանկյուն խորշով: Արևմտյան կողմում պահպանվել է համեմատաբար լայն բացվածք, որը նախկինում դուռ կամ լուսամուտ է եղել (հետևաբար դամբարանը կիսազետնափոր է եղել): Դամբարանը բազմիցս վերանորոգվել է (վերջին անգամ 1960-ական թթ. սկզբին), որոնց բնթացքում փոխվել է երեսապատումը: Սակայն հորինվածքը և հիմնական չափերը մնացել են նույնը: Չափազրույթունից (որը կատարվել է մինչև դամբարանի վերջին նորոգումը) պարզվում է, որ այն երկրորդ մուտք է ունեցել նաև հյուսիսային կողմից (այժմ վերածվել է դեպի հյուսիսային ավանդատունը բացվող լուսամուտի): Ինչպես տեսնում ենք, թե՛ Ամարասի, և թե՛ Օշականի V դ. դամբարանները ունեն նույն հորինվածքը՝ ուղղանկյուն թաղածածկ սրահ, արևելքում խորշ, արևմուտքում՝ բացվածք, հյուսիսային և հարավային պատերում՝ սիմետրիկ տեղադրված զույգ մուտքերը, ընդ որում երկու դամբարաններն էլ կիսազետնափոր են:

Հայաստանի վաղ միջնադարի մեմորիալ հուշարձանները քննելիս հետազոտողները նշում են այն ընդհանրությունը, որ կա նրանց և սիրիական նույնատիպ կառուցվածքների միջև:

Սակայն վաղ միջնադարի հայկական դամբարաններն իրենց առանձնահատկություններով ավելի շատ տարբերվում են սիրիականներից, քան նմանվում: Այսպես, Հայաստանի դամբարանները, ի տարբերություն սիրիականների, կիսազետնափոր են, կողմնորոշված արևելք-արևմուտք ուղղությամբ, և, ամենակարևորը, արևելքում ունեն կանոնավոր աբսիդ, որով նմանվում են մատուռներին: IV դ. վերջում և V դ. դամբարանների ճարտարապետությունը Հայաստանում դառնում է միանգամայն ինքնատիպ և սիրիականից տարբեր: Հռիփսիմեի, Գայանեի, Մաշտոցի, Գրիգորիսի դամբարանները թաղածածկ սրահներ են, առանց կողային խորշերի, ընդ որում Օշականում և Ամարասում դրանք ունեն միանման և մյուս դամբարաններից տարբեր հա-

32 Կորյուն, վարք Մաշտոցի, Եր., 1941, էջ 95:

33 Թ. Թումանյան, ՆյուՍեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Եր., 1948, էջ 143:

տակագծային լուծում՝ արևելյան կողմում ուղղանկյուն խորշով և մուտքերով՝ հյուսիսային և հարավային ընդերկայնական պատերում:

Հայաստանի վաղ միջնադարի դամբարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս երկրում մեմորիալ կառուցվածքների այս տիպի բավական տարածված լինելը, նրա տեղական ակունքները, բազմազան ձևերի հետ միաժամանակ և այն ընդհանրությունը, որ կա նրանց հորինվածքներում: Հայ ճարտարապետության IV—VI դդ. հետաքրքրական և արժեքավոր ստեղծագործությունների ինքնատիպության, նրանց ձևերի դարգացման էվոլյուցիայի բացահայտման գործում կարևոր դեր և նշանակություն ունի Ամարասի Գրիգորիսի դամբարանը, որպես այս տիպի որոշակի թվագրված և ամենալավ պահպանված հուշարձան:

* * *


Արցախի վաղ քրիստոնեական մյուս կարևոր հուշարձանը Մոխրենիսի «Օխտ դռնի վանք» կոչվող եկեղեցին է (VI դ.): Այն գտնվում է Գտիշ բերդի մոտ, պատմական Արցախի Սիսականի Ոստան կամ Մյուս Հաբանդ կոչվող գավառում, որը VI դ. մտավ Սյունյաց իշխանության կազմը³⁴: Եկեղեցին տեղադրված է Յուդուսեն լեռան անտառապատ գագաթին, ԼՂՀ Հաղրութի շրջանի Մոխրենիս գյուղից հյուսիս-արևմուտք: Գծվարամատչելի տեղանքն է պատճառը, որ մինչև վերջերս այս հանգուցային հուշարձանը մնացել էր անձանոթ գիտական աշխարհին³⁵:

Մոխրենիսի եկեղեցին կառուցված է կոպիտ տաշված բազալտի քարերից, կրաշաղախով: Ուշագրավ է պատերի շարվածքի եղանակը՝ խոշոր քարերից շարքերը մեկընդմեջ փոխարինվում են կրկնակի փոքր քարերի շարքերով, որոնք մշակված են զուգահեռանիստի ձևով և հիշեցնում են պլինթեներ (հատկապես կամարների քարերը): Սակայն ընդհանուր առմամբ հուշարձանում կիրառված է «միդիս» շարվածքի համակարգը, որը ընդունված է հայկական շինարարական տեխնիկայում մեր թվարկության առաջին դարերից մինչև մեր օրերը:

Մոխրենիսի եկեղեցին հատակագծի ձևով քառախորան կառույց է, լրացված անկյունային խորշերով, որոնք բացվում են դեպի գմբեթատակ տարածությունը բարձր կամարներով: Գրսից խորանները համարյա կիսաշրջանաձև են, իսկ անկյունային խորշերը արտահայտվում են միայն թեթևակի կորուսյուն ունեցող մակերեսներով, որովհետև նրանց արտաքին պատերը ունեն բավական մեծ հաստություն՝ 1,35 մ, մինչդեռ խորանների պատերը համե-

³⁴ Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Եր., 1969, էջ 70:

³⁵ Առաջին հրապարակումն է՝ Շ. Մկրտչյան, Ռ. Արգաշյան, Ս. Կարապետյան, Մոխրենիսի «Օխտ դռնի» վանքը, էջմիածին, 1982, ԺԱ—ԺԲ, էջ 46—50:



3. Մոխրենիս: «Օխտ դռնի վանք» եկեղեցու (VI դ.) հատակագիծը

մատարար նեղ են (օրինակ, արևմտյան խորանում պատի հաստությունը ընդամենը 1 մ է):

Ամբողջությամբ վերցրած հուշարձանի հատակագծային հորինվածքը կանոնավոր վարդյակ է կազմում: Մոխրենիսում շենքի արտաքին զանգվածները հարադատ են ներքին կազմությանը, օրգանապես բխում են նրանից:

Հուշարձանը կիսավեր է՝ պահպանվել են հյուսիսային խորանը մինչև կամարի վերը, հարավայինը և արևելյանը պատերի կիսով չափ, իսկ արևմրտյանը (որակզ գտնվում է միակ մուտքը) մինչև դռան բարավորի վերը: Մուտքի ուղղանկյուն բացվածքը (2,05 լայնությամբ) ծածկված է քարե սալով: Լուսամուտաներից պահպանվել է միայն մեկը՝ հյուսիսային խորանում: Այն բավական բարձր է տեղադրված և նույնպես ունի հորիզոնական բարա-

վոր: Լուսամուտի ծածկի այս ձևը բացառիկ է վաղ միջնադարյան հայ ճարտարապետության մեջ, սակայն միանգամայն բնական Մոխրենիսի եկեղեցու կառուցողական տեխնիկայի ղեկավարում:

Եկեղեցու պահպանված միակ հարդարանքի տարրը գմբեթարդները կամարների իմպոստներն են: Ութ իմպոստից վեցը ունեն պարզ ձև՝ դա կորագիծ մակերևույթով և սալիկով ավարտվող քար է: Այսպիսի իմպոստները բնորոշ են Հայաստանի IV—VII դդ. հուշարձաններին³⁶: Մոխրենիսի ավագ՝ արևելյան խորանի կամարների իմպոստները իրենց դեկորատիվ հարուստ մշակումով փաստորեն խոյակներ են: Նրանք բարձր տրամատ ունեն՝ սալկից և կոր մակերևույթից ներքև ատամիկների և ուղունքների շարքերն են: Այս տարրերի զուգահեցումով Մոխրենիսի եկեղեցու խոյակները հիշեցնում են Եղվարդի բաղիլիկայի (V—VI դդ.) հարավային մուտքի ձևավորումը (միայն այստեղ ատամիկների և ուղունքների շարքերի միջև կա կիսազլանիկի գոտի): Մոխրենիսի խոյակները ուղիղ անկյան տակ թեքված են դեպի ավագ խորանը, իսկ անկյունային խորշերի իմպոստները սահուն անցումով ձուլվում են խորշերի պատերին: Խոյակները միակ տարրերն են, որով ավագ խորանն առանձնանում է մյուս խորաններից: Միաժամանակ ավագ խորանի հատակը բարձր է գմբեթատակ տարածությունից. մի հատկանիշ, որ հատուկ է Հայաստանի հնագույն եկեղեցիներին: Բոլոր շորս խորաններն էլ ուղղանկյուն հատված չունեն, որը հանդիպում է նույնատիպ համարյա բոլոր հուշարձաններում: Մոխրենիսում գմբեթակիր հենարանները՝ խորանների պատերի եզրերը ունեն կիսակլոր ձև (այսպես են լուծված նաև նիստոմիդայի տաճարի խորանների անկյունները):

Վաղ միջնադարյան հայ ճարտարապետություն. համար բացառիկ են Մոխրենիսի եկեղեցու խորանների հատակագծի ձևը և գմբեթարդի կամարների ուրվագիծը: Եթե նույն դարաշրջանի հուշարձաններում դրանք կիսաշրջանաձև են կամ պայտաձև, ապա Մոխրենիսում թե՛ խորանները հատակագծում և թե՛ գմբեթարդների կամարները ունեն օմեգա տառի ձևը:

Անկյունային խորշերը նույնպես ծածկվում են գմբեթարդներով, նրանց կամարները թեթևակի պայտաձև են և հենվում են խորանների կամարների իմպոստների վրա: Անկյունային խորշերի բացվածքները դեպի եկեղեցու կենտրոնական տարածությունը ունեն 0,85 մ լայնություն, որը միանգամայն բավարար է այդ խորշերը միջանկյալ անցման ձևափոխելու՝ ավանդատներ ավելացնելու ղեկավարում:

Եկեղեցու հյուսիս-արևելյան մասում պահպանվել է անկյունային խորշերի կամարների վերևի շարվածքը. այստեղ պատը խորշի կամարի հետ նույն հարթության մեջ է գտնվում: Գմբեթատակ ութանկյունից անցումը

³⁶ Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван. 1961, с. 150.

ղեպի գլանաձև թմբուկը Մոխրենիսում, ըստ երևույթին, իրականացված է: հղել կեղծ առագաստի միջոցով. ուղղաձիգ ու հորիզոնական ուղղությամբ քարերի աստիճանական շեղումով ստացել են կրկնակի կորուսյան մակերևույթ: Անցման այսպիսի եղանակը շարվածքի տվյալ տեխնիկայի ղեկարում (կոպիտ տաշված, աղյուսաձև քարեր) ամենահարմարն է: Եկեղեցու ներսը սվաղված է եղել՝ տեղ-տեղ պահպանվել են սվաղի հետքերը:

Գմբեթի ձևը հայտնի չէ: Ութ հենարանով, անկյունագծերի ուղղությամբ փոքրացված թռիչքներով գմբեթատակ տարածությունը, պետք է ենթադրել, ծածկված է եղել արտաբուստ ութանիստ թմբուկով գմբեթով (տրամագիծը 4,6 մ):

Հուշարձանի անվան մեջ «վանք» բառի առկայությունը խոսում է այն մասին, որ հնում այստեղ միաբանություն է եղել: Եվ իրոք, «Օխտ դռնի վանք» եկեղեցուց հյուսիս-արևմուտք գտնվում են միանալով բազիլիկայի ավերակներ: Պահպանվել է բեմի խորանը և հյուսիսային պատը մուտքով, որն ունի Հայաստանի վաղ միջնադարի հուշարձաններին բնորոշ լուսնեռ: Միանալով բազիլիկայում կիրառված շինարարական տեխնիկան և բաբբ նույնն են, ինչ և քառախորան եկեղեցուներ: Վանական այլ կառույցներից ոչինչ չի մնացել: Եկեղեցիներից ղեպի հարավ-արևմուտք գտնվում է 1044 թ. մի խաչքար, «Կանդիլ միաբանի» մահարձանը, մի այլ խաչքար, անթվագիր, նվիրված ոմն Աշոտի, դրված է քառախորան եկեղեցու ներսում: Հարավ-արևելքում գտնվող վանական գերեզմանատանը պահպանվել է խաչքարի բեկոր՝ 997 թվականով:

Մոխրենիսի «Օխտ դռնի վանք» եկեղեցին շունի վերակառուցման հետքեր: Այն անփոփոխ պահպանել է ինչպես իր սկզբնական հորինվածքը, այնպես էլ կոնստրուկցիաները և առանձին հանգույցները: Դրա շնորհիվ հուշարձանը բավական կարևոր է Հայաստանում անկյունային խորշերով քառախորան տիպի ձևավորման և զարգացման պատմության համար³⁷:

Արցախի տարածքում կանգուն մյուս վաղ միջնադարյան հուշարձանը Վանքասարի եկեղեցին է (VII դ.), որը գտնվում է համանուն լեռան գագաթին, Մարտակերտից Ստեփանակերտ տանող խճուղու մոտ: Այն պատկանում է փոքր խաչաձև գմբեթավոր եկեղեցիների եռախորան ենթատիպին³⁸: Պատերին կան հայերեն կղծված արձանագրություն և շինարար վարպետների նշաններ՝ հայկական այբուբենի Ա, Գ, Ե, է, Զ, Ը, Թ, Ո, Փ, Գ

37 М. М. Асратян, Новооткрытая церковь Мохрениса и генезис памятников типа тетраконых с угловыми нишами. V Международный симпозиум по армянскому искусству. Тезисы докладов, Ереван, 1985, с. 35—38.

38 Վ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Եր., 1982, էջ 26—27:

տառերի ու երկրաչափական պատկերների ձևով: Հուշարձանի առաջին ուսումնասիրող և հրատարակող Ջ. Յամպուլսկին նշում է, որ այդ տառերը և նշանները համընկնում են Սիսիանի ս. Հովհաննես եկեղեցու (VII դ.) վարպետների նշանների հետ³⁹: Պետք է կարծել, որ շինարարների նույն խումբն է կառուցել այս երկու հուշարձանը:

Արցախի տարածքում վաղ միջնադարյան այլ կառույցներ հայտնի չեն: IV—V դդ. հայ ճարտարապետությունը բնորոշ խոյակ է գտնվել Ճարտարությունում (այժմ Ստեփանակերտի մարզային թանգարանում) և վաղ միջնադարյան ինքնատիպ մշակումով խարիսխներ կան «Բռի եղջի» վանական համալիրի շրջակայքում և ազուցված եկեղեցիների պատերի մեջ:

Արցախի տարածքում վաղ միջնադարում պատմիչների վկայությամբ (Մովսես Կաղանկատվացի, Կիրակոս Գանձակեցի) բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ են եղել: Սակայն դրանցից համարյա ոչինչ չի պահպանվել, իսկ շատ դեպքերում հին եկեղեցիների տեղում միջնադարում, հատկապես XIII դ. կառուցվել են նորերը: Բայց պահպանված սակավաթիվ նմուշները ցույց են տալիս, որ վաղ միջնադարում Արցախում կիրառվել են նույն հորինվածքները (ինչպես մեմորիալ, այնպես էլ պաշտամունքային շենքերում) ինչ և Հայաստանի մյուս նահանգներում ու դավառներում և արցախյան ճարտարապետությունը IV—VII դդ. եղել է ողջ հայկական շինարարական արվեստի օրդանական և անկապտելի մի մասը:

³⁹ З. И. Ямпульский, Памятники Кавказской Албании на горе Бешидаг, «Советская археология», М., 1960, № 2, с. 246—250.

ԱՐՅԱՆԻ ԸԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ

Հայաստանի արևմտաօտարական մասնատվածությունը IX—XI դդ. նպաստեց երկրում առանձին ճարտարապետական դպրոցների ստեղծմանը: Եվ թեպետ հայկական ճարտարապետությունն ամբողջովին վերցրած այդ ժամանակաշրջանում խաբսխվում էր VII դ. շինարվեստի վրա, սակայն, նոր ձևերի որոնումների հետ, երկրի առանձին շրջանների ճարտարապետության մեջ նկատվում են յուրօրինակ ուղղություններ: Բազմատունյաց Հայաստանում կարելի է առանձնացնել այդպիսի մի քանի ստեղծագործական դպրոցներ՝ Անիի¹, Սյունիքի², Վասպուրականի, Լոռու:

XII—XIII դդ. ճարտարապետական դպրոց ստեղծվեց նաև պատմական Հայաստանի Արցախ նահանգում³: XII դ. Արցախում ուժեղացավ Խաչենի հայկական իշխանությունը, որը հաջողությամբ դիմակայում էր թաթար-թունզուների ներխուժումներին: XIII դ. կեսն իշխանության հզորացման շրջանն էր ու հենց այդ ժամանակ այստեղ ստեղծվեցին արվեստի այնպիսի գործեր, որոնք մտան հայ ժողովրդի զեղարվեստական ժառանգության ոսկե ֆոնդը:

Հայ ճարտարապետության Արցախի դպրոցի գլուխգործոցները հիմնականում կենտրոնացված են վանական համալիրներում՝ Գանձասարում, Գաղիվանքում, Խաթրավանքում, Գտիչ ու «Բուի եղցի» վանքերում և ուրիշներում:

¹ Paolo Cuneo, L'architettura della scuola regionale di Ani nell'Armenia medievale, Roma, 1977.

² Ս. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Եր., 1960:

³ Paolo Cuneo, Le scuole regionali nell'architettura Armena, „Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena-1975“, Venezia, 1978.

Հայ միջնադարյան ճարտարապետության գլուխգործոցներից է Գանձասարի վանքը, որի համալիրը գտնվում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Մարդակերտի շրջանի Վանք գյուղից հարավ-արևմուտք, անտառապատ լեռան գագաթին: Հուշարձանախումբը բավական շահեկան դիրք ունի. այն գտնվում է հաշենի ձորի արևմտյան կողմում, նրա հեռանկարի կիզակետում և իր տեղագրությամբ գերիշխում է գեղատեսիլ ձորի վրա: Գանձասարի վանքը նկատելի է դեռ շատ հեռվից, որին նպաստում է ոչ միայն համալիրի բարձր դիրքը, այլև գույնը: Եկեղեցին և գավիթը կառուցված են տեղական կարմրավուն տուֆից, որը դարերի ընթացքում մզացել է և դարձել շագանակագույն: Սակայն դիտվելով անտառապատ լեռան կանաչ և երկնքի կապույտ ֆոնի վրա, հուշարձանախումբը իր գույնով հակադրվում է վերջինիս և իր ուրվագծով բավական ցայտուն տեսնվանում հաշենի ձորի ողջ բնապատկերում:

Գանձասարի մասին առաջին գրավոր հիշատակությունը պատկանում է 949 թ.⁴: XII դ. այն արդեն հայտնի է որպես հաշենի իշխանների տոհմական տապանատունը⁵: 1216—1238 թթ. Արցախ-հաշենի իշխանաց-իշխան Հասան-Ջալալ Գուլան, ըստ շինարարական արձանագրության, կառուցում է վանքի ս. Հովհաննես Մկրտիչ տաճարը, իսկ 1261 թ. շինվում է տաճարին արևմուտքից կից գավիթը⁶: XV դ. Գանձասարը դառնում է Աղվանքի կաթողիկոսության կենտրոնը⁷, XVII դ. նորոգվում են տաճարն ու գավիթը վանքը շրջապատվում է պարխապներով, կառուցվում նրանց ներսից կից բնակելի խցերն ու սեղանատունը⁸: XVIII դ. Գանձասարը հանդիսանում է հայ ազատագրական շարժումների ոգեշնչողն ու կենտրոնը: Եսայի կաթողիկոսի շուրջը համախմբված Արցախի ու Սյունիքի հոգևոր ու աշխարհիկ տերերը հայ

4 Տե՛սն Անանյայի Հայոց կաթողիկոսի յաղագս աստատմության տանն Աղուանից, որ ընդ ժամանակս լեալիցէ ձեռնագրութիւնն արտազոյ Սուբբ Լուսավորչի սրտոյն, «Արարատ», 1897, էջ 134:

5 Մխիթար Գոշ, Կաթողիկոսք և գէպք Աղուանից աշխարհին ի մեջ ժբ դարու, Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 337. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Եր., 1961, էջ 392:

6 Գիվան հայ վիճակագրության, սրակ 5, էջ 38—40:

7 Նույն տեղում, էջ 40—41:

8 Բ. Ալուրարյան, Գանձասար, Եր., 1981, էջ 150—153:


ժողովրդի անունից բազմիցս գիմուս են Պետրոս Մեծին՝ խնդրելով ազատագրել Հայաստանը թուրքական ու պարսկական ծանր լծից, խոստանալով կուլել նրա գրոշի ներքո⁹: Այս նամակները, դիմումներն ու խնդրագրերը հիմք դրեցին ռուս-հայկական կանոնավոր դիվանագիտական փոխհարաբերություններին: XVIII դ. Գանձասարը վերածվում է Ղարաբաղի մեխլեուսթյունների ոչ միայն քաղաքական, այլև ռազմական կենտրոնի: 1712 թ. Եսայի կաթողիկոսի հավաքած զորքը և վրացական բանակը միասին պարտության են մատնում Անդրկովկաս ներխուժած Գաղստանի լեռնականներին, իսկ 1725 թ. նրա գլխավորությամբ Ղարաբաղի մեխլեուսթյունների միացյալ զորքը ջախջախում է Վարանդա ներխուժած թուրքական զավթիչներին: Գանձասարը քաղաքական և դիվանագիտական կենտրոնի նշանակությունը պահպանում է նաև հետագայում՝ 1762 թ. այստեղ կայանում է Հովհաննես կաթողիկոսի և XVIII դ. երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման ղեկավար Հովսեփ Էմինի հանդիպումը: Իսկ 1783 թ. Գանձասարում տեղի ունեցած Ղարաբաղի մեքիբների և հոգևոր առաջնորդների հավաքը նամակ է ուղարկում գեներալ Պոտյոմկինին՝ օգնության խնդրանքով:

* * *

Գանձասարի համալիրը բաղկացած է եկեղեցուց, դավթից, բնակելի խցերից, տնտեսական շինություններից, ինչպես նաև XIX դ. կառուցված դպրոցի երկհարկանի շենքից: Մոտավորապես ուղղանկյուն հատակագծով պարիսպներով շրջափակված տարածության մեջտեղում, ազատ կանգնած, բարձրանում է հիմնական հուշարձանախումբը (եկեղեցին և դավթիք), իսկ մյուս շինությունները կառուցված են հյուսիսային և արևելյան պարիսպներին կից: Տեղանքը համեմատաբար հարթ է և ունի թեթևակի թեքություն հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք, որի հետևանքով այս կողմում պարիսպները հենապատի դեր են խաղում:


Գանձասարի վանքի ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին ունի X—XIV դդ. հայ ճարտարապետության մեջ տարածված՝ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով հորինվածք:

⁹ Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. I, Ереван, 1964, с. 360.




A

B



C



4. Գանձասարի վանք: Գլխավոր հատակագծի սխեման, դարպասի և ուխտավորների կացարանի հատակագծերը (1-Շուկանենի Մկրտչի եկեղեցի, 2-գավիթ, 3-սեղանատուն, 4-բնակելի խցեր, 5-առաջնորդարան, 6-դպրոց, 7-դարպաս, 8-ուխտավորների կացարան)

Գանձասարի եկեղեցին իր չափերով մեծ չէ (արտաքին չափերն են 11,8×17,4 մ): Լայնության և երկարության հարաբերության համեմատ ավելի ձգված է: Այսպիսի համաչափությունն արդյունք է ներսում հյուսիսային և հարավային թևերի կրճատմանը: Գմբեթը տեղադրված է ողջ հորինվածքի մեջտեղում. այս պատճառով արևմտյան թևը ձգված է ստացվել, իսկ ավանդատները՝ բավական երկար և նեղ: Արևելյան ավանդատները լուսավորվում են եկեղեցու արևելյան ճակատում բացված լուսամուտներով և մուտք ունեն աղոթասրահից (առաջին հարկիները) և բեմից՝ պահուսակային քարե աստիճաններով (երկրորդ հարկիները): Արևմտյան ավանդատները լուսավորվում են եկեղեցու հյուսիսային և հարավային ճակատներում բացված պատուհաններից: Արևմտյան ավանդատները Գանձասարում մուտք ունեն արևմտյան խաչա-

թևից, ընդ որում երկրորդ հարկ բարձրանում են շթաքարային մշակում ունեցող քարե պահուսակային աստիճաններով:

Աղոթասրահը լուսավորվում է երեք լայն և բարձր լուսամուտներով՝ մեկական հյուսիսային և հարավային պատերում ու երրորդը՝ բեմի կիսաշրջանաձև խորանում (արևմտյան ճակատի լուսամուտը փակվել է գավթի կառուցումից հետո): Գմբեթի թմբուկի պատուհանների հետ միասին նրանք եկեղեցու ներսում բավաթար լուսավորութուն են ստեղծում:


Գանձասարի եկեղեցին ունի հարուստ գեղարվեստական հարդարանք թե՛ ներսում և թե՛ արտաքին ճակատներում:

Հուշարձանի ինտերյերը կառուցված է սրբատաշ քարերից և նախատեսված չի եղել որմնանկարների համար: Գմբեթատակ տարածութան անկյունները մշակված են հայ ճարտարապետութան համար ավանդական ուղղաձիգ ջլատուններով, որոնք ավարտվում են բազմաստիճան տրամատ ունեցող քիվով (վերջինս պատվում է արքայի ողջ պարագծով ևս): Թեթևակի սլաքաձև գմբեթակիր կամարները զարգարված են ատամնաշարով (հյուսիսային և հարավային կողմում) և կիսաշրջանաձև կամարաշարով (արևելյան և արևմտյան կողմում): Առաջատների ներքևի անկյուններում կան երկրաչափական զարդաքանդակներ (շրջանաձև, աստղաձև, քառակուսի), խոյ վերին մասում անմիջապես թմբուկի տակ, տեղագրված են եզան, խոյի, մայրու և արծվի բարձրաքանդակներ, որոնք նույնպես ավանդական են միջնադարյան հայ արվեստի համար և չորս ավետարանիչների խորհրդանշաններն են: Թմբուկը ներսից զլանաձև է ու ջլատվում է ութ զույգ կիսասյունիկներով, որոնք պսակվում են մեկընդմեջ կլոր և ձգված լուսամուտների վրա հանգչող կամարաշարով:

Նուրբ ու ճոխ մշակում ունի հատկապես բեմի աղոթասրահին ուղղված երեսը՝ այն պարագծով եզերված է հյուսածո քանդակներով, ապա գոտիով, որի միջին հարթութունը զարգարված է շեղանկյուններով և նրանց միջև ընկած եռանկյուններով: Բոլոր շեղանկյուններն ունեն բավական բարդ ու շկրկնվող, նույնպես հյուսածո զարդաքանդակներ: Նույնպիսի հարդարանք ունի նաև Հառիճավանքի գլխավոր եկեղեցու XIII դ. բեմը:

Գանձասարի եկեղեցու արտաքին կերպարը, նրա ծավալատարածական լուծումը և, առաջին հերթին, հարդարանքը, ակնհայտ ցույց են տալիս ճարտարապետի ձգտումը շենքին տալ առավել կոթողային և վեհ տեսք, որը պետք է մարմնավորեր խաչնի իշխանութան հզորութունը և նրա տեր Հասան Ջալալի բարձր դիրքն ու հեղինակութունը ողջ Հայաստանում:

Եկեղեցու երեք ճակատները (արևելյան, հյուսիսային և հարավային) ունեն զույգ, եռանկյունաձև կտրվածքով խորշեր: Եկեղեցին բարձրանում է բազմաստիճան որմնախարխիսի վրա: Ծակատները մշակված են դեկորատիվ



5. Քանձասարի վանք: Գլխավոր հատակագիծ

կամարաշարով, որոնք հանգչում են զույգ կիսասյունիկների վրա: Միջին կամարները մոտ երկու անգամ լայն են կողայիններից ու ավելի բարձր, և ներառնում են եկեղեցու լուսամուտները: Քանձասարի եկեղեցու ճարտարապետության ամենակարևոր և աչքի ընկնող տարրը նրա գմբեթն է, որն իր գեղարվեստական հարդարանքով բացառիկ տեղ է զբաղում հայ արվեստի պատմության մեջ: Այն գերիշխում է եկեղեցու ողջ հորինվածքում նաև իր համաշափություններով և ունի հովանոցաձև վեղարով բազմանիստ թմբուկ: Վերջինս


16 նիստանի է, որոնցից յուրաքանչյուրն ավարտվում է փոքրիկ ճակտոն-ներով: Յուրաքանչյուր նիստի կողերը շեշտված են երեքական կիսասյունների փնջերով, որոնք ունեն խոյակներ և խարիսխներ: Աշխարհի կոշմերին նայող նիստերի վրա բացվում են նեղ և երկար լուսամտաններ, իսկ հյուսիս-արևելյան, հարավ-արևելյան և հարավ-արևմտյան նիստերին՝ կլոր լուսամտաններ, ներգծված նուրբ զարդաքանդակներով ծածկված քառակուսի շրջանակների մեջ: Մնացած նիստերի վրա քանդակված են եռանկյունի խորշեր, նրանց միջում՝ կիսասյուն, որի վրա տեղադրված են շիրկնվող պատկերաքանդակներ: Գանձասարի գմբեթի քանդակները ոչ միայն ճարտարապետական հարդարանքի բացառիկ օրինակ են, այլև ունեն իմաստավորված բովանդակություն¹⁰: Արևմտյան նիստերից երկուսի վրա գտնվում են երկու պատկերաքանդակով ծալապատիկ նստած մարդիկ, որոնք գլխներից վերև պահում են երկու եկեղեցիների մանրակերտներ: Եկեղեցիներից մեկը հենց Գանձասարն է, մյուսը՝ Վաճառը: Հետաքրքրական է, որ վերջինիս բնօրինակը չի պահպանվել, և այս մանրակերտը թույլ է տալիս պատկերացում կազմելու նրա հորինվածքի մասին. այն ունի կլոր, կենտրոնազմբեթ ծավալային լուծում, նման Անիի Փրկչի եկեղեցուն:

Գանձասարի եկեղեցում հանդիպում է նաև մանրակերտների մյուս տեսակը, որը ծառայում է իբրև ճակտոնազարդ: Շենքի բոլոր շորս ճակտոնների գազաթին բարձրանում են միմյանցից տարբեր մանրակերտներ, որոնք պատկերում են փոքրիկ գմբեթներ: Նման ճակտոնազարդերը նույնպես բավական տարածված են ճարտարապետական համալիրներում:

Բարձրաքանդակների այս երկու խմբերի միջև ընկած նիստի վրա գրտնրվում է Քրիստոսի և նրանից ներքև՝ Ադամի և Եվայի հարթաքանդակները: Այս բոլորը միասին կազմում են մի ընդհանուր հորինվածք, որը միավորում է և որի առանցքն է հանդիսանում Քրիստոսի քանդակը: Նման խմբավորում կա նաև գմբեթի հարավային կողմում: Այստեղ նույնպես սիմետրիկ տեղադրված են ծնկաչոք, լուսապսակներով մարդկանց (հավանաբար առաքյալների) քանդակներ, որոնք դիմում են միջին նիստի ճակատում պատկերված Աստվածամորը: Պատկերաքանդակների միասնական հորինվածքների այսպիսի մասնատումը, երբ նրա բաղկացուցիչ մասերը բաժանված են ճարտարապետական առանձին տարրերի միջև, նորություն էր XII—XIII դարերի հայ արվեստում¹¹: Այսպիսի գեղարվեստական հնարքի միջոցով պատկերաքանդակները դառնում են շենքի ճարտարապետության բնա-

¹⁰ А. Л. Якобсон, «Гандзасарский монастырь», Исследования по истории культуры народов Востока (Сборник в честь академика И. А. Орбели), М.—Л., 1960, с 151.

¹¹ Նույն տեղում, էջ 152:



6. Հովհաննես Մկրտչի եկեղեցու (1216—1238 թթ.) և դավթի (1261 թ.) հատակագծերը

Հատուկ մասը, միաժամանակ շկորցնելով իրենց իմաստավորված միասնությունը:

Եկեղեցու արևմտյան ճակատին կա մի այլ հետաքրքրական և բարձրարժեք սպասարան՝ խաչելուծյան տեսարանը, որը, սակայն, գավիթը կառուցելուց հետո ամբողջությամբ երևում է միայն վերջինիս տանիքից: Հյուսիսային դարձրաքանդակներով մշակված լայն խաչի երկու կողմերում պատկերված են դեպի Քրիստոսն ուղղված զույգ, ծնկաշոք մարդիկ, որոնք նման են թմբուկի վրայի մեկենաս-կառուցողներին:


Գանձասարի եկեղեցու վրա կան բազմաթիվ այլ քանդակներ՝ թմբուկի վրա եզան զլուխ և թևատարած արծիվ, արևմտյան պատին՝ թուռնի բավական հնաճ քանդակ, հարավային ճակատում կաքավ և այլն:

Ինչպես տեսանք, Գանձասարի եկեղեցին իր շափազանց հարուստ հարգարանքով, քանդակների առատությամբ ու ինքնատիպությամբ առանձնանում է XII—XIII դդ. հայ ճարտարապետության մեջ: Սակայն այս երևույթը միջնադարյան հայ արվեստի համար օտարամուտ և խորթ երևույթ չէր, այլ նոր սոցիալ-տնտեսական պայմանների ու գեղարվեստական հայացքների արդյունք էր, երբ ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների ճարտարապետությունը թևակոխել էր իր զարգացման նոր փուլը՝ այսպես կոչված «գունագեղության» շրջանը: XII—XIII դդ. կառուցողները հիմնական ուշադրությունը դարձնում են շինքի արտաքին ճարտարապետության վրա և գեկորատիվ հարդարանքի խնդիրը դարձնում են ամենակարևորը: Այս երևույթն առաջացել էր դեռ ավելի վաղ՝ X—XI դդ. (հատկապես Անիում), բայց այն իր առավել զարգացումը ստացավ XII—XIII դդ., երբ երևան հկավ նաև գեղարվեստական նոր հնարք՝ բազմազունությունը, որը և պայմանավորեց ճարտարապետական նոր «գունագեղ» ոճի առաջացումը: Այս ոճը տարածվեց ոչ միայն Անդրկովկասում, այլև Բալկանյան երկրներում, Արևելյան Եվրոպայում, Միջին Ասիայում¹²: Ինչպես տեսնում ենք, այս երևույթը ընդհանուր էր տարբեր վարչակարգ, տարբեր տիրապետող կրոն ունեցող երկրների համար: Ավելի հավանական է այն կարծիքը, որ դա կապված է նրշված երկրներում քաղաքների զարգացման հետ և ծագում է միջնադարյան քաղաքների աշխարհիկ մշակույթից: Եվ թեպետ եկեղեցական ճարտարապետության մեջ այս ոճն ածանցյալ էր, սակայն հենց այդ բնագավառում ունեցավ իր ծաղկումը¹³:

Հայաստանի վանքային համալիրների XIII դ. ինչպես եկեղեցիները,

12 А. Л. Якобсон, Некоторые закономерные особенности средневековой архитектуры Балкан, Восточной Европы, Закавказья и Средней Азии, «Византийский Временник», т. 33, М., 1972, с. 172.

13 Նույն տեղում, էջ 189:



7. Հովհաննես Մկրտչի եկեղեցու ընդլայնական կտրվածքը

այնպես էլ աշխարհիկ կառուցվածքները ունեն ճոխ արտաքին հարդարանք, վաղմված դարդաքանդակներից, պատկերաքանդակներից, բազմագույն քարերի օգտագործումից:

Այս տեսակետից աչքի են ընկնում, Գանձասարից բացի, Գաղիվանքի, Գոշավանքի, Հառիճավանքի, Գեղարդի, Հովհաննավանքի, Մակարավանքի, Ամաղու նորավանքի գլխավոր հուշարձանավանքերը՝ հիկեղեցիները ու գավիթները (բոլորը XIII դ.):

Արտաքին հարդարանքով Գանձասարին հատկապես մոտ է Հառիճավանքի գլխավոր հիկեղեցին: Գմբեթի թմբուկն այստեղ իր հարդարանքով և գեղարվեստական մշակման ձևերով այնքան նման է Գանձասարի գմբեթին, որ կարելի է այս երկու կառուցվածքները համարել ճարտարապետական միևնույն դպրոցի ստեղծագործություններ: Հառիճավանքում ևս կան կառուցողների բարձրաքանդակներ, հիկեղեցու մանրակերտ ճակտոնի վրա, թռչունի քանդակներ, իսկ ճակատներն ունեն ճոխ, հյուսածո դարդաքանդակներ:

Այսպիսով հարդարանքն, ինչպես նշվեց, սերտ կապ ունի Անիի հուշարձանների հետ: Ինչ վերաբերում է Գանձասարում պատկերաքանդակների առատությունը, ապա պետք է նշել, որ այս նույնպես իր ակունքներն ունի ավելի վաղ շրջանի հայ արվեստում՝ Աղթամարում: Աղթամարի ս. Խաչ հիկեղեցին (X դ.) պատկերաքանդակների բացառիկ մեծ քանակով եզակի է այդ ժամանակաշրջանի համաշխարհային արվեստում: Անկասկած, Աղթամարը չէր կարող իր ազդեցությունը շունենալ հայ արվեստի հետագա դարագացման վրա: Եվ այժմ ազդեցությունն, այս կամ այն չափով, արտահայտվում է XII—XIV դդ. Հայաստանի վանքային համալիրների հիմնական կառուցվածքների և, առաջին հերթին, Գանձասարի հարդարանքում: Պետք է նշել, որ Արցախին հարևան Սյունիքում ևս կա մի հուշարձան, մասնագիտական գրականության մեջ քիչ հայտնի, որը նույնպես աչքի է ընկնում լբարձրարվեստ պատկերաքանդակների առատությամբ՝ դա Բղենո նորավանքն է (XI դ.)¹⁴:

Բղենո նորավանքի պատկերաքանդակները նույնպես «խոշոր նշանակություն ունեն հայ արվեստի պատմության ուսումնասիրության համար և Աղթամարից հետո այն միակ կառուցվածքն է, որ այդքան հարուստ է հայկական քանդակագործական արվեստի նմուշներով»¹⁵:

Այսպիսով, Հայաստանի միջնադարյան ճարտարապետության այս նշանավոր երեք հուշարձանները՝ Աղթամարը, Բղենո նորավանքը, Գանձասարը

14 Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Եր., 1960, էջ 142—159:

15 Նույն տեղում, էջ 154:

իրենց բացառիկութեամբ հանդերձ, հանդիսանում են հայ արվեստի զարգացման շղթայի կարեւորագույն ու անքակտելի օղակները, մնալով նրան հարազատ և իրենց խոր արմատներն ունենալով այդ արվեստի բազմադարյան պատմութեան մեջ:

Գանձասարի վանքի գավիթը նույնպէս իր ճարտարապետութեամբ աչքի է բնկնում նույնատիպ կառուցվածքների շարքում: Այն ուղղանկյուն, քառակուսուն մոտ հատակագծով (ներսի չափերն են 11,35×13,45 մ) դահլիճ է, երկու զույգ խաչվող կամարներ ունեցող ծածկով: Հայ միջնադարյան շինարվեստին բնորոշ և հատուկ այս հորինվածքը իր լայն կիրառումը դտալ հատկապէս XII—XIII դդ. գավիթների ու ժամատների ճարտարապետութեան մեջ:

Գանձասարի գավիթը, սակայն, ունի իր հատակագծային-ծավալային հորինվածքում մի առանձնահատկություն՝ խաչվող կամարներով ծածկված հիմնական մասին արևմուտքից ավելացված է լրացուցիչ մի տարածություն, որը բաժանվում է կենտրոնականից զույգ, 16 նիստանի միակտոր քարե սյուներիով: Ահա այսպիսի հորինվածքով են կառուցված Գանձասարից բացի, միայն Հաղբատի ժամատունը և Մշկավանքի գավիթը¹⁶: Հաղբատում, սակայն, հորինվածքը մի փոքր տարբերություն ունի՝ հյուսիսից և հարավից հիմնական ուղղանկյուն ծավալը լրացված է խորշանման թաղակապ տարածություններով, իսկ խաչվող կամարներով իրականացված ծածկի կենտրոնական հատվածը մշակված է ոչ թե շթաքարերով, այլ նորից զույգ խաչվող կամարներով¹⁷:

Այս առումով Գանձասարի գավիթին չափազանց նման է Մշկավանքի գավիթը, որը, նույնիսկ կարելի է ասել, նրա կրկնօրինակն է: Հաղբատի ժամատան, Մշկավանքի և Գանձասարի գավիթների այս նմանությունը հիմք է տվել ենթադրելու, որ դրանք կառուցել է միևնույն ճարտարապետը¹⁸:

Գանձասարի գավիթի ներքին հարդարանքը համեստ է: Որմնամույթերը ու սյուներն ունեն պարզ խոյակներ և խարիսխներ, գավիթից դեպի եկեղեցին տանող դուռն ունի բավական համեստ շքամուտք: Համեմատաբար հարուստ է ներսում ծածկի հարդարանքը: Կենտրոնական հատվածն, ինչպէս նշվեց, ունի շթաքարային լուծում և ավարտվում է երդիկով, ծածկի արևմտյան հատվածները զարդարված են քանդակներով, իսկ արևելյան միջին հատվածը՝ մեծ խաչով: Սրբատաշ բազալտից կառուցված արտաքին ճակատները նույնպէս զուսպ են: Հարավային ճակատը համարյա զուրկ է հարդարանքից և աշխուժանում է միայն լուսամուտների բացվածքներով, հյուսիսային ճա-

16 С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, с. 76—93:

17 նույն տեղում:

18 А. Л. Якобсон, Гандзасарский монастырь, с. 154.

կատի նույնպես խիստ հարթությունը զարգարվում է միայն դուան համեստ շքամուտքով և վերջինիս վրա բացվող լուսամուտի պարզ երեսակալով: Հետաքրքրահանն այստեղ մուտքի երկու կողմերում գտնվող հովազների բավական ոճավորված քանդակներն են: Գավթի առավել հարուստ մշակված և աչքի բնկնող ճակատն արևմտյանն է, որտեղ գտնվում է բավական ճոխ զարդարված շքամուտքը: Փաստորեն ողջ արևմտյան ճակատը ֆոն է ծառայում այս շքամուտքի համար: Դուան ուղղանկյուն բացվածքի երկու կողմերում կան կրիսասյունների փնջեր, որոնք ունեն խարխիս և խոյակ: Վերջինիս վրա նստում է սլաքածե կամարը: Մուտքի տիմպանի հարդարանքում օդատադործված է այդ դարերի հայ արվեստին բնորոշ բաղմագունություն հնարքը՝ այստեղ կարմիր քարի վրա հագցված են դեղնավուն քարի շրջան ու կրիսաշրջաններ: Այս բոլորը հաջորդաբար ներգծված է աստիճանաձև և ապա ուղղանկյուն շրջանակների մեջ, որոնք զարդարված են նուրբ, հյուսածո քանդակներով:

Շքամուտքի հորինվածքի մեջ է ներառված դուան վերևի լուսամուտը, իսկ անկյուններում քանդակված են վաղ միջնադարյան արվեստին բնորոշ թրուշուններ:

Գավթին ունի քառալանջ, քարե սալերով ծածկված տանիք, որի կենտրոնում, երդիկի վրա բարձրանում է վեց սյունանի զանգակատունը: Այն նախնականը չէ և 1907 թ. վերանորոգման արդյունք է: Անկասկած գավթի սկզբնական զանգակատունը իր ձևերով և գեղարվեստական հարուստ մշակմամբ համահնչուն է եղել եկեղեցու գմբեթին:

Ահա այսպիսին են Գանձասարի վանքի եկեղեցին և գավթի՝ երկու հիանալի կոթող, որոնք մարմնավորել են XIII դ. հայ ճարտարապետության լավագույն նվաճումները:

Գանձասարի խցերին արևելքից կից է վանքի սեղանատունը: Այն ունի XVII—XVIII դդ. նույնատիպ կառուցվածքներին բնորոշ հորինվածք՝ օջախով թաղածածկ ձգված շինություն, որին կից է մթերանոցը: Ահա այսպիսի հորինվածք ունեն Տաթևի վանքի, Տաթևի Մեծ անապատի, Գնդեվանքի, Խոր Վիրապի և ուրիշների սեղանատները: Այս ձևն իր նախատիպը ունի XII—XIII դդ. հայ ճարտարապետության մեջ՝ թաղակապ, թաղակիր կամարներով երկար շենքեր են Քոբայրի, Կիրանց վանքի, Քեղենյաց վանքի սեղանատները¹⁹: Սակայն նրանք համալիրում ազատ են կանգնած, իսկ XVII—XVIII դդ. սեղանատներն ընդհանուր կառուցապատման մեջ են տեղադրված և համալիրներում չեն առանձնանում իրենց չափերով և ձևերով:

Գանձասարի սեղանատան ներսակողմը ջլատվում է դուրս թաղակիր կամարներով երեք հատվածի: Որմնասյունները մինչև հատակ չեն հասնում, այլ

¹⁹ Օ. Խ. Халпахчян, Гражданское зодчество Армении, М., 1971, с. 154—183.

ընդհատվում են ներքեից կես մետր բարձր: Դա պայմանավորված է եղել կրկայնական պատերի պարագծով և ստորանների տեղադրությամբ: Նրանք փայտյա են եղել և այժմ շին պահպանվել: Դանձասարի սեղանատան դեպի բակ նայող ճակատը ձգտել են հնարավորին շափ հարդարել՝ դռան շքամուտքն ունի գալարածև կիսասյուններ, իսկ օժանդակ սենյակի լուսամուտի երկու կողմերում թռչուններ են քանդակված:

Դանձասարի համալիրի հյուսիս-արևելյան անկյան թաղակապ շինութունը վաղքի առաջնորդարանն է եղել: Այն կառուցված է կիսամշակ բազալտե քարերից և մուտք ունի ոչ միայն բակից, այլև դրսից:

Արևելյան կողմում կառուցված դպրոցի երկհարկ շինքը ունեցել է փայտե ծածկ և դեպի արևմուտք, դեպի խաչնի ձորը նայող փայտե պատշգամբ:

Պարիսպները կառուցված են որձաքարից և կիսամշակ բազալտից: Պարսպատեքը ի տարբերություն հայկական շատ վանքերի, զուրկ են պաշտպանական կառուցվածքներից (աշտարակներից, բուրգերից): Համալիրը երեք մուտք ունի՝ արևելքից, արևմուտքից և հարավից: Վերջինս եղել է կենտրոնական, հանդիսավոր մուտքը և ունի մաքուր տաշած քարերից կառուցած մեծ դարպաս, թաղով ծածկված:

Դարպասից հարավ-արևելք, մոտ տասը մետր հեռու գտնվում է քառակուսի հատակագծով, ձագարածև փոխանցումով գնդածև ծածկով շինք, որը եղել է վանքի ուխտավորների կացարանը:

Համալիրից հարավ ընկած է հին գերեզմանատունը, որտեղ թաղված են խաչնի հոգևոր և աշխարհիկ նշանավոր գործիչներ, ուշ միջնադարում՝ մեկիքները:

Դանձասարի համալիրի աշխարհիկ այս շինությունները իրենց գեղարվեստական որակով և արժեքով, իհարկե, չեն կարող համեմատվել հիմնական հուշարձանախմբի՝ եկեղեցու և գավթի հետ: Այս երկու հուշարձանը ստեղծելիս հայ ճարտարապետները օգտագործել են դարերով կուտակված հայկական արվեստի գեղարվեստական միջոցների զինանոցը, կատարելապես տիրապետելով դրանց: Եվ իրավամբ, Դանձասարը, համարվում է «XIII դարի հայ ճարտարապետության հանրագիտարանը»²⁰:

Գ Ա Գ Ի Վ Ա Ն Ք

Պատմական Հայաստանի նշանավոր կրոնական և մշակութային կենտրոններից է Դադիվանքը (կոչվում է նաև Խութավանք), որը գտնվում է Լեռնային Ղարաբաղի հանրապետության և Ադրբեջանի Քյալբաջարի շրջանի սահմանագլխին (վերջինիս տարածքում), Չարեքտար գյուղից արև-

20 А. Л. Якобсон, Гандзасарский монастырь, с 158.

վելք: Մեծաքանակ կառուցվածքներից կազմված վանքի համալիրը տեղադրված է Թարթառ (Տրտու) գետի ձախ ափին, լեռան անտառապատ լանջի վրա:

Ըստ ավանդության վանքը հիմնվել է Թարգեստ առաքյալի յոթանասուն աշակերտներից մեկի՝ Գաղիի հիշատակին, նրա գերեզմանի վրա մ. թ. առաջին դարի երկրորդ կեսում²¹: Պատմական աղբյուրներում Գաղիվանքը առաջին անգամ հիշատակվում է IX դարի առաջին կեսում²²: Վանքը XII դ. ասպատակվում և ավերվում է սելջուկ թուրքերի կողմից, երբ Զուլի զորավարը խաբեությանը դրավում է Նաչնիի հայկական իշխանությունը²³:

Գաղիվանքը վերանորոգվում և բարգավաճում է XII դ. երկրորդ կեսում ու XIII դ.: Համալիրի մեզ հասած շենքերի ճնշող մեծամասնությունը այդ ժամանակաշրջանին են պատկանում²⁴:

* * *

Գաղիվանքի մեծաքանակ կառուցվածքներից կազմված խոշոր համալիրը բաղկացած է երկու հուշարձանախմբից, որոնցից հյուսիսայինում վանքի եկեղեցիներն են (թվով չորսը), գավիթները, դանդակատունը, իսկ հարավայինում՝ աշխարհիկ շենքերը:

Վանքի գլխավոր եկեղեցին՝ Կաթողիկեն, որը ըստ շինարարական արձանագրության 1244 թ. կառուցել է Հաթիրի իշխան Վախթանգի կին Արզուխաթունը²⁵, գտնվում է վերին, հյուսիսային խմբի արևելյան ծայրին: Այն արտաքուստ ուղղանկյուն (10,6×12,2 մ), ներքուստ խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով գմբեթավոր կառուցվածք է:

Հայ ճարտարապետության մշակած այս հորինվածքն ունեն Հայաստանի XIII դ. շատ վանքերի եկեղեցիները, ինչպես նաև հենց պատմական Արցախում Գանձասարի ա. Հովհաննես Մկրտչի եկեղեցին (1216—1238 թթ.): Ուշագրավ է, որ Գաղիվանքի և Գանձասարի գլխավոր եկեղեցիների ոչ միայն հատակաքածային և ծավալա-տարածական լուծումներն են նման, այլև արտաքին ճակատների մշակումը: Եվ եթե նկատի ունենանք այն հանդամանքը,

21 Մխիայի Ասորի, Ժամանակագրություն, Երևանում, 1871, հավելված, էջ 33:

22 Մ. Կաղաբկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 388:

23 Սամուի Անեցի, Հավաքունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 132, Մխիթար Գոշ, Կաթողիկոսը և դեպք Աղվանից աշխարհին ի մեջ ժԲ դարու (տե՛ս Ղ. Ալիշան, Հայաստանում, Վենետիկ, 1901, էջ 386):

24 Տե՛ս Բ. Ուլարաբյան, Մ. Հատրաբյան, Գաղիվանք, Վաղարշապատի հայադիտական հանգստե՛ս հատ. 8, Բելրուսի, 1980, էջ 7—54:



25 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 198—199 (Արզուխաթունը Մահկանաբերդի հայկական իշխանության տիրակալ Սաղուն Արծրունու քույրն էր):

որ Գանձասարի տաճարի շինարարությունն սկսվել է Դադիվանքի Կաթողիկէի կառուցումից ընդամենը երկու տարի հետո, ապա շատ հավանական է, որ XIII դ. Հայաստանի այս երկու նշանավոր հուշարձանների ճարտարապետը կամ շինարար վարպետները նույնն են եղել:

Դադիվանքի Կաթողիկէն, սակայն, որոշակիորեն տարբերվում է այդ ժամանակաշրջանի նույնատիպ կառուցվածքներից իր հատակազմային համաչափություններով. եթէ XIII դ. եկեղեցիների լայնության և երկարության հարաբերությունը կազմում է 1:1,4—1:1,3, ապա Դադիվանքում այն համասար է ընդամենը 1:1,15, որով այն ավելի մոտենում է կենտրոնագմբեթ եկեղեցիներին: Ընդարձակ գմբեթատակ տարածությունը միանում են ներքին խաչաձև ծավալի հյուսիսային, արևմտյան և հարավային ուղղանկյուն թևերը, իսկ արևելքից՝ կիսաշրջանաձև արսիղը: Ի տարբերություն Գանձասարի տաճարի, որտեղ հյուսիսային և հարավային թևերը բավական նեղ են, իսկ արևմտյանը զգալի զարգացած, Դադիվանքում հատակագիծը քառակուսուն մոտ լինելու հետևանքով թևերի խորության տարբերությունը շատ փոքր է, որը և եկեղեցուն տալիս է կենտրոնագմբեթ կառույցի տեսք:

Անկյունային երկհարկանի ավանդատները թաղածածկ են և արևելքից բոլորն էլ ավարտվում են կիսաշրջանաձև փոքր արսիղներով: Նրանց առաջին հարկերը մուտք ունեն աղոթասրահից, իսկ երկրորդ հարկերից արևելյանները՝ բեմից, վերջիններիս երկու հարկերն էլ լուսավորվում են եկեղեցու արևելյան ճակատում բացվող լուսամուտներից, հյուսիս-արևմտյան ավանդատունը՝ աղոթասրահից, իսկ հարավ-արևմտյանը՝ հարավային ճակատից:

Շենքի ներսում գմբեթատակ քառակուսու անկյունները շեշտված են կիսասյուններով, որոնց վրա հանգչում են գմբեթակիր կամարները: Աղոթասրահը լուսավորվում է հյուսիսային, հարավային և արևելյան ճակատներում բացվող մեկական լուսամուտներով: Մուտքերը երկուսն են՝ արևմուտքից և հյուսիսից (այս կողմից դռան առկայությունը հազվադեպ երևույթ է զարգացած միջնադարի Հայաստանի եկեղեցիներում): Դադիվանքի հյուսիսային մուտքը հետագայում քարե շարվածքով փակվել է: Դա տեղի է ունեցել հենց XIII դ.՝ տաճարը որմնանկարներով զարդարելու պատճառով (ներսից դռան բացվածքը ծածկված է սվաղով): Մաքուր տաշած տուֆի տարբեր գույնի և տեսակի քարերով կառուցված եկեղեցու արտաքին ծավալները հստակորեն բացահայտում են ներքին խաչաձև հորինվածքը: Խաչաթևերը արտահայտվում են ճակտոններով, իսկ անկյունային մասերը, որտեղ ավանդատներն են, ցածրացված են: Խաչի թևերն ընդգծվում են նաև եռանկյունաձև կտրվածքի խորշերով, և չլստվում են դեկորատիվ կամարաշարերով (հնգակամար), որոնք հանգչում են զույգ կիսագլանիկներով կազմված որմնասյունների վրա: Պատի հարթ մակերեսների միասնությունը և համասեռությունը շխախտող այս որմնակամարաշարերը միաժամանակ համապա-



8. Դաղիվանք: Գլխավոր շատակազդծ: 1-ա. Դաղի եկեղեցի (XIII դ.), 2-Ծրբղբղի
 ժամատուն (1224 թ.), 3-Մխանավ եկեղեցի (XIII դ.), 4-գավթի (XIII դ.), 5-գմբջավոր
 երկրորդ եկեղեցի (XIII դ.), 6-կաթողիկե (1214 թ.), 7-սյունարան (1214 թ.), 8-գան-
 դակատուն (XIV դ.), 9-զրատուն (XIII դ.), 10-պալատական դահլիճ (1211 թ.), 11-սեղա-
 նատուն (XIII դ.), 12-խոհանոց, 13-հյուրատուն (XIII դ.), վերակառուցված XVII դ.),
 14-հնձան, 15-մատան, 16-վանանոր բնակարան, 17-բնակիչի սենյակներ, 18-գարդարան

տասխանում են շենքի ճարտարապետական հորինվածքին՝ ներքին խաչաթևերը նշվում են չափազանց լայն և բարձր կամարներով, իսկ կողայինները նեղ են և զգալիորեն ցածր: Միջին կամարները ընդգրկում են խորշերը:

Լուսամուտները, որոնք տեղափոխված են միջին՝ մեծ կամարների կենտրոնում, ունեն կիսաշրջանաձև վերջավորությամբ բացվածքներ և ներառված են ուղղանկյուն, քանդակազարդ շրջանակների մեջ:

Շենքի արտաքին հարդարանքի ամենակարևոր տարրերը շքամուտքերն են: Հյուսիսային դռան ուղղանկյուն բացվածքը ներգծված է եռյակ գլանաձև կամարներով և կիսասյունիկներով մշակված «հեռանկարային շքամուտքի», իսկ վերջինս էլ՝ ուղղանկյուն շրջանակի մեջ: Դռան բարավորը հարդարված է նեոասլաքաձև խոշոր քանդակների շարքով, որի վերևում կա ուռուցիկ վարդյակ: Քանդակազարդ են շքամուտքի խոյակները, իսկ շրջանակի ներսի մակերեսը ծածկված է չափազանց նուրբ, ժանյակահյուս քանդակների ցանցով, անկյուններում ունենալով զույգ, 12 թերթիկանի վարդյակներ: Ճոխ հարդարանք ունի արևմտյան դռան շքամուտքը. հիմնականում կրկնելով հյուսիսայինի զարդաձևերը՝ կամարի կիսազլանիկներից արտաքինը պարանահյուս մշակում ունի, ուղղանկյուն շրջանակի մակերեսի ձախ կողմը բաժանված է քառակուսի հատվածների՝ շկրկնվող երկրաչափական քանդակներով, աջ կողմում կան երեք փոքրիկ խաչեր՝ հյուսկեն նախշերով, որոնց միջև պահպանվել է քանդակագործի ինքնագիրը՝ «նկարող սուրբ նշանացս գլոգոս յիշեցեք»²⁶ (այժմ այդ քարն անհետացել է):

Կաթողիկեի գմբեթի թմբուկը ներսից գլանաձև է, դրսից 16 նիստանի և զարդարված է կիսասյունիկներով հարթ կամարաշարով: Նիստերից ութում բացվում են քանդակազարդ երեսակալներով լուսամուտներ, իսկ միջանկյալ խոլ նիստերի մակերեսները աշխուժանում են խորշերով: Հետաքրքրական է, որ եթե լուսամուտները ցածր են տեղադրված և սկսվում են թմբուկի հիմքով ընթացող գոտիից, ապա խորշերը ավելի վեր են գտնվում և ունեն կիսաշրջանաձև վերջավորություն ոչ միայն վերևից, այլև ներքևից: Թմբուկի խորշերի այսպիսի լուծումը նույնպես հազվագեղ է հայկական հուշարձաններում: Կամարաշարի վերևում նիստերի հարթության մեջ, սպիտակավուն քարե ուղղանկյուն սալեր են տեղադրված տարբեր զարդաքանդակներով: Ընդհանրապես Դադիվանքի Կաթողիկեն աչքի է ընկնում ճակատներում կիրառված բազմագունության (պոլիխրոմիա) հնարքներով՝ պատերի գորշավուն մակերեսները զվարթ տեսք են ստանում կաթնագույն ֆելզիտից շարված կամարաշարերի, դռների շքամուտքերի, զարդաքանդակների, ինչպես նաև որոշ չափով զուլնով իրարից տարբեր բաց-վարդագույն տուֆ քարերից իրականացված լինելու շնորհիվ:

²⁶ Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 210:

Կաթողիկէի հարավային և արևելյան ճակատներին կան կտիտորական բարձրաքանդակներ՝ եկեղեցու մանրակերտով²⁷ (Դադիվանքում եկեղեցու մանրակերտները պատկանում են նվիրատվականների շարքին): Հարավային ճակատի լուսամուտի երկու կողմում պատկերված են Արղուխախունի՝ ամբողջ հասակով կանգնած որդիները՝ Հասանը և Գրիգորիսը իշխանական պահգոտերով և գլխարկներով: Լուսամուտից վերև բավական ուռուցիկ քանդակված է եկեղեցու մանրակերտը: Դադիվանքում պատկերաքանդակը միասնական հորինվածք է կազմում կամարի, լուսամուտի, ինչպես նաև ավելի ցած, պատի ողջ մակերեսով գրված Արղուխախունի շինարարական արձանագրութայն հետ: Գեղեցիկ, խոշոր տառերով փորագրված այս արձանագրությունը նաև եկեղեցու հարավային ճակատի հարդարանքի կարևոր տարրերից է և այդ շեշտելու համար պատի այս հատվածը շարված է կաթնագույն ֆելզիտից՝ առանձնացնելու այն ճակատի ընդհանուր գորշ հարթությունից: Իշխանագունները պատկերված են լուսապսակներով՝ մի երևույթ, որը չի հանդիպում հայկական այսօրինակ հարթաքանդակներում: Նույնիսկ Սանահնում, որտեղ ևս մայրն է կառուցել եկեղեցին իր բազամառանգ զավակների արևշատութայն համար, կտիտորները լուսապսակ չունեն: Դադիվանքում իշխանների մարմինները պատկերված են կողքից, իսկ լավ մոտրուքներով, ուռուցիկ, արտահայտիչ խոշոր աչքերով դեմքերը՝ դիմացից: Ուշագրավ է Դադիվանքի և Հառիճավանքի պատկերաքանդակներում հագուստների նմանությունը, կարելի է ասել, համարյա նույնությունը: Երկու տեղում էլ պարեգոտները համեմատաբար կարճ են և առանց թևերի ավերածև քղանցքներով (որը մյուս հուշարձաններում չի հանդիպում), երկարավիզ կոշիկներով, նույն բարձր գլխարկներով: Այն հանգամանքը, որ Հառիճավանքի հետ համարյա միաժամանակ կառուցված (ընդամենը տաս տարվա տարբերությամբ) Դադիվանքի Կաթողիկէում Արցախի իշխանները պատկերված են նույն հագուստով, ինչ Հառիճավանքում ողջ Հայաստանի կառավարիչներ Զաքարեն և Իվանեն, ցույց է տալիս Հաթերքի իշխանական տան հզորությունը և հեղինակությունը:

Եկեղեցու մանրակերտը, որն իր ծավալի կիսով շափ դուրս է գալիս պատի հարթությունից, միանգամայն հարազատորեն կրկնում է շենքի ծավալային լուծումը և ճարտարապետական բոլոր ձևերը՝ կամարաշարերը (պատի և թմբուկի), լուսամուտները, զմբեթի վեղարի մշակումը և այլն: Դադիվանքում կիրառված է մի հնարք ևս, որն աննախադեպ է նման պատկերաքանդակներում՝ մանրակերտի զմբեթի ետևում կլոր լուսամուտ է բացված,

²⁷ Դադիվանքի այս բարձրաքանդակների մասին տե՛ս Ստեփան Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX—XIV դարերում, Եր., 1976, էջ 109—116:

որի շնորհիվ մանրակերտը ավելի ցցուն է երևում դրսից՝ լուսամուտի մուգ ֆոնի վրա և միաժամանակ երևում է եկեղեցու ներսից²⁸:

Արևելյան ճակատի պատկերաքանդակը նույնպես ընդհանուր հորինվածք է կաղմում լուսամուտի հետ և վերջինս, ինչպես հարավային ճակատում, քանդակի համաշարժությունն առանցքն է: Այստեղ քանդակված են վանտաքի հովանավոր սուրբ Գաղին և իշխան Վասիլանգը, ընդ որում ոչ թե ողջ հասակով, այլ միայն մինչև կուրծքը: Ի տարբերություն հարավային ճակատի, այստեղ պատկերները ավելի հարթ են քանդակված, ընդհանրացված, թեպետ իշխանի և որդիների դիմաքանդակները նման են միմյանց՝ նույն գլխարկով, թավ մորուքով, առանց բեղերի մասնատման, լուսապսակով: Սուրբ Գաղին գլխարաց է, նույնպես մորուքով և լուսապսակով: Նրանք երկուսն էլ ձեռները պարզի են դեպի եկեղեցու մանրակերտը, տեղադրված լուսամուտի առանցքով, նրանից վեր: Չափով և մանրամասնելով այն կրկնում է հարավային ճակատի մանրակերտին, միայն այստեղ նրա գմբեթի ետևում ոչ թե լուսամուտ է, այլ կիսաշրջանաձև խորշ, որը նույնպես դրսից ընդգծում է մանրակերտի գմբեթը: Գաղիվանքի կտիտորական քանդակները իրենց մանրակերտերով Հայաստանի այդ տիպի քանդակների շարքում առանձնանում են իրենց ինքնատիպությամբ և նորարարությամբ:

Գաղիվանքի Կաթողիկեի հարդարանքում կարևոր տեղ են զբաղում որմնանկարները, որոնք կատարվել են 1214—1251 թթ.: Այժմ նրանք բավական վնասված են: Ըստ միջնադարյան արվեստի լավագույն գիտնականներից մեկի՝ Լ. Գուռնովոյի մեկնաբանությամբ՝ հարավային ճակատում խոշոր որմնանկարը պատկերում է Քրիստոսի կողմից սուրբ Նիկողայոս Հրաշագործին վեղարի և Մարիամ Աստվածածնի կողմից թիկնոցի հանձնումը, իսկ հյուսիսային ճակատում պատկերված է Ստեփանոս վարդապետի քարկոծվելով նահատակությունը²⁹:

Կաթողիկեին նույն՝ XIII դարում արևմուտքից կցել են սյունասարհ (3,7×17,8 մ. չափերով), որն իր լայնական՝ արևելյան կողմով հավում է եկեղեցու ճակատին, կիսելով նրա արևմտյան շքամուտքը: Սրահը անարվեստ մի շինություն է, անհամաչափ լայն, կտրվածքում ձվաձև, զանգվածեղ վեց սյուներով (տրամագիծը մոտ 1,4 մ), որոնց միջև ձգվում են կոպտատաշ բաղալտից շարված կամարները: Սրահը թաղածածկ է, թաղի շատ փոքր բարձրությամբ, որն ավելի հարթ ծածկի տպավորություն է թողնում: Սրահի պատի «Ող թվ» (1214) արձանագրությունը, եթե նույնիսկ շինարարա-

28 Ս. Մնացականյան, *Իված աշխ.*, էջ 115:

29 Л. А. Дурново. Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979, с. 154.

կան էլ չէ, միևնույն է, սրահը պետք է կառուցված լինի XIII դ. 20-ական կամ 30-ական թվականներին:

Սյունասարահին հյուսիսից կից է վանքի միանալով եկեղեցու և նրա գավթի հարավային ճակատը, իսկ արևմուտքից՝ զանգակատան պատը:

Միանալով եկեղեցին (XIII դ.), իր հերթին, արևելյան ճակատով կից է Կաթողիկեի արևմտյան պատին: Այն թաղածածկ, նեղ և երկար մի դահլիճ է ($2,2 \times 7,6$ մ), որն արևելքից ավարտվում է բնի ուղղանկյուն արսիգով:

Արևմուտքից եկեղեցուն կից է ուղղանկյուն ($3,7 \times 8,25$ մ), թաղածածկ գավթի վրա, որը, ունենալով եկեղեցու հետ նույն լայնությունը, նրանից ցածր է, որպեսզի եկեղեցու արևմտյան ճակատի վերևի լուսամուտը չծածկվի: Գավթում 1293 թվականի արձանագրությունն ունեցող տապանաքարի առկայությունը պարզ է դարձնում գավթի կառուցման ժամանակաշրջանը՝ ոչ ուշ XIII դարից:

Ուղղանկյուն բեմով միանալով եկեղեցու և նրա գավթի հյուսիսային պատ է ծառայում վանքի ս. Դաղի եկեղեցին (XIII դ.)՝ խոշոր միանալով մի դահլիճ, որն իր չափերով եզակի է Հայաստանի նույնատիպ հուշարձանների շարքում (ներսի չափերն են $9,05 \times 21,4$): Եկեղեցու այս լայնությունը բնորոշ է ոչ թե միանալով, այլ Հայաստանի եռանավ բազիլիկաներին. այսպես, օրինակ, եռանավ բազիլիկաներում այն տատանվում է 9-ից 10 մ-ի սահմաններում, իսկ միանավերում չի հասնում 7 մ-ի: Ծիշտ է, Դաղիվանքում դահլիճի թռիչքը կրճատվում է երկայնական պատերից 0,8 մ դուրս եկած երեք դույզ որմնամուկներով, սակայն դրանք թաղակիր կամարների համար են նախատեսված եղև և նրանց միջև հյուսիսային ու հարավային պատերին կից կամարներ չեն դրվել, որ կիտքբացներ աղոթասրահի լայնությունը, և ծածկի թաղը կհենվեր որմնախորշերի կամարների վրա: Այդ երևում է նրանից, որ եկեղեցու պատերը պահպանվել են ողջ բարձրությամբ՝ մինչև ծածկի թաղի տակը, առանց որմնակամարների որևէ հետքի: Եկեղեցու պատերն ընդհատվում են ողջ պարագծով միևնույն բարձրության վրա և կարելի է նույնիսկ ենթադրել, որ այն անավարտ է մնացել՝ կամ բաղաբական անբարենպաստ պայմանների (սելչուկների արշավանք), կամ տնտեսական դժվարությունների և կամ էլ տեխնիկական բարդության պատճառով (միաթռիչք թաղով 9 մետրից ավելի տարածության ծածկելը):

Ս. Դաղի եկեղեցին փառուցված է թեքադիր վայրում և հյուսիսից կիսով չափ հողի մեջ է թաղված, որի հետևանքով հյուսիսային պատը փաստորեն հենապատ է ծառայում: Ծեխը կառուցված է կիսամշակ քարի շարվածքով, միայն հյուսիսային պատի շորս և հարավային երկու որմնախորշերը երիզված են սրբատաշ քարերի քանդակազարդ շրջանակներով: Նման հարդարանք ունի նաև արևմտյան դուռը ներսից, որը բացվում է դեպի այս կող-

մից կից գավիթը: Աղբթասարահի լայնությունն ունեցող բեմի աբսիդի կենտրոնում պահպանել է սեղանի վեճ քարը, ծածկված տարբեր շափերի խաչքանդակներով: Դադիվանքի միանավ այս եկեղեցու ճարտարապետությունն ունի մի առանձնահատկություն, որով այն տարբերվում է նույնատիպ հուշարձաններից՝ դա ավանդատների տեղադրության ձևն է: Ի տարբերություն հայկական միանավ շատ եկեղեցիների, որոնցում բեմը զգալի կերպով նեղ է աղբթասարահի համեմատ, և այդ տարբերության հաշվին նրա երկու կողմերում ավանդատներ են իրականացվում, Դադիվանքում այդ սենյակները տեղադրված են բեմի կիսաշրջանաձև աբսիդի և արտաքին պատերի ուղղանկյուն եզրագծի միջև ստացվող շարվածքի անկյունային հոծ դանդավածի մեջ: Ավանդատները արևելքից-արևմուտք ձգվող ուղղանկյուն թաղածածկ, ոչ մեծ (1,8×1,45 մ) խցեր են, կիսաշրջանաձև փոքրիկ աբսիդով և եկեղեցու արևելյան ճակատի լուսամուտներով: Նրանց մուտքերը բացվում են անմիջապես եկեղեցու բեմից³⁰:

Միանավ եկեղեցուն արևմուտքից կից է վանքի առաջնորդ Գրիգորիսեպիսոպոսի կառուցած ժամատունը (1224 թ.)³¹, որը պատկանում է միջնադարյան Հայաստանի գավիթների ու ժամատների ամենատարածված քառասյուն գմբեթավոր տիպին (չափերն են 11,6×15,0 մ): Սակայն ունենալով հիմնականում այս հորինվածքը, Դադիվանքի ժամատունը խիստ տարբերվում է XII—XIII դդ. նույնատիպ կառուցվածքներից իր ծավալատարածական լուծմամբ: Պետք է նշել, որ հատակագծային լուծումն էլ սակավաթիվ նմանակներ ունի Հայաստանում: Այսպես, եթե նույն ժամանակաշրջանի քառասյուն գավիթներն ու ժամատները կենտրոնաձիգ կառուցվածքներ են և նրանց հատակագծերը կամ քառակուսի են, կամ մոտ քառակուսուն (Թեղենյաց վանք, Սանահին, Գոշավանք, Կեչառիս, Հաղարծին, Գեղարդ, Հառիճավանք, Մակարավանք և այլն), ապա Դադիվանքում ժամատան հատակագիծն ունի բազիլիկայի համաչափություններ՝ երկարությունը մոտ 1,5 անգամ գերազանցում է լայնությանը (ներսի չափերն են 9,1×13,8 մ): Նույնիսկ Հոռոմոսի գավիթը (XI դ.), որի հատակագիծն արտաքին համաչափություններով նման է Դադիվանքի ժամատանը, ներսից մոտ է քառակուսուն (սա հետևանք է արևելյան և արևմտյան պատերին կից խոշոր որմնամուկների): Բայց Դադիվանքի ժամատան ճարտարապետության ինքնատիպությունն առավել ցայտուն արտահայտվում է նրա ծավալային լուծման մեջ: Քառամուկ կամ քառասյուն գմբեթավոր գավիթների ու ժամատների ծավալի վերին մասը

³⁰ Հյուսիսային ավանդատան ներսում կա Դադիվանքի XIII դ. վանահայր Տեր-Աթանասի արձանագրությունը:

³¹ Դիվան հայ վիճակագրության, պրակ 5, էջ 210:

XII—XIII դարերում ունի երեք տիպի լուծում՝ 1. եկեղեցատիպ, երբ խաչաձև գմբեթավոր եկեղեցիների նման ծածկը խաչաձև է լուծված (միջին, բարձր մասը ծածկվում է լատերով և նրանց վրա՝ երկթեք տանիքով, իսկ անիլյունային ցածր մասերը՝ միաթեք ծածկով), 2. միջանկյալ, երբ շորս ճակատներն էլ ավարտվում են ողջ երկարությամբ ձգվող ճակտոններով, 3. քառալանջ, երբ բացակայում են ճակտոնները, իսկ ծածկի վերին՝ բրդաձև մասը իրականացված է շորս միաթեք լանջերով, որոնց մեջտեղից բարձրանում է շենքի գմբեթը³²: Ի տարբերություն այս երեք ձևի, Դադիվանքում ժամատան վերին մասը լուծված է միանգամայն այլ կերպ՝ այն ունի միանավ կառուցվածքներին բնորոշ երկթեք ծածկ (հարավից հյուսիս ձգվող), որի կենտրոնում բարձրանում է գմբեթի թմբուկը: Տանիքի այսպիսի լուծմամբ անիլյունային հատվածները ծածկվում են հյուսիսային և հարավային միջին հատվածների հետ քառորդ գլանի ձև ունեցող թաղով: Գմբեթը բարձրանում է շորս կենտրոնական, քառակուսի կտրվածքով մուլթերի վրա: Ի տարբերություն նույնատիպ բոլոր գավիթների, որմնամուլթեր այստեղ չկան: Հետաքրքրական է, որ անցումը գմբեթատակ քառակուսուց դեպի գմբեթի թմբուկը իրականացված է տրոմպների միջոցով: Թմբուկն ութանիստ է, սըրբատաշ քարից շարված: Արևելյան և արևմտյան՝ երկայնական պատերում ճակտոնների բացակայության պատճառով գմբեթն օրգանապես չի կապվում շենքի վերին մասի ծավալի հետ, այլ ուղղակի դուրս է գալիս երկթեք ծածկի միջից: Ժամատունը կառուցված է կոպտատաշ բազալտի քարից, և միայն սյուները, կամարներն ու թմբուկը շարված են մաքուր տաշված քարերից: Շենքը համարյա զուրկ է հարդարանքից: Արևելյան դռան շքամուտքից բացի, ժամատան գեղարվեստական ձևավորման միակ տարրը պատերին ազուցված նուրբ քանդակներով ծածկված տարբեր մեծության խաչքարերն են: Շենքը լուսամուտներ չունի և լուսավորության միակ աղբյուրը գմբեթի երդիկն է: Կիսախավարը հասապատասխանում է շենքի հիմնական նշանակությանը՝ այն եղել է Հաթերթի իշխանական տան տապանատունը:

Դադիվանքի ժամատունը իր ճարտարապետության մասին ունի տեղ է գրավում նույնատիպ հուշարձանների շարքում, առանձնանալով իր ինքնատիպ հորինվածքով: Սակայն պետք է նշել, որ կառուցողները չեն կարողացել մինչև վերջ հաղթահարել տարածված ձևերից հրաժարվելու պատճառով առաջացած ստեղծագործական խնդիրների բարդությունները, մի բան, որ բերել է ծավալի վերին մասի անհաջող լուծման:

Վանքի շորքորդ եկեղեցին (XIII դ.) գտնվում է հուշարձանախմբի հարավային կողմում, սյունասրահի դիմաց: Այն ունի միջնադարյան հայ ճարտարապետության մեջ ամենատարածված եկեղեցական շենքի՝ գմբեթավոր

³² С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, с. 134.

դահլիճի հորինվածք: Եկեղեցին փոքր է (արտաքին չափերն են 6,4×8,0 մ) և պատկանում է մեկ զույգ որմնամույթների վրա գտնվող դահլիճի ենթատիպին:

Այն ունի պարզ, նույնիսկ պարզունակ ճարտարապետական ձևեր և առանց հարգարանքի է: Հիմնական ծավալը կառուցված է կոպտատաշ որձաքարից և ճակատների մակերեսը կիսով չափ սվաղված է թե՛ դրսից և թե՛ ներսից: Միակ դուռն արևմուտքից է: Իսկ ընդամենը երկու լուսամուտը դռան վերևում և բնմի արսիդում են բացվում: Վերջինիս երկու կողմերում ուղղանկյուն ավանդատներ են տեղադրված՝ արևելյան ճակատի փոքրիկ պատուհաններով: Ուշադրավ է գմբեթի կառուցման եղանակը: Կլոր թմբուկի հիմքի առաջին շարքը սրբատաշ քարից է, ողջ թմբուկը՝ աղյուսից, իսկ վերին՝ վերջին շարքը՝ նորից մաքուր տաշած քարից: Ընդ որում աղյուսի շարվածքի մեծ մասն իրականացված է սովորական եղանակով՝ աղյուսների հորիզոնական շարքերով, բայց լուսամուտների վերևից (թմբուկն ունի չորս նեղ և բարձր լուսամուտ) և գմբեթի քիվից մոտ մեկ մ. ցած երկու գոտի շինված է «եղևնաձև» շարվածքով: Եկեղեցու գմբեթի մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ թմբուկը ոչ թե զլանաձև է, այլ դեպի վեր նեղանում է, կայունությունն ուժեղացնելու համար:

Աղյուսի օգտագործումը Հայաստանում, ճիշտ է, տարածված չէր, սակայն սովորական երևույթ էր երկրի շինարարական կյանքում դեռ վաղ միջնադարից սկսած: Աղյուսից շինվել են բնակելի շենքեր, պաշտպանական, նույնիսկ պաշտամունքային կառուցվածքներ (Դվին քաղաք, Սրվելի, Կիրանց, Մուշի Առաքելոց վանքեր և այլն): Ուշ միջնադարում հատկապես Սյունիքում և Նախիջևանում լայն տարածում ստացավ աղյուսի կիրառումը եկեղեցիների կառուցելիս, ընդ որում, միևնույն կառուցվածքում քարե հետ նաև աղյուսի օգտագործումը հանդիսացավ հայկական ճարտարապետության նախիջևանյան դպրոցի առանձնահատկությունը: Ինչպես Դադիվանքի գմբեթավոր դահլիճում, Ագուլիսի ս. Քրիստոսի որ և ս. Երրորդություն, Շոռոթի ս. Հակոբ, Աբրահուհիսի ս. Կարապետ և ուրիշ շատ եկեղեցիների հիմնական ծավալը նույնպես կառուցված է քարից, իսկ գմբեթը աղյուսից³³:

Վանքի համալիրի հյուսիսային հուշարձանախմբի արտահայտիչ ուրվանկարը ստացվում է ուղգածիզ շենքերի՝ գմբեթների շնորհիվ: Բացի եկեղեցիների և գավթի գմբեթներից, ողջ համալիրի ծավալատարածական հորինվածքի բաղկացուցիչ և էական տարրն է զանգակատան շենքը: Այն կից է պլանասրահին արևմուտքից և կառուցվել է Դոփյանց Վահրամ իշխանի որ-

³³ Արգամ Այվազյան, Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Եր., 1978:

դի Սարգիս եպիսկոպոսի ձեռքով (մահացած 1333 թ.)³⁴: Զանգակատունը երկհարկանի է, որի վերին մասը քառասյուն գմբեթավոր ուստոնդան է, բեր- գաձե վեղարով, կառուցված մաքուր տաշված քարերից: Իսկ ստորին՝ առա- ջին հարկը ուղղանկյուն հատակագծով (արտաքին շափերն են 4,1×4,9 մ), բարձր, երես կողմից (հյուսիսային, արևելյան, հարավային): Խուլ պատերով շինույթյուն է, որի արևմտյան ճակատը համարյա ողջ մակերեսով մի խոշոր կամարակապ բացվածք է, եղերը շարված մաքուր տաշած քարերով: Պա- տերը շարված են կոպտասաշ որձաքարով, քարերի արանքները զբախց սլաղված՝ նույն ձևով, ինչ փոքր գմբեթավոր եկեղեցու պատերը: Զանգակա- տան առաջին հարկը փաստորեն մի փոքրիկ թանգարան է՝ այնտեղ դրված են վանքի առաջնորդ Տեր Աթանասի 1233 թ. կանգնեցրած գեղաքանդակ խաչ- քարերը³⁵:

Զանգակատան առանցքով, դեպի արևմուտք, մոտ 12 մ. նրանից հեռու գտնվում է վանքի գլխավոր դարպասը: Այն միակամար (2,6 մ. թռիչքով) բացվածք ունի և կառուցված է կոպտասաշ որձաքարից: Կամարը հանգչում է պարզունակ տրամատ ունեցող խմբատի վրա: Վանքի համալիրի պարսպի պահպանված հատվածը սկսվում է դարպասի հյուսիսային կողմից, հուշար- ձանախոսմբը շրջանցում հյուսիսից (ս. Դադի միանալ եկեղեցուց 3,5 մ. հեռավորության վրա) և համալիրի արևելյան կողմում թեքվում հարավ: Այս- տեղ պահպանվել է վանքի երկրորդ մուտքը ավելի փոքր և համեստ ձևերով: Այժմ հնարավոր չէ տեղում պարզել, թե դեպի հարավ պարիսպը մինչև ուր է շարունակվել:

Պարսպի՝ Կաթողիկեից հյուսիս-արևմուտք ընկած հատվածում, պատի շարվածքի մեջ հազցված 1200 թ. արձանագրությանը կրող խաչքարը ցույց է տալիս, որ պարիսպը կառուցվել է XII դ. հետո³⁶:

Վանքի հյուսիսային հուշարձանախմբի հյուսիս-արևմտյան անկյունում պահպանվել են երկու թաղակապ շենքերի ավերակներ, որոնց նշանակու- թյունը պարզ չէ: Նրանք կից են Գրիգորիսի կառուցած գավթի արևմտյան ճակատին: Սենյակներից հարավայինը ավելի երկար է և ձգվում է մինչև պարիսպը, իսկ հյուսիսայինը կիսով չափ փոքր է (կարճ է): Պատերում խոր- շերի՝ պատրհանների առկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք բնակելի սենյակներ են եղել:

Դադիվանքի հարավային հուշարձանախոսմբը, որի շենքերը կառուցված են միմյանց կողքի, արևելքից արևմուտք ձգվող առանցքի ուղղությամբ, կազմված է միմիայն աշխարհիկ կառուցվածքներից: Նրանց մեջտեղում բարձ-

34 Ս. Զալյան, նշված աշխ., էջ 207:

35 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 213:

36 Բ. Ուլուբաբյան, Դադի կամ Խուրթ վանք, «Էջմիածին» 1971, 2—է, էջ 72:

ըրանում է դահլիճի խոշոր ծավալը, որին արևելքից կից է գրատունը օժանդակ սենյակներով, իսկ արևմուտքից՝ սեղանատունը խոհանոցով: Որոշ հեռավորության վրա, դեպի արևմուտք, գտնվում են բնակելի և արտադրական շենքերը:

Դադիվանքի աշխարհիկ շենքերի շարքում իր ճարտարապետությամբ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 1211 թ. կառուցված պալատական դահլիճը: Նրա հարավային ճակատի վրայի շինարարական արձանագրությունը հետևյալն է՝ «Թ: Ոկ ես Գրիգորէս որդի Հասանա շինեցի գտաճարս յիշատակ հոգո իմո: Յաղալթս յիշեցեք»³⁷:

Ինչպես Հ. Օրբելին է նշել Աղթամարի X դ. պալատական դահլիճի վերաբերյալ պատմիչ Թովմա Արծրունու «տաճար» անվանման կապակցությամբ, «տաճար տերմինի այդպիսի օգտագործումը պալատի բնորոշման համար իմաստով, իսկ գրաբարում «տաճար» բառը նշանակում էր և՛ պալատ, և՛ տաճար, և՛ պալատական դահլիճ և մասնավորապես գլխավոր՝ «խրախճանաց դահլիճ»³⁸: Դադիվանքի դահլիճն, անկասկած, «խրախճանաց» էր, որովհետև նրան արևմուտքից անմիջականորեն կից է խոհանոցի շենքը՝ սեղանագրված դահլիճի և սեղանատան արանքում: Դադիվանքի բազալտե քարերից կառուցված դահլիճն ունի այդ ժամանակաշրջանի հայկական գավիթներին ու ժամատներին բնորոշ կենտրոնական հորինվածք, մոտավորապես քառակուսի հատակագծով (ներքին չափերն են 8,4×9 մ), կենտրոնական մասում շորս սյուներով: Բազալտե միակտոր քարերից այս քլոր սյուների միջև ու սյուներից դեպի պատերը գցված կամաքներով առաստաղը բաժանվում է ինը հատվածի՝ ութ ուղղանկյուն և միջին՝ քառակուսի հատվածի, որտեղ գտնվում է երդիկով, ութանիստ բրգաձև գմբեթը: Սյուներն ունեն բարդ տրամատով խոյակներ ու խաբիսխներ: Շենքը զուրկ է այլ հարդարանքներից: Միակ մուտքը գտնվում է գլխավոր՝ հարավային ճակատում: Դահլիճը լուսավորվում է միայն երդիկից: Նրա հյուսիսային պատի երկարությամբ կես մետր լայնությամբ և նույնքան էլ բարձրության սալ քարերից նստարան է շինված: Դադիվանքի պալատական դահլիճն առանձնահատուկ տեղ է գրավում միջնադարյան Հայաստանի նման կառուցվածքների շարքում՝ ընդլայնելով մեզ հայտնի սակավաթիվ նույնատիպ հուշարձանների շրջանակը և իր հորինվածքով սերվելով ոչ միայն ժամատներից, այլև կապվելով ավելի հին ակունքների՝ հայկական ժողովրդական բնակելի տան ճարտարապետության հետ:

³⁷ Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 212:

³⁸ Н. А. Орбели, Избранные труды в двух томах, т. I, М., 1968. с. 38.

ինչպես նշվեց, Դադիվանքի պալատական դահլիճին արևմուտքից կցված են վանքի սեղանատունը՝ խոհանոցով: Սեղանատները, որպես միջնադարյան պալատական և վանքային համալիրների բաղկացուցիչ տարր, երևան են գալիս դեռ վաղ միջնադարում: Սակայն նրանք լայն տարածում դուսն Հայաստանի XII—XIII դդ. վանքերում, երբ պաշտամունքային կառուցվածքներից բաշի սկսեցին այնտեղ բազմաթիվ աշխարհիկ շինություններ կանգնեցնել: Այդ դարերից պահպանվել են Հաղպատի, Կիրանց վանքի, Հաղարծնի, Թեղենյաց վանքի, Քոբայրի սեղանատները, որոնք բավականին խոշոր շենքեր են: Այսպիսի մեծ շափերը բացատրվում են նրանով, որ այդ դարերում սեղանատները ոչ միայն հատկացված էին վանքի միաբանությանը, այլև ծառայում էին բազմաթիվ ուխտավորներին հյուրասիրելու, մատաղը եփելու և բաժանելու համար:

Հայաստանի XII—XIII դդ. սեղանատներն իրենց հորինվածքով բաժանվում են երկու տիպի՝ խաչվող կամարներով ծածկվող դահլիճների և թաղածածկ միանալ սրահներով³⁹: Առաջին տիպին պատկանում են Հաղպատի և Հաղարծնի սեղանատները, իսկ երկրորդից մեկ հայտնի են Քոբայր, Կիրանց և Թեղենյաց վանքերի սեղանատները, որոնք ձգված թաղածածկ դահլիճներ են, որմնամուկների վրա հենվող թաղակիր կամարներով: Ահա այս հորինվածքին է պատկանում նաև Դադիվանքի սեղանատունը: Սակայն այն ունի երկու էական տարբերություն նույն ժամանակաշրջանի նույնատիպ կառուցվածքների համեմատ: Եթե XIII դ. մյուս բոլոր սեղանատները վանքերի համալիրներում առանձին են կանգնած, մեկուսի, ապա Դադիվանքում այն գտնվում է աշխարհիկ շենքերի շարքում, դառնալով ընդհանուր կառուցապատման շարքային տարր: Երկրորդ՝ Դադիվանքում սեղանատան դահլիճը միասնական հորինվածք է կազմում խոհանոցի հետ, այն դեպքում երբ ոչ միայն XIII դ., այլև XVII—XVIII դդ. հայկական վանքերի խոհանոցներն առանձնացված են սեղանատներից: Դադիվանքի սեղանատան դահլիճն ուղղանկյուն է, արևելքից արևմուտք ձգված (6,0×11,5 մ) և երկու թաղակիր կամարներով ու նրանց համապատասխան որմնամուկներով բաժանվում է երեք հատվածի: Կամարները շարված են մաքուր տաշված, իսկ պատերը և թաղը՝ կոպտատաշ քարերից: Երկու մուտք ունի, երկուսն էլ հարավային պատում՝ բացված դահլիճի հարավ-արևմտյան և հարավ-արևելյան անկյուններում: Հյուսիսից սեղանատունը կիսով չափ խրված է հողի մեջ՝ տեղանքի թերություն պատճառով: Քանզված են դահլիճի ծածկը և հարավային ու արևմտյան պատերի վերին մասերը: Այժմ կա միայն մեկ լուսամուտ՝ արևմտյան պատում, դահլիճի ընդերկայնական առանցքով բացվող:

³⁹ О. Халкохьян, Гражданское зодчество Армении (жилые и общественные здания), М., 1971, с. 155—183.

Քե՛ր իր ճարտարապետությունը, թե՛ հատակադժի համաշափություններով
Դադիվանքի սեղանատան դահլիճը կրկնում է Հայաստանի նույն՝ XIII դ. սե-
ղանատների ձևերը: Սակայն այստեղ սեղանատան դահլիճի հետ օրգանական
ստեփոզություն է կազմում խոհանոցը, որի ծավալը հանդիսանում է վերջի-
նիս շարունակությունը և տեղադրված է նրա ու պալատական դահլիճի
արանքում: Խոհանոցը ուղղանկյուն ($4,7 \times 5,85$ մ) թաղածածկ կառույց է,
որը երկու լայն կամարակապ բացվածքներով արևմտյան կողմից հաղորդա-
կցվում է սեղանատան հետ: Կուսավորությունը վերևից է՝ ծածկի կենտ-
րոնի երդիկից, իսկ միակ մուտքը հարավային պատում է: Նույն պատում,
մուտքի մոտ տեղադրված է խոհանոցի հսկայական օջախը՝ $1,85 \times 2,55$ մ
չափերով: Այս պատճառով հարավային պատը արտաքուստ հաստ է ստաց-
վել՝ 2,8 մ և պարունակում է ծխնելույղի խողոր, ուղղաձիղ անցքը:

Հայկական մյուս վանքերում սեղանատների խոհանոցները չեն պահ-
պանվել: Նրանք անկասկած կից են եղել սեղանատներին: Սակայն, հա-
վանաբար, կառուցված չեն եղել միայն, ամբողջ շինվածքով, որի հետևան-
քով չեն հասել մինչև մեր օրերը: Խոհանոցները սեղանատան դահլիճների
հետ հորինվածքային կապ չեն ունեցել, որի համար էլ այդ վանքերում խո-
հանոցների տեղադրության հարցը չի պարզված: Ավելի ուշ՝ XVII—XVIII դա-
րերից պահպանվել է Տաթևի վանքի սեղանատան խոհանոցը, որն իր ձևե-
րով քրոշ ընդհանրություն ունի Դադիվանքի խոհանոցի հետ, սակայն կա-
ռուցված է սեղանատան դահլիճից առանձին, նրանց բաժանող թաղակապ
լայն միջանցքի մյուս կողմում:

Արևելքից պալատական դահլիճին կից է Դադիվանքի գրատունը:

Դադիվանքը, միջնադարյան Հայաստանի բազմաթիվ վանքերի նման,
ուսումնական ու մշակութային խողոր կենտրոն է եղել և ունեցել է գրչատուն,
ուր բազմաթիվ ձեռագրեր են գրվել: Դրանց մի մասը (XIII—XVI դդ. պատ-
կանող) արհավիրքներից փրկվել և հասել են մեզ⁴⁰:

Բայց ինչպես հայկական շատ ձեռագրերի համար ողբերգական եղան
թաթար-մոնղոլների, թուրք-սելջուկների արշավանքները (հայտնի է, որ
միայն 1170 թ. Բաղաբերդի գրավման ժամանակ սելջուկներն այրել են
10 000 ձեռագիր մատյան), այնպես էլ բազմաթիվ պատերազմներից ու ան-
համար ասպատակություններից տուժեցին նաև միջնադարյան Հայաստանի
գրչական կենտրոնների շինքերը՝ գրատներն ու մատենադարանները: Այժմ
մեզ են հասել (չհաշված Դադիվանքը) ընդամենը հինգ գրատուն, որոնց
նշանակությունը որոշակիորեն հայտնի է արձանագրություններից կամ պատ-
միչների տեղեկություններից: Դրանք են Սանահնի, Հաղպատի, Գոշավանքի,

40 Չ. Ոսկեան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 110:

Մաղմոսավանքի և Հոռոմոսի վանքի գրատները, որոնք բոլորն էլ ունեն համարյա նույն հորինվածքը: Նրանք, որպես օրենք, բաղկացած են մեկ շենքից, մտտավորապես քառակուսի հատակագծով, բրգաձև ծածկով (սակայն տարբեր ձևերի), հիմնականում լուսավորվում են ծածկի կենտրոնի երդիկով, ներսում պատերն ունեն խորշեր՝ ձեռագրերը պահելու համար⁴¹: Ահա ընդհանուր ձևով գրատների շենքերի ճարտարապետության հիմնական գծերը, որոնք ունի նաև Դաղիվանքի գրատունը: Այն ուղղանկյուն, քառակուսուն մոտ հատակագիծ ունեցող դահլիճ է (5,15×6,30 մ), բրգաձև ծածկով, որի կենտրոնի երդիկը շենքի լուսավորության միակ աղբյուրն է: Արևմտյան կողմից դահլիճի առաածությունն ընդարձակվում է մինչև հատակն իջնող խոշոր, կամարակապ որմնախորշերի շնորհիվ (0,8 մ խորությամբ և 2,8 մ լայնությամբ), իսկ արևելքից երկու լայն կամարակապ բացվածքներով միանում է դեպի գրատան հարավային մուտքը տանող միջանցքին: Այս լրացուցիչ տարածությունների շնորհիվ գրատան մակերեսը հասնում է մոտ 50 մ²-ի, Դռնավանքի նույնատիպ շենքի շափ (մյուս գրատների մակերեսները ավելի մեծ են՝ 70—80 մ²): Ծածկի լուծման եղանակով Դաղիվանքի շենքն ավելի նման է Սանահնի գրատանը՝ եթե մյուս վանքերում նրանց ծածկը իրականացվում է խաչվող կամարներով, ապա Սանահնում այն լուծված է սրամիտ և աննախադեպ եղանակով: Մեզ հայտնի ամենահին այս գրատան (1063 թ.) ութանիստ հիմքով բրգաձև ծածկը հիմնված է շորս կամարների վրա, որոնք հենվում են պատերի մեջտեղում դրված որմնասյուների⁴²: Դաղիվանքում ծածկի լուծումը հիմնականում նույնն է՝ դահլիճի անկյուններում զցված են կամարներ, որոնք պատերի միջին հատվածների հետ կազմում են ծածկի ութանիստ հիմքը, որի վրա բարձրանում է նրա կիսադնդաձև, գմբեթանման ծավալը: Կարելի է ենթադրել, որ Դաղիվանքի գրատան կառուցող-ճարտարապետը ծանոթ է եղել Սանահնի վանքի այդ շենքին: Հատկանշական է, որ Դաղիվանքում նույնպես, ինչպես և Սանահնում, գրատան մուտքի առջև թաղածածկ միջանք-սրահ է կառուցված:

Դաղիվանքի գրատան դահլիճի երկրորդ մուտքը հարավից բացվում է դեպի կից մի թաղակապ, որմնախորշերով սենյակ, իսկ միջանցքից մի այլ դուռ տանում է արևելքից նրան կից մի ուրիշ սենյակ ևս: Այնպես որ գրատունը ոչ թե մի շենքից է կազմված, ինչպես մյուս բոլոր հայտնի օրինակներում, այլ փաստորեն համալիր է՝ օժանդակ սենյակներով, որոնցում հավանաբար ապրել են գրիչները, մագաղաթ է պատրաստվել, իսկ խորշերով սենյակը, որը հաղորդակցվում է դահլիճին, գուցե մատենադարան է ծառայել (դահլիճի պատերը գրադարակներ-խորշեր չունեն):

41 Հ. Խալիփախյան, նշված աշխ., էջ 110—153:

42 Նույն տեղում, էջ 139:

Արևելքից դրատանը կից սենյակները երկհարկանի են, նրանցից հյուսիս-սայիմը բնակելի է, իսկ հարավայինը բաց սրահ է եղել (այժմ քանդված է, սակայն դեռ երևում է դարասկզբին կատարված լուսանկարներում):

Վանքի համալիրի հարավային մասն է կազմում դեպի արևմուտք դրտնըվող շենքերի մի փոքրիկ խումբ ևս, որի շարքում է իշխանական երկհարկանի սեփարտը (առաջին հարկում մառանով և հնձանով)⁴³: Պալատական շենքը խոշոր, հյուսիսից հարավ ձգված կառուցվածք է, որի վերին հարկաբաժինը, դժբախտաբար, այժմ քանդված է: Սակայն հին լուսանկարներում երևում է, որ այն թաղածածկ մեծ դահլիճ է եղել, հարավային ճակատում երկու խոշոր, կամարակապ բացվածքներով, որոնք նայում են դեպի Թարթարի դեղատեսիլ ձորը: Դահլիճի հյուսիսային կողմում պահպանվել է պալատական մատուռը: Ծենքի առաջին հարկը տնտեսական, արտադրական նշանակություն է ունեցել, և կազմված է երկու ձգված, թաղածածկ տարածություններից, որոնցից արևելյանը վանքի հնձանն է եղել: Այն ուղղանկյուն, մոտավորապես քառակուսի հատակագծով (5,8×6,0 մ) բարձր շենք է, որի հյուսիսային կողմում պատրաստված է խաղողը ձգմելու խոշոր ավազանը (3,8×4,5 մ) չափերի: Վերջինս հատակից բարձր է շինված և դեպի այն կարելի է բարձրանալ հնձանի արևելյան և արևմտյան պատերին կից աստիճաններով: «Ծիրամանը» չի պահպանվել: Հնձանի մուտքը հարավից է, այս կողմից է նաև միակ լուսամուտը: Արևմուտքից հնձանին կից է մառանը՝ խոշոր (6,2×7,0 մ) թաղածածկ մի շենք, որի դուռը նույնպես հարավից է, սակայն արևմտյան պատում ունի մեծ կամարակապ դուռ-բացվածք, որի միջով կարելի է մտնել նույնիսկ գրաստով: Դեռ XIX դ. կեսին մառանում գրված են եղել երեք խոշոր, յուրաքանչյուրը հազար լիտրանոց կարաններ⁴⁴:

Դափնվանքի պալատական այս շենքից արևելք, կառուցված է մի այլ, նույնպես երկհարկանի շենք: Ակնհայտ է նրա բնակելի նշանակություն ունենալը՝ այդ է վկայում սենյակներում բուխարիների, պատերում խորշերի՝ «պատրհանների» առկայությունը, որոնք Հայաստանի վանքերի բնակելի շինությունների պարտադիր տարրեր են: Սակայն Դափնվանքի այս կառուցվածքն իր ճարտարապետությամբ էապես տարբերվում է մեզ հայտնի միջնադարյան մյուս բոլոր վանական բնակելի շենքերից: Դափնվանքի շենքի առաջին հարկն ունի երեք բաժանում: Առաջինը՝ արևելյանը, թաղակապ սրահ է, որը հարավային պատի համարյա ողջ լայնությամբ կամարակապ բացվածք ունի: Սրահից մուտք է բացվում դեպի արևելքից-արևմուտք ձգվող մի թաղածածկ սենյակ, բուխարիով, պատերին որմնախորշերով: Այն լու-

⁴³ Ս. Ջալալեանց, նշված աշխ., մասն Բ, էջ 224—225:

⁴⁴ Նույն տեղում, էջ 225:

սավորվում է հարավային ճակատի երեք լուսամուտներով: Նրանցից դուռ է բացվում դեպի արևմտյան՝ երրորդ փոքրիկ սենյակը: Շենքի երկրորդ հարկը, տեղանքի թեքության պատճառով, մուտք ունի հյուսիսային կողմից: Այն նույնպես երեք բաժանում ունի՝ կողքերին ոչ մեծ թաղածածկ սենյակներ ($2,6 \times 3,05$ մ և $2,05 \times 3,05$ մ), որոնց միջում սրահ է տեղադրված ($6,7 \times 4,0$ մ չափերի), որը հարավային ողջ ճակատով բացվում է դեպի Թարթառի ձորը: Հին լուսանկարներից երևում է, որ այս պատշգամբ-սրահի ծածկը հենվել է հարավային կողմի երեք փայտե սյունների վրա: Երկրորդ հարկը միայն մեկ մուտք ունի, որը բացվում է դեպի արևելյան սենյակը: Ինչպես թաղածածկ սենյակները, այնպես էլ բաց սրահն ունեն բուխարիներ և տնտեսական նշանակության որմնախորշեր: Սենյակները հարավից ունենել են փայտե պատշգամբներ, որոնք շին պահպանվել: Կան դեպի այդ պահուսակային պատշգամբները տանող դռները՝ փայտե բարավորներով:

Հայկական վանքերի բնակելի շինությունները երկու տիպի են: Առաջինը՝ ամենատարածվածը, ընդհանուր միջանցքի շուրջը երկուական սենյակներով շենքերն են (Տաթև, Գեղեվանք, Խոր-Վիրապ և այլն), երկրորդը՝ միատեսակ փոքր, թաղածածկ խցերն են, մեկ շարքով տեղադրված (Գանձասար, Տաթևի Մեծ անապատ)⁴⁵: Դադիվանքի շենքը տարբերվում է թե՛ մեկից և թե՛ մյուսից, և լինելով բնակելի, միաժամանակ զուգակցում է իջևանատան ճարտարապետության առանձինհատկությունները (վերևում սրահ-պատշգամբ, ներքևում թաղակապ բաց սրահ՝ զրատների պատսպարման համար): Մեր կարծիքով Դադիվանքի այս շինությունը ծառայել է որպես հյուրատուն, որի գոյության մասին դեռ XIII դ. կա որոշակի հիշատակություն. Կաթողիկեի արևելյան ճակատի արձանագրություններից մեկում նշվում է, որ Չարաբերդի Ներսես եպիսկոպոսը 1253 թ. Դադիվանքի հյուրատանը այգի է նվիրում⁴⁶:

Հայաստանի խոջոր վանքերն ունեին հյուրատների առանձին շենքեր՝ ուխտավորների համար: Դրանք մեծ մասամբ վանքի պարսպի ներսում էին տեղադրված (Գեղարդ, Խծկոնք, Բագնայր, Շատիվանք, Հոռոմոս), հազվադեպ՝ պարսպից դուրս (Սանահին, Հովհաննավանք): Հյուրատները եղել են ձգված ուղղանկյուն շենքեր, որոնց ոչ մեծ սենյակները դուրս են եկել ընդհանուր փայտի պատշգամբ, ընդ որում երկհարկանի հյուրատների ներքևի

45 Մ. Մ. Հասարթյան, Սյունիքի XVII—XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Եր., 1973, էջ 98—107:

46 Գիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 204:

հարկը սովորաբար ծառայել է տնտեսական նպատակներին⁴⁷։ Այժմ այդ վանական հյուրատներին և ոչ մեկը կանգուն չէ ու Դաղիվանքի այս շենքը մեծարժեք է ներկայացնում միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության քիչ հայտնի այս տիպի կառուցվածքների հորինվածքի առանձնահատկություններին ժանոթանալու համար։

Պետք է նշել, որ Դաղիվանքի հյուրատունը մեզ է հասել ոչ առանց վերակառուցման⁴⁸։ Պարզորոշ երևում է, որ երկրորդ հարկի պատերի շարվածքի ձևը տարբերվում է առաջին հարկի կառուցման եղանակից։ Սակայն ակնհայտ է, որ վերակառուցման ժամանակ կրկնվել է հյուրատան երկրորդ հարկի նախնական ձևը. հարավային ճակատում անկյունային սենյակները պատերի ստորին մասերում պահպանվել են սկզբնական՝ XIII դ. շարվածքից՝ 2—3 շարք։ Վերակառուցումը տեղի է ունեցել, հավանաբար, XVII դարում, որովհետև երկրորդ հարկի կամարակապ մուտքը ունի Հայաստանի ուշ միջնադարին բնորոշ ձևեր և մանրամասներ։

Պալատական շենքի և հյուրատան այս համալիրից հյուսիս-արևմուտք գտնվում է ոչ մեծ (3,8×7,15 մ ներսի չափերով) ուղղանկյուն, թաղածածկ մի կառուցվածք, բուխարիով և բազմաթիվ «պատրհաններով»։ Ճարտարապետական ձևերից ելնելով այն կարելի է թվագրել XIII դարով։ Շենքի նշանակության մասին կարելի է խոսել միայն ենթադրաբար։ Ավելի հավանական է, որ այն վանահոր բնակարանը եղած լինի։ Դաղիվանքից հյուսիս, լեռան լանջին կան երեք փոքրիկ մատուռների ավերակներ։ Վանքից, հարավ-մինչև Թարթառի գետափը տարածված է եղել վանքի այգին, որտեղ կան բնակելի խցերի ավերակներ։

Դաղիվանքի համալիրը, որը Հայաստանի ամենախոշոր ճարտարապետական անսամբլներից մեկն է, աչքի է ընկնում շենքերի տիպաբանական բազմազանությամբ։ Դա վերաբերում է, առաջին հերթին, վանքի աշխարհիկ շենքերին, որոնց թվում պալատական՝ «խրախճանյաց» դահլիճը, և հյուրատունը այդ տիպի հուշարձանների կանգուն հազվագյուտ օրինակներ են, իսկ գրատունը և սեղանատունը հայկական նման կառուցվածքների շարքում աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ։ Բարձր գեղարվեստական մակարդակով է կերտված վանքի Կաթողիկեն՝ հարուստ վիմագրությամբ և արժեքավոր հարթաքանդակներով։ Դաղիվանքի համալիրը հայկական ճարտարապետության Արցախի դպրոցի լավագույն գործերից է և միջնադարյան հայ շինարարների վարպետության բարձր մակարդակի վկայությունը։

47 Հ. Խալիպաշյան, *Նշված աշխ.*, էջ 195—197։

48 Մեսրոպ Լալիսկ. Տեր-Մովսիսյան, Հայկական արձանագրություններ, «Ազգագրական հանդես» 25 դրբ, 1913 թ., № 2, էջ 84։

Վանքի համալիրը գտնվում է Արցախի Մյուս Հաբանդ գավառում (հետագայում՝ Դիզակ), 192 Հաղբութի շրջանի Տոդ և Տումի գյուղերի միջև բարձրացող Գտիչ լեռան լանջի հարթ բացատում: Վանքը հարևան է լեռան գագաթին կանգուն, Արցախի հին և հռչակավոր Գտիչ բերդին, որը հայտնի է դեռ IX դարից՝ արաբական զորքը Բուդա ոստիկանի գլխավորությամբ ամրաներ շարունակ պաշարում է անառիկ ամրոցը, սակայն անարդյունք⁴⁹: Բերդը և վանքը, լեռան անոնով, կոչվել են հնում Քթիչ, հետագայում Կտիչ, ապա՝ Գտիչ: Վանքը հիմնադրվել է դեռ վաղ միջնադարում, որովհետև VIII դ. Պարտավի եկեղեցական ժողովին մասնակցում է Գտչավանքի ներկայացուցիչը⁵⁰: Սակայն մեղ հասած շենքերը՝ երկու եկեղեցին, գավիթը և բնակելի սենյակները ավելի ուշ շրջանի՝ XII—XIII դդ. կառույցներ են: Գլխավոր՝ գմբեթավոր եկեղեցին, ըստ հյուսիսային պատի (ներքուստ) շինարարական արձանագրության, կառուցել են Ամարասի հպիսկոպոսներ, հղբայրների Տեր Սարգիսը և Տեր Վրթանեսը 1241—1246 թթ.⁵¹: Գտչավանքը միջնադարում հղել է նաև մշակութային կենտրոն՝ այստեղ հղել են, գրչատուն և մատենադարան⁵²: Վանքը գործել է մինչև XIX դարը, 1868 թ. երկրաշարժից վնասվելուց հետո լքվել է և ամայացել⁵³:

* * *

Վանքի գլխավոր եկեղեցին, որը կառուցված է սպիտակ ֆելզիտի մաքուր տաշած քարերից, ունի հայ ճարտարապետության ստեղծած և միջնադարում տարածված գմբեթավոր դահլիճի հորինվածք: Քառակուսուն մոտ ու մեծ աղոթասրահը (5,80×6,25 մ) շլատվում է միայն մեկ դույզ, երկայնական պատերից զգալի դուրս եկող (1,15 մ) հզոր մույթերով:

Եկեղեցու դահլիճն արևելքից ավարտվում է կիսաշրջանաձև հատակագծով խորանով, որի երկու կողմում երկհարկանի ավանդատներ են: Նրանք ուղղանկյուն են, թաղածածկ, փոքր խորաններով, որոնք եկեղեցու արևելյան

49 Թովմա Արծունի և Անանու, Պատմություն Արծունյաց տան, Եր., 1978, էջ 191—197:

50 Մովսեսի Կաղանկատվացո Պատմություն Աղվանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 343:

51 Դիվան հայ վիճագրության, պրակ 5, Պ. Բարխուդարյան, Արցախ, Եր., 1982, էջ 182:

52 Լ. Խաչիկյան, ԺԵ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Եր., 1955, էջ 285. մասն Բ, Եր., 1958, էջ 228. մասն Գ, 1967, էջ 490:

53 Մ. Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 80—82:

ճակատում լուսամուտներ ունեն: Առաջին հարկի ավանդատների մուտքը դահլիճից է, իսկ երկրորդ հարկ կարելի է բարձրանալ խորանից՝ քարե աստիճաններով:

Գտչավանքի գլխավոր եկեղեցու մուտքը արևմտյան ճակատում է և բացվում է այդ կողմից նրան կից դավթի մեջ: Դռան ուղղանկյուն բացվածքը ներառված է հարուստ մշակում ունեցող շքամուտքի մեջ: Վերջինիս կիսազանիկներից բաղկացած կրկնակի կամարը հանգչում է կիսասյունիկների փնջերի վրա, որոնք ունեն գնդաձև խորիսխներ և խոյակներ: Շքամուտքին ման լուծումը կրկնում է հայկական ճարտարապետության X—XI դդ., հատկապես Շիրակի եկեղեցիների շքամուտքի ձևերը:


Եկեղեցին ունի հարուստ հարդարանք: Հյուսիսային, արևելյան և հարավային ճակատները մշակված են զույգ, եռանկյունաձև կտրվածքով խորշերով: Երկայնական պատերի խորշերի կիսակոնաձև վերջավորությունները հովհարաձև ակոսներ ունեն, որոնցից զուրկ են արևելյան պատի խորշերը: Հարավային պատի լուսամուտի ուղղանկյուն բացվածքն ունի պարզ տրամատով (կիսազանիկներից կազմված) շրջանակ: Արևելյան պատի լուսամուտի ուղղանկյուն բացվածքն ունի այսպես կոչված «սելջուկյան շղթայից» բաղկացած շրջանակ, որից վերև նուրբ, հյուսածո դարդաքանդակներով խաչ է գտնվում: Եկեղեցու գմբեթի թմբուկը դրսից գլանաձև է և բավական սլացիկ համաչափություններ ունի: Գմբեթն իր բարձրությամբ (թմբուկը և վեղարը միասին) հավասար է եկեղեցու հիմնական ծավալի բարձրությանը և իր չափերով ողջ կառուցվածքի տարածական հորինվածքի գերիշխող տարրն է: Նման ձգված համաչափություններով թմբուկ հայ միջնադարյան ճարտարապետության մեջ հազվադեպ է կիրառվում: Նրա բարձրությունը և արտաքին համար ստորին մասում թմբուկի պարագծով գոտի է տարված, որը նույնպես բացառիկ երևույթ է նույնատիպ հուշարձաններում:

Գտիչում թմբուկի վեղարը հովանոցաձև է: Գմբեթի այսպիսի ծածկը X—XI դդ. ավանդական ձևի արտացոլումն է՝ հովանոցաձև վեղարը բնորոշ էր Բագրատունյաց Հայաստանի եկեղեցիներին:

Ընդհանրապես իր ծավալատարածական հորինվածքով և մանրամասներով Գտչավանքի գլխավոր եկեղեցին խիստ հարազատ է Բագրատունյաց Հայաստանի գոյություն ունեցող կազմավորված հայկական ճարտարապետության Անիի դպրոցին: Այս պատի վրա դեռ ժամանակին ուշադրություն է դարձրել Լեոն⁵⁴:

Այդ նմանությունն իր արտահայտությունն է գտել ոչ միայն Գտչավանքի եկեղեցու արտաքին տեսքում, այլև ներսի հարդարանքում: Խորանի առաջամասի հարթոլթյունը ունի իր կրաչափական հարթաքանդակ

⁵⁴ Լեո, Իմ հիշատակարանը, Շուշի, 1885, էջ 247:



9. Կոչականք (XIII դ.): Գլխավոր հատակագիծ

խոր փորագրված եռանկյունիների ֆոնի վրա ջյցուն երևում են շեղանկյուն-
ներ և բազմանկյուններ (վեցանկյուն): Բնմի առաջամասի այսպիսի հար-
դարանքը, երբ այն առանձին ձևավոր քարերից կազմված խճանկար է հի-
շեցնում, տարածված էր ինչպես Հայաստանի XIII դ. վանական գլխավոր
եկեղեցիների շքամուտքերի ճակատաքարերի, այնպես էլ բնմերի պատերի
ձևավորման մեջ: Այսպես են հարդարված, օրինակ, Նորավանքի ս. Գրի-
գոր, Վանաստանի (Իմիրզեկ) եկեղեցիների խորանների առաջամասերը: Շե-
ղանկյուններով քանդակված մուտքերի ճակատակալ քարեր և խորանի առա-
ջամասեր կան Հովհաննավանքում, Աղջոց վանքում, Սաղմոսավանքում և
այլն:

Գտնվածքում բնմի առաջամաս պատի քիվը ունի նուան ոճավորված
քանդակների մի գոտի: Այն իր կատարման ձևով բավական ինքնատիպ է
միջնադարյան հայ արվեստում:

Եկեղեցու գմբեթակիր անկյունները ձևավորված են կիսասյուների ձևով
և ունեն պարզ խոյակներ՝ սալիկից և կիսապլանիկից կազմված: Խոյակները
շարունակվում են կիսաշրջանաձև, խորանի ողջ պարագծով որպես գոտի և
զգալի աշխուժացնում են եկեղեցու ներսակողմի տեսքը:

Գտնվածքի գլխավոր եկեղեցուն արևմուտքից կից գավիթը կառույ-
ված է կոպտատաշ բազալտից, կրաշաղախով: Այն ուղղանկյուն, թաղա-
ծածկ շինք է, որն իր հատակագծային հորինվածքով համարյա նույնու-
թյամբ կրկնում է Գնդեվանքի գավթի (X դ.) հատակագիծը: Արևելքից արև-
մուտք ձգված ուղղանկյուն դահլիճը (6,95×9,0 մ շափերով) հյուսիսային
մասում կանգուն մոտավորապես T-աձև հզոր մույթով և նրա վրա արևել-
քից ու արևմուտքից հանդուղ կամարներով բաժանվում է երկու թաղածածկ
անհավասար հատվածի: Նրանցից հյուսիսայինը բավական նեղ է (1,4 լայ-
նությամբ) և ձգված, իսկ հարավայինը՝ հիմնականը, համեմատաբար ըն-
դարձակ է և փաստորեն բուն գավթի դերն է խաղում:

Գտնվածքի գավթի հորինվածքի նման հնավանդ լուծումը, երբ այն
կրկնում է Արցախին հարևան Սյունիքում դեռևս X—XI դդ. մշակված պարզ,
թաղածածկ դահլիճներին (Գնդեվանք, Վահանավանք, Քարկոփ) պատճառ
է դարձել այն սխալամբ համարել վանքի մեղ հասած հնագույն կառույ-
վածքը⁵⁵: Սակայն գավիթը հաջորդել է ինչպես վանքի գլխավոր, այնպես
էլ երկրորդ եկեղեցուն: Գավթի համար որպես արևելյան պատ է ծառա-

55 Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բագու, 1855, էջ 81:

լում գլխավոր եկեղեցու արևմտյան պատը, միայն վերջինիս հյուսիսային մասում խոշոր որմնասյուն է կցվել՝ գավթի ծածկն իրականացնելու համար: Իսկ հյուսիսից որպես գավթի բավական մեծ որմնախորշի արտաքին պատ օգտագործված է վանքի երկրորդ եկեղեցու հարավային ճակատը:

Գտիչի գավթը շունի հարդարանքի տարրեր: Ներսում ուշագրություն է գրավում միայն հարավ-արևելյան կողմում, եկեղեցու արևմտյան պատին կից դրված, շքեղ քանդակազարդ խոշոր խաչքարը, որը բաց արձանագրության կանգնեցրել է եկեղեցու կառուցողներից մեկը՝ Տեր Վրթանեսը 1246 թ.⁵⁶:

Խաչքարն ունի լայն, ուղղանկյուն շրջանակ, կազմված կիսագլանիկներից և սալիկից: Այս շրջանակի պատճառով, որը բնագրկում է խաչքարը երեք կողմից, Ս. Բարխուդարյանը այն անվանում է «որմնափակ» և տարակուսում, որ «...շենքի ներսում որմնափակ խաչքար է կանգնեցվում»⁵⁷: Սակայն խաչքարը դրվել է եկեղեցու ավարտման տարին, երբ գավթը դեռևս չկար և կոթողը կանգնած է եղել բաց երկնքի տակ:

Գավթն ունի երկու դուռ: Գլխավորը արևմուտքից է, հիմնական դահլիճի առանցքով: Մի այլ դուռ էլ բացվում է շենքի հյուսիս-արևելյան անկյունից դեպի վանքի երկրորդ եկեղեցին:

Գտիչի երկրորդ եկեղեցու ճարտարապետությունը ունի ուշագրավ առանձնահատկություններ՝ նրա բավական պարզ հորինվածքի դեպքում: Այն շինված է կոպտատաշ բազալտից, կրաշաղախով: Արևելքից արևմուտք ձգված թաղածածկ դահլիճ է (այժմ ծածկը քանդված է), հարավային պատով կից վանքի գլխավոր եկեղեցուն և գավթին: Աղոթասրահը (4,4×6,34 մ) արևելքից ավարտվում է խորանով, որն հատակագծում ուղղանկյուն է (4,4×2,3 մ ներսի շափերով): Խորանը թաղածածկ է և աղոթասրահից անջատվում է լայն կամարով: Խորանի ուղղանկյուն ձևն այստեղ զուգակցված է մի այլ առանձնահատկության հետ, որը բացառիկ է միջնադարյան հայ ճարտարապետության մեջ: Դա զույգ ավանդատների իրականացման ձևն է՝ նրանք գտնվում են խորանի հատակի տակ և աստիճաններ ունեն աղոթասրահից: Ավանդատները փոքր են (1,05×1,20 մ), ուղղանկյուն ու թաղածածկ և կից են եկեղեցու երկայնական՝ հյուսիսային և հարավային պատերին:

Գտչավանքի երկրորդ եկեղեցին, գավթի պես, շունի հարդարանք: Միայն արևմտյան կամարակապ դռան վերևում ազուցված են եղել երեք ոչ մեծ խաչքար (տեղում պահպանվել է այժմ մեկը), որոնք եկեղեցու գլխավոր մուտքի զարդարման միակ տարրերն են: Որպես դռան ուղղանկյուն բացվածքի բարավոր խաչքար է օգտագործված, որի քանդակազարդ երեսը դեպի դուրս է դրված:

⁵⁶ Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 184:

⁵⁷ Նույն տեղում:

Գաշի վանքի Երկրորդ եկեղեցու կառուցման ժամանակը հայտնի չէ։ Սակայն այն նախորդել է գլխավոր եկեղեցուն և գավթին ու իր ճարտարապետությունը առնչվում է Արցախի XII—XIII դդ. ուղղանկյուն խորանով եկեղեցիներին։

Համալիրի արևմտյան կողմում պահպանվել են վանքի թաղածածկ բնակելի և բեր սենյակների ավերակները։

Խ Ա Ք Ր Ա Վ Ա Ն Ք

Միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական ու մշակութային կենտրոններից համարվանքը⁵⁸ դանվում է Արցախի Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից արևմուտք, Թարթառ գետի աջ ափի մի դժվարամատչելի անտառապատ լեռնահարթակի վրա։ Արձանագրություններում և պատմիչների մոտ վանքն անվանվում է հաղավանք կամ հաղարի վանք, որը ժողովրդական արտասանությամբ վերածվել է համարվանքի։ Անունը ծագել է Թաղևոս առաքյալի հաղ աշակերտի անունից, որը եղել է Արցախում քրիստոնեություն քարոզող հայ առաջին հոգևորականներից մեկը⁵⁹։

համարվանքը հիմնադրված լինելով դեռ վաղ միջնադարում, XII դ. դարձավ Արցախի Ծարի իշխանության հոգևոր կենտրոնը և տապանատունը։ Վանքը տուժել է 1139 թ. երկրաշարժից և ավերվել 1143 թ. սելջուկ-թուրքերի ասպատակություններից։ համարվանքի վերաշինումը կապված է Հայաստանի XII—XIII դդ. կրոնական խոշոր գործիչ Հովհաննես հաղևանցու անվան հետ։ Նա եղել է ամիրսպասալար Սարգիս Զաքարյանի որդիների՝ Զաքարեի ու Իվանի գաստիարակը, XII դարի 70—80-ական թվականներին եղել է Սանահնի, իսկ 90-ական թթ.՝ Հաղբատի վանահայրը։ Մոտավորապես 1195—1205 թթ. ընկած ժամանակամիջոցում Հովհաննես հաղևանցին լինում է Արցախում և 1204 թ. կառուցում է համարվանքի ս. Աստվածածին եկեղեցին, որն անփոփոխ հասել է մեզ։ Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Հովհաննես հաղևանցու շինարարական արձանագրությունը, որը սկզբվում է հետևյալ խոսքերով՝ «Ի ՈՄԳ ԹՈՒԻՍ ԵՍ ՏՐ ՅՈՂԱՆԷՍ ՇԻՆՅՅԻ ԶԵԿԵՂՅԵՍ ԵՒ ԺՈՂՈՎԵՅԻ ԶԽԱԶ ԵՒ ԶԳԻՐՔ»⁶⁰ (արձանագրությունը այժմ պահվում է Երևանում՝ Մատենադարանում)։ Պարզվում է, որ Հովհաննես հա-

58 Տե՛ս Բ. Ուրարյան, Մ. Հասարյան, Խաղավանք-համարվանք, «Հայկազյան հայագիտական հանդես» հատոր Ժ, Բեյրութ, 1982—1984։

59 Հ. Շահխարունյանց, Ստորագրություն Կաթողիկե էջմիածնի և հինգ գավառացի Այրարատ, հ. Ա, էջմիածին, 1842, էջ 163։

60 Գիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 121։

շենեցիին կառուցելով Խաթրավանքի եկեղեցին, այստեղ է հավաքում Խաչ-
քարեր ու ձեռագրեր, որի շնորհիվ վանքը դառնում է միջնադարյան Հայաս-
տանի մի ուշագրավ գրագարան և քարեդարան-թանգարան: Խաթրավանքի
մատենագարանը հետագայում հարստացել է ինչպես տեղի գրչատան ձեռ-
ագրերով, այնպես էլ դրսից ձեռք բերված գրքերով⁶¹:

1226 թ. իշխանուհի Գոփը կառուցում է եկեղեցուն հյուսիսից կից մա-
տուռը և գավիթը (չի պահպանվել): Վանքի շինությունները նորոգվել են
XII—XIII դդ. սահմանագլխին իշխան Գրիգոր Բ-ի և նրա կին Ասիայի կող-
մից, այնուհետև ուշ միջնադարում՝ 1691 թ., Խաթրավանքի վարդապետներ
Հովհաննեսի, Բարսեղի, Աթանասի և Ղազարի նախածեղծությունով⁶²:


* * *

Խաթրավանքի շենքերը համալիրի տարածքի սահմանափակ չափերի
պատճառով միմյանց բավական մոտ են տեղադրված, միաժամանակ տե-
ղանքի զգալի թեքություն պատճառով նրանք կառուցված են տարբեր բարձ-
րության հարթակների վրա: Հրվանդանի գագաթին գտնվում են ս. Աստվա-
ծածին եկեղեցին, զանգակատունը, դարպասը, խցերը, նրանցից ներքև
բնակելի մեծ շենք է, ամենացածր հարթակի վրա՝ աշխարհիկ մի այլ կա-
ռուցվածք (գրատունը): Այս երկու շենքերը, տեղանքի թվադրանքով, եկե-
ղեցու նկատմամբ շեղ են դրված և ձգվում են հարավ-արևելքից հյուսիս-
արևմուտք: Վանքի բոլոր շենքերը կառուցված են կոպիտ մշակված բազալ-
տե քարերից, կրաշաղախով, միայն եկեղեցու անկյունները, սյուները, կա-
մարները, մուտքի շրջանակը շարված են սրբատաշ բազալտից: Համալիրի
հիմնական շենքերը համեմատաբար լայլ են պահպանվել (միայն տեղ-
տեղ թափված են հրեհատման և եկեղեցու քիվի որոշ քարեր), սակայն
լրիվ քանդված են բնակելի խցերը, որոնց հիմնապատերն են սոսկ մնացել:

Համալիրի հարավային մասում կանգուն եկեղեցին իր ճարտարապե-
տությունով զգալի տարբերվում է միջնադարյան Հայաստանի մյուս բոլոր
եկեղեցիներից՝ այն ունի բարդ կազմություն և փաստորեն բաղկացած է երեք
եկեղեցիներից, որոնք, սակայն, մի օրգանական ամբողջություն են կազ-
մում: Այդ եկեղեցախմբի բաղկացուցիչ տարրերն են երկու միանման, թա-
ղածածկ մատուռները և նրանց միջև կառուցված քառասյուն զմբեթավոր
եկեղեցին (շինված 1204 թ. Հովհաննես վարդապետի կողմից): Մատուռ-
ներից հյուսիսայինը նվիրված է ս. Պրոկոպիոսին, հարավայինը՝ ս. Մինա-

61 Ա. Մաքսույան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: ԺԳ դար, Եր., 1984, էջ
228—229:

62 Գիվան հայ վիմադրության, պրակ 5, էջ 126—129:



10. Խաթրավանք (XIII դ.): Գլխավոր հատակագիծ

սին⁶³, Հուշարձանախմբի շինարարական-ճարտարապետական հետազոտությունը ցույց է տալիս, որ մատուռները Զախորդել են եկեղեցու կառուցմանը: Նրանք ունեն պարզ կառուցվածք՝ արևելքից-արևմուտք ձգվող թաղածածկ, ոչ մեծ դահլիճներ են (2,2×3,5 և 2,4×2,5 լափերի), որոնք արևելքից ավարտվում են ուղղանկյուն խորաններով: Վերջիններս ունեն եկեղեցիների աղթասրահների լայնությունը և դահլիճներից անջատվում են որմնասյուներով և նրանց միջև ձգվող կամարով:

Խաթրավանքում եկեղեցին շինելիս պահպանել են այս մատուռները,

63 Ս. Զալախանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մ. Ա, Տիղիս, 1842, էջ 205:

Երանց ներառնելով նորահառույց տաճարի հատակադժային և ծավալա-տարածական հորինվածքներում: Այդ է պատճառը, որ վանքի եկեղեցին ունի բավական յուրօրինակ ճարտարապետություն, որն արտահայտվում է ինչպես նրա ասիմետրիկ հատակադժում, այնպես էլ արտաքին կերպարում: Այն քառասյուն գմբեթավոր կառուցվածք է, բնդ որում գմբեթը տեղադրված է ոչ թե դահլիճի մեջտնդում, ինչպես ընդունված էր Հայաստանի նույնատիպ հուշարձաններում, այլ արևմտյան կողմում: Դա պետք է բացատրել միանավ մատուռների առկայությամբ, ընդ որում նրանք ներառնված են եկեղեցու մեջ ոչ թե ամբողջովին, այլ ծավալների կիսով չափ՝ այնպես, որպեսզի մուտքերը բացվեն դեպի եկեղեցու դահլիճը: Վերջինս արեկելքից ավաբտվում է բեմի կիսաշրջանաձև խորանով, որի միայն հյուսիսային կողմում կա ավանդատուն: Այն ուղղանկյուն է, թաղածածկ և վերեում ունի թաքստոց, որի մուտքը ավանդատան հարավային պատի խորշից է:

Սովորաբար քառամուկ գմբեթավոր եկեղեցիների ներքին տարածությունը սյուների միջև գանվող կամարներով բաժանվում է ինը հատվածի: Սակայն խաթրավանքում հարավ-արևելյան հատվածը լրիվ զբաղեցնում է հարավային Քատուրը, իսկ հյուսիսային մատուռի ծավալը գրավում է հյուսիս-արևելյան հատվածի կեսից ավելին, որի պատճառով այն վերածվել է նեղ միջանցքի, որ բացվում է մատուռի միակ՝ հարավային կողմում տեղադրված դուրը: Հետաքրքրական է այդ հատվածների ծածկի ձևը՝ այն հիմնականում քառորդ գլանի կտրվածք ունեցող թաղով է իրականացված: Բացառություն են կազմում կենտրոնական, կիսաշրջանաձև թաղով ծածկված հարավային և արևելյան հատվածները: Վերջինս ունի առագաստային փոխանցումով ուռուցիկ ծածկ, որը, սակայն, արտաբուստ շենքի ծավալում չի արտահայտվում: Ինչ վերաբերում է կենտրոնական հատվածին, ապա այստեղ գմբեթն է, որն իր լուծումով եկեղեցիների համար եղակի է և փոխառված է հայկական ճարտարապետության ստեղծած դավիթների ու ժամատների գմբեթների ձևից: Գմբեթակիր կամարների միացման անկյուններում տեղադրված առագաստների միջոցով գմբեթատակ քառակուսին վերածվում է ութանկյունի, որի վրա բարձրանում է ներսից ութակող, գագաթում բավականին մեծ երդիկով գմբեթը: Երդիկը աղոթասրահի լուսավորության հիմնական աղբյուրն է, որովհետև բացակայում է լուսամուտներով թմրուկը, իսկ եկեղեցու արտաքին պատերում լուսամուտները սակավաթիվ են և բավական նեղ:

Հայկական եկեղեցական ճարտարապետության համար գմբեթի այս անսովոր ձևի (առանց թմրուկի) խաթրավանքում կիրառման գաղտնիքը բացատրվում է եկեղեցին կառուցող անձնավորության կենսագրության մի կարևոր փաստով՝ Հովհաննես վարդապետը մինչև խաթրավանք տեղափոխ-

վելը եղել է Սանահնի վանքի առաջնորդը և այնտեղ կառուցել է Ամենափրկ-
 կիչ եկեղեցին և նրա դավիթը (1181 թ.)⁶⁴, իսկ Սանահնի դավիթը հայ ճար-
 տարապետության պատմության մեջ նշանավոր է նրանով, որ այնտեղ առա-
 ջին անգամ ձևավորվում են շորս հենակետերով դավիթների ծավալա-տա-
 րածական լուծման նոր սկզբունքները: Սանահնի, ավելի ուշ կառուցված
 Գողթվանքի (1197 թ.) և Կեչառիսի դավիթներում (XII դ. վերջ. XIII դ.
 սկիզբ) հանդես է գալիս ծածկի քառաձև կտտն ձևը և համարյա վերահնում է
 գմբեթի թմբուկը⁶⁵: Այս նույն երևույթին հանդիպում ենք նաև Խաթրավան-
 քում: Հովհաննեսը Խաթրավանքի եկեղեցում կիրառել է ոչ միայն Սանահնի
 դավիթի գմբեթի ձևը, այլև դավիթներին բնորոշ գմբեթակիր սյուներ, այն-
 դեպքում, երբ հայ ճարտարապետության շորս հենակետերով բոլոր զրմ-
 բեթավոր եկեղեցիներն ունեն մույթեր և ոչ թե սյուներ: Սակայն Խաթրա-
 վանքում սյուներն իրենց ձևով տարբերվում են դավիթների և ժամատների
 սյուներից, որոնք զանգվածիկ են, միակտոր քարից և կտրվածքում շրջա-
 նաձև են կամ բազմանիստ⁶⁶:


Խաթրավանքի արևմտյան կողմի սյուները կտրվածքում ուղղանկյուն
 են, երկու կողմից կիսաշրջան կցված, հյուսիս-արևելյան սյունը քառակուսի
 է, շորս անկյունները երեք քառորդ շրջաններով մշակված: Իսկ հարավ-
 արևելյան սյան փոխարեն ուղղանկյուն որմնամուկ է՝ հաված հարավա-
 լին մատուռի պատին: Սյուները նստում են ոչ թե խարիսխների, այլ բարձր
 պատվանդանների վրա, ընդ որում հյուսիս-արևելյան սյան պատվանդանը
 մյուսների համեմատ կրկնակի բարձր է և հավասար սյան բարձրությանը:
 Սյուներն ունեն խոշակներ, բաղկացած սալիկից, կրնկաձև միջին մասից և
 կիսազլանիկից: Հետաքրքիր է, որ Խաթրավանքի խոշակների ձևն ունեն Գա-
 ղիվանքի պալատական դահլիճի սյուների խոշակները, կառուցված Խաթրա-
 վանքից բնդամենը յոթ տարի հետո և վերջինիս ճարտարապետական ձևերի
 ակնհայտ ազդեցությամբ⁶⁷: Ուշագրքով են պատվանդանների վրայի քան-
 դակները: Հարավ-արևմտյան սյան պատվանդանի հյուսիսային երեսին առ-
 լուծի գլխի ոճավորված քանդակ է, հյուսիս-արևելյան սյան պատվանդանի
 արևմտյան երեսին՝ խոյի, որմնամուկի դեպի գմբեթատակ տարածությունը
 նայող կողմին՝ հզան գլուխներ, իսկ որմնամուկի պատվանդանի արևմտյան
 երեսին՝ օղակաձև զալարածե զույգ օձեր: Կենդանակերպ այս քանդակները
 պահպանիչ խորհրդանշաններ են և բավական տարածված են հայ ճարտա-

64 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանադրությունները, Եր., 1957, էջ 27:

65 С. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, с 43—53.

66 նույն տեղում:

67 Բ. Ուլուբարյան, Մ. Հասրարյան, Գաղիվանք, Հայկազյան հայագիտական հանդես,
 Բնիտթ, Ը, 1980:



0 5

11. Խաչքաղանքի ու Աստվածածին եկեղեցու (1204 թ.) կտրվածքը

բապետութեան մեջ⁶⁸: Պատվանդանների անկյունները, խորանի կամարակապ խորշերից եղբայրները ունեն ստալակտիտային քանդակներ: Ընդհանուր առմամբ խաթրավանքի ղեկորատիվ հարդարանքը շատ գույսա է: Նշված քանդակներից, սյուների խոյակներից բացի ղեկարվեստական մշակում (ընդ որում շատ համեստ) ունի եկեղեցու զլխավոր՝ արևմտյան մուտքը) որի դռան ուղղանկյուն բացվածքը ներառված է կամարակապ վերջավորութեամբ խորշի մեջ, կողերը մշակված կիսասյունիկներով: Մակայն խաթրավանքի արտաքին ճակատների հարդարանքի կարևոր տարրեր պետք է համարել այն բազմաթիվ խաչքարերը, որոնք տեղադրվել են շարվածքի մեջ և զույլի աշխուժացնում են պատերի մակերեսները:

Եկեղեցին ունի համարյա խորանարդաձև ծավալ. շխան ճակատներ, պատերն ավարտվում են միեկուս բարձրութեան վրա և տանիքը լուծված է եղել բրգաձև, ընդ որում մատուռները ծածկվել են եկեղեցու տանիքի լանջերի շարունակութեամբ: Եկեղեցին ունեցել է կղմինդրե ծածկ՝ ինչպես տանիքին, այնպես էլ շինքի շտրջը թափված կան բազմաթիվ կղմինդրներ (միայն մեկ տիպի՝ կիսադլանաձև): խաթրավանքը հարուստ է արձանագրութուններով՝ շինարարական, նվիրատվական և այլն: Արձանագրութուններից պարզվում է միջնադարյան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի հետաքրքիր մանրամասն՝ շինքի առանձին մասերը (սյուն, կամար, բեմի սեղան) շինվել են առանձին մեկեկանսների միջոցներով⁶⁹:

խաթրավանքի եկեղեցուն կից, նրա հյուսիսային ճակատի արևմտյան կողմում, այդ կողմի դռան դիմաց, կառուցված է վանքի զանգակատունը: Այն շինել է XIV դ. առաջին քառորդում Վահրամ իշխանի որդի Սարգիս եպիսկոպոսը, որը կառուցել է նաև Դադիվանքի, Գետամեջի, Մար գյուղաքաղաքի զանգակատները⁷⁰: Եկեղեցուն հյուսիս-արևմուտքից կից է Դոփ իշխանուհու կառուցած ուղղանկյուն, քառորդ զանի կտրվածք ունեցող թաղով ծածկված մատուռը, որի հյուսիսային կողմում բարձրանում է զանգակատունը: Մատուռի կտուրին, զանգակատան և եկեղեցու միջև կանգնեցվել են երկու ղեղաքանդակ խաչքար, 1219 և 1220 թթ. արձանագրութուններով⁷¹:

Զանգակատունը խաթրավանքում ուղղանկյուն, սլացիկ համաշափություններով աշտարակ է, որի առաջին հարկը թաղածածկ դարպաս է, իսկ

68 Ս. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակագործության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1970, № 3:

69 Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բագու, 1895, էջ 194—195:

70 Նույն տեղում, էջ 207:

71 Դիվան հայ վիմագրութեան, պրակ 5, էջ 126:

Ներկորոգ հարկն ունի արևմտյան կողմում կամարակապ մեծ խորշ, որանդ կախվել են զանգերը:

Հայաստանի XIII—XIV դդ. զանգակատները չունեին կանոնիկ մշակված ճարտարապետական ձև, որի պատճառով ամեն մի վանքում նրանք լուծված են տարբեր և ինքնատիպ⁷²: Տարբեր է և նրանց տեղադրությունը՝ սովորաբար զանգակատները կանգնեցվել են եկեղեցիների արևմտյան կողմում, սակավ՝ հարավային: Խաթրավանքում հյուսիսային տեղադրությունը եզակի է (Գոշավանքի հյուսիսային կողմում զանգակատունը սկզբնապես գրատան շենք է եղել, Գորայրում այն նույնպես հյուսիսային կողմում է, սակայն կանգնած է առանձին, եկեղեցուց որոշ հեռավորության վրա): Զանգակատների առաջին հարկը, եթե նրանք եկեղեցուն արևմուտքից կից են կառուցված, սովորաբար կամարակապ բաց սրահ է և ծառայում է որպես անցում դեպի եկեղեցու գլխավոր մուտքը: Առանձին կանգնած զանգակատներում առաջին հարկերը տարբեր նշանակություն են ունենում (մատուռ, դամբարան, գրատուն, դարպաս և այլն): Դարպասի և զանգակատան զուգակցման մյուս հայտնի օրինակը Կաբբիում է, որտեղ ըստ շինարարական արձանագրության 1338 թ. շինված զանգակատան (վերին մասը վերականգնված է XVII դ.) առաջին հարկը դարպաս է: Սակայն Կարբիում երկրորդ հարկը եկեղեցի է, որի վրա բարձրանում է սյունաշար զմբեթը: Խաթրավանքի զանգակատունն իր կերպարով ավելի նմանվում է Թպիտակավոր Աստվածածին վանքի պարսպի արևմտյան պատի վրա կառուցված աշտարակաձև զանգակատանը (այն տարբերությամբ, որ այստեղ կամարակապ խորշը միջանցիկ բացվածք է): Խաթրավանքում զանգակատունը հավանաբար ունեցել է երկթեք ծածկ, որն այժմ չի պահպանվել: Մուտքը դեպի երկրորդ հարկ իրականացված է հյուսիսից կից քարե աստիճանների միջոցով:

Զանգակատան դարպասը վանքի համալիրինը չէ, այլ ծառայել է որպես անցում ցածրում տեղադրված աշխարհիկ, տնտեսական շենքերից դեպի եկեղեցին: Վանքի դարպասը, այժմ կիսավեր, գտնվում է եկեղեցուց հյուսիսարևմուտք: Այն ուղղանկյուն է, թաղակապ, հյուսիսից հարավ ձգված (2,7 մ երկարությամբ):

Եկեղեցուց հյուսիս, նրա նկատմամբ թեք դրված է մի ուղղանկյուն շենք, որը պատով միջից բաժանված է երկու մասի: Նրանցից յուրաքանչյուրը հյուսիս-արևելյան պատից առանձին դռներ ունի: Շենքը կիսով չափ խրված է հողի մեջ և նրա կտուրը եկեղեցու բակի փաստորեն շարունակությունն է: Հյուսիսային՝ ավելի մեծ սենյակը, որը ծածկված է շենքի եր-

72 О. Х. Халпахчьян, Национальные особенности архитектуры армянских колоколен, «Архитектурное наследство», № 21, М., 1973.

կայնական առանցքի ուղղութիւնով ձգուող թաղով, ունի բուխարի, պատե-
րում տնտեսական նշանակութիւն խորշեր և ակնհայտորէն բնակելի նշա-
նակութիւն է ունեցել: Ելնելով նրա չափերից, որը շենքի դիբրից կարելի է
ենթադրել, որ այն եղել է վանահօր բնակարանը: Նրան կից սննդակց, ծածկ-
ված շենքի բնդայնական ուղղութիւնով ձգուող թաղով, ունեցել է օժանդակ,
տնտեսական նշանակութիւն:

Խաթրավանքում եկեղեցուց հյուսիս-արեւելք դառնում է մի խորը աշ-
խարհիկ շենք, որի նշանակութիւնը հայտնի չէ արձանագրութիւններից
կամ պատմիչների տեղեկութիւններից: Այն բաղկացած է երկու քառա-
կուսի շինութիւնից, որոնք միմյանց հաղորդակցվում են երկու կամարա-
կապ բացվածքներով: Շենքի միակ մուտքը հյուսիս-արեւմտյան պատից է:
Վանահօր շենքի նման այս կառուցվածքը նույնպես կիսով չափ խրված է
գետնի մեջ: Նրա երկու հատվածները հյուսիս-արեւելյան երկայնական պա-
տում տեղադրված մեկական փոքր լուսամուտներ ունեն: Շենքի մուտքը բաց-
վում է գեպի առանձին դահլիճը, որը ծածկված է գոցվող թաղերով և
կենտրոնում ունի խորը քառակուսի բացվածք՝ մի հսկայական երդիկ, որն
առատորին լուսավորում է դահլիճի ներսը: Երկրորդ՝ խորքի հատվածը նույն-
պես ծածկված է գոցվող թաղերով, սակայն առանց երդիկի:

Այս ինքնատիպ շենքի նշանակութիւնը որոշելիս պետք է անդրադառ-
նալ վանքի պատմութեանը և Հովհաննես վարդապետի շինարարական ար-
ձանագրութեանը՝ Խաթրավանքը XIII դ. սկզբում վերաշինվել է որպես Խա-
շենի իշխանութեան մատենադարան և թանգարան: Այստեղ հավաքվել են
Արցախի ձեռագրերը և միաժամանակ գրվել են նորերը, հետևաբար զու-
գակցվել է ձեռագրատունը մատենադարանի հետ:

Խաթրավանքի այս շենքը իր ճարտարապետութեամբ համապատասխա-
նում է միաժամանակ և գրչութեան կենտրոնին և մատենադարանին: Առա-
ջին, քառակուսի դահլիճը մեծ երդիկով նախատեսված է եղել որպես ձե-
ռագրատուն, իսկ խորը որմնախորշերով հաջորդ դահլիճը ծառայել է իբրև
մատենադարան-գրապահոց: Սա ենթադրութիւն է, բայց բավական հա-
վանական, որի համար հիմք է ծառայում հայկական միջնադարյան գրատ-
ների շենքերի առանձնահատկութիւնների համեմատութիւնը Խաթրավանքի
այս կառուցվածքի ճարտարապետական հորինվածքի հետ: Մեղ հայտնի գրատ-
ները (Սանահին, Հաղբատ, Գոշավանք, Սաղմոսավանք, Հոռոմոս, Դաղի-
վանք) գրեթե բոլորը քառակուսի են, բրգաձև ծածկով և հիմնականում եր-
դիկով լուսավորվող, պատերում խորշերով, ձեռագրերի պահպանման հա-
մար⁷³: Ահա այս բոլորն առկա են և Խաթրավանքի նույնատիպ կառուցված-
քում:

73 О. Х. Халпахчьян, Гражданское зодчество Армении (жилые и общественные здания), М., 1971, с. 155—183.

Խաթրավանքի մյուս շինքերը, պարիսպը, խցերը շին պահպանվել: Եկեղեցուց արևելք, լեռան լանջին գեո XIX դ. եղև է մի մատուռ, նրանից ցած՝ վանքի կալերը⁷⁴: Վանքի դիմաց, ներքևում, Քարթառ գետի վրա Գրիգոր իշխանի կին Ասպիան, որը Մեծ իշխան Տարսայլեհի և Մինա Խաթունի դուստրն էր, XIV դ. կամուրջ է կառուցում դեպի Խաթրավանք տանող ճանապարհին և նրա մոտ խաչքար կանգնեցնում՝ կամրջի շինարարական արձանագրությամբ (կամուրջը նույնպես այժմ չի պահպանվել):

«ԲՈՒ ԵՂՅԻ» ՎԱՆՔ

Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցի ստեղծագործական հայպերի բացահայտման համար բացառիկ նշանակություն ունի «Բուի եղցի» վանքը Հացիկ գյուղի մոտ (ԼՂՀ Մարտունու շրջան): Համալիրի հիմնական հուշարձանախումբը, որը կանգուն է բլրի դագաթին, հին գերեզմանոցի մոտ, բաղկացած է միմյանց կողքի շինված երկու եկեղեցիներից, նրանց կից ընդհանուր գավիթից և արևմտյան կողմում առանձին կառուցված երրորդ եկեղեցուց: Բուր երեք եկեղեցիներն էլ թաղածածկ դահլիճներ են, պատերի ուղղանկյուն եղրագծի մեջ ներառված արսիղով: Նրանց ծածկերի թաղերի ձևն արտասովոր է՝ այն կտրվածքում պարարտաձև է: Էստ շինարարական արձանագրության հարավային եկեղեցին կառուցված է XIII դ. (արձանագրության մեջ հիշատակվող Տեր-Հովհաննես և Տեր-Ներսես եպիսկոպոսների մասին կան տեղեկություններ՝ առաջինի՝ 1195—1235 թթ., իսկ երկրորդի՝ 1235—1260 թթ.)⁷⁵:

Սեղանաձև հատակագծով գավիթը ծածկվում է երկու զույգ խաչվող կամարներով: Կամարները սլաքաձև են, թաղը շինված է զլաքարով, գավթի ներսը սվաղված է: Գավթի միակ մուտքը հարավային պատից է: Այն փաստը, որ գավիթը դուռ չունի ավանդական՝ արևմտյան կողմից, ցույց է տալիս, որ շինքը կառուցելիս «Բուի եղցի» երրորդ եկեղեցին արդեն կանգուն էր (այն գավթի արևմտյան պատից ընդամենը չորս մետր է հեռու): Վանքի այս երրորդ եկեղեցին, ըստ արձանագրության, կառուցել է ճարտարապետ Խաչենիկ վարդապետը⁷⁶: Ունենալով միանավ դահլիճի պարզ հորինվածք և լինելով համալիրի բանկափորք կառույցը, եկեղեցին աչքի է ընկնում արևմտյան ճակատի արտակարգ հարուստ և շքեղ ձևավորումով: Խաչենիկ ճարտարապետը ճակատի ողջ մակերեսը ծածկել է թռչնակերպ, փրկաչափական քանդակներով, խաչքարերով: Շնչուված է արևմտյան

74 Մ. Բարխուդարյանց, նշված աշխ., էջ 196:

75 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 155:

76 Նույն տեղում էջ 154:

շքամուտքը՝ կիրառված են պարանահյուս քանդակներ, դռան տիմպանը ծածկված է շեղանկյունիներից կազմված ցանցով և այլն:

Վանքի շորբորդ եկեղեցին գտնվում է հիմնական հուշարձանախմբից բավական հեռու (դեպի արևմուտք) և ցած՝ բլրի ստորոտում: Այն նույնպես միանալ թաղածածկ դահլիճ է (շափերն են 6,73×4,27 մ), որի պատերը արտաքուստ շարված են սրբատաշ, իսկ ներսից՝ կոպտատաշ քարից և սըվաղված են: Մակայն, ի տարբերություն մյուս երեք եկեղեցիների, այստեղ խորանն ուղղանկյուն է: Արևմտյան ճակատի ձևավորումը նման է Խաչենիկի կառուցած եկեղեցու համանման ճակատի հարգարանքին: Միայն մուտքի տիմպանին ոչ թե շեղանկյուններով, այլ շախմատաձև հարթաքանդակ է, կենտրոնում «ծաղկած» խաչ: Մուտքից հյուսիս արձանագրությունում հիշվող «Շահեն վարդապետը», ըստ Ս. Բարխուդարյանի, եկեղեցու ճարտարապետն է⁷⁷:

«Բռի եղցիի» համալիրի կազմում են նաև ինքնատիպ հուշակոթողներ՝ երեք հսկայական հուշարձաններ, բաղկացած երկթեք ծածկով խոշոր կամարակապ խորշից և նրա մեջ ագուցված խաչքարերի խմբից: Նման կոթողները տարածված էին և Հայաստանի այլ շրջաններում, հատկապես Արցախին հարևան Սյունիքում: «Բռի եղցիի» կոթողները, կերտված XIII դ. (մեկը թվագրված է 1270)⁷⁸, իրենց ծավալային լուծումներով, մեծ չափերով ու խոր խորշերով ավելի վեհ ու տպավորիչ են:

Հարավ-արևմտյան կոթողը, 3,6 մ բարձրությամբ, ըստ արձանագրության⁷⁹, կերտել է Խաչենիկ Անեցին, համալիրի արևմտյան եկեղեցու ճարտարապետը: Հայաստանի մայրաքաղաք Անիից հրավիրված ճարտարապետի մասնակցությունն արցախյան վանքի եկեղեցու ու կոթողի կառուցմանն իր հետ բերել է շինությունների ճակատների ձևավորման մեջ «գեղատեսիլ ոճի» կիրառումն: Այս ոճի երևան գալը XII—XIII դդ. Հայաստանում կապված էր հիմնականում քաղաքային, առաջին հերթին Անիի մշակույթի հետ⁸⁰: «Գեղատեսիլ ոճի» հիմնական գծերից է բազմագունություն, հարգարանքի տարրերի ասիմետրիկության հետ միասին նաև ճակատների զարդարման շեշտակի ուժեղացումը: Այն վառ արտահայտվում է ինչպես պալատների ու եկեղեցիների, այնպես էլ հյուրատների-քարավանատների ճարտարապետության և նույնիսկ Անիի ամրոցաշինության մեջ:

⁷⁷ Դիվան հայ միմադրության, պրակ 5, էջ 154:

⁷⁸ Նույն տեղում, էջ 155:

⁷⁹ Նույն տեղում, էջ 156:

⁸⁰ А. А. Яковсон, Некоторые закономерные особенности средневековой архитектуры Балкан, Восточной Европы, Закавказья и Средней Азии, «Византийский Временник», т. 33. М., 1872, с. 172.

«Բոսի եղցի» եկեղեցում հաշնիկ Անցյին շենքի գլխավոր՝ արևմտյան-ճակատը ձևավորվել է յուրօրինակ. նրա հանդիսավորությունը ստացվել է այսպես կոչված «գորգային» հարդարանքով, խճանկարի տեխնիկայի հնարքներով լուծված: Այստեղ պատի հարթությունը ստեղծվում է առանձին խաչքարերից ու քանդակներից, սրոնք շքամուտքի հետ միասին ստեղծում են գլխավոր ճակատի դեկորատիվ հաղեցվածությունը: Եվ, չնայած, քանդակները հարթ են կատարված, սակայն հակադրվում են խոշորանիցի ոճավորված բարձրաքանդակներին, նրանց հետ հորինվածքային միասնության մեջ գտնվելով:

«Բոսի եղցի» հուշարձանախումբը, թեպետ կառույցների տիպաբանություն տեսակետից նորույթ չէր, սակայն ճարտարապետության ու քանդակագործության ինքնատիպ սինթեզով, միջնադարյան Հայաստանի ստեղծագործական դպրոցների կապերի ու նրանց փոխհարստացման փաստերի առկայությամբ կարևոր տեղ է գրավում Արցախի ճարտարապետական դպրոցում:

ԵՂԵՑ ԱՌԱՅՅԱԼ ՎԱՆՔ

ԼՂՀ Մարդակերտի շրջանում, Մռավ լեռան լանջին կանգուն Եղիշե առաքյալ վանքի համալիրը կազմված է եկեղեցիներից ու մատուռներից, բնակելի ու տնտեսական շենքերից: Վանքը հյուսիսից, արևելքից ու արևմուտքից շրջապատված է պարսպով, իսկ հարավից բնական պատենշ է խոր ձորը: Պատմական Արցախի այս հնագույն վանքը, որը հայտնի է նաև «Ջրվշտիկ» անունով, գտնվում է նշանավոր Կաղանկատույք, Տիգրանակերտ և Ուտեկան բնակավայրերի հարևանությամբ: Ըստ Մովսես Կաղանկատուցու, այստեղ ամփոփվել է Թաղեոս առաքյալի աշակերտ Եղիշեի մասունքները, որից հետո վանքը սկսել է անվանվել նաև «Եղիշե առաքյալ»: Պատմիչը վկայում է, որ «Մուրբ Եղիշայի տեսիլքով հայտնաբերված նըխարները ... փոխադրեցին Ներամիհրի սուրբ միաբանությունը, որ այժմ կոչվում է Ջրվշտիկ ... Երկար ժամանակ անցնելուց հետո Աղվանքի բարեպաշտ Վաչագան Թագավորը Եղիշայի նահատակության փոսի վրա հուշարձան կանգնեցրեց: Իսկ Թագավորի սենեկապանը, առանձնանալով այնտեղ, իր կյանքը վերջացրեց այդ հուշասյան վրա»⁸¹:

Այս տեղեկությունից կարելի է ենթադրել, որ վանքը վաղ միջնադարում հիմնվել է արդեն գոյություն ունեցող, հավանաբար հեթանոսական, հնագույն սրբավայրի տեղում: Պատմիչը այստեղ վկայում է նաև հայ եկեղե-

⁸¹ Մովսես Կաղանկատուցի, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969, էջ 8:

ցու պատմութեան համար մի շատ ուշագործով Հայաստանում V դ. սյունակայացութեան դրութեան փաստը: Կարևոր է, որ Արցախում հուշասյան վրա ճգնելը (տուլյալ դեպքում Եղիշեի նահատակութեան վայրում կանգնեցրած) ժամանակակից է V դ. սիրիական նշանավոր սյունակայացների ճգնավորութեանը: Սյունակեցութեան այլ փաստեր Հայաստանում հայտնի չեն: Սակայն, անկասկած, V—VI դդ. եղել են և այլ օրինակներ: Դրա կողմնակի ապացույցն են Արցախի հարեան Սյունիքում գտնվող վաղ միջնադարյան խոշոր հուշակոթողները, որոնց հսկայական խոյակները իրենց շափերով միանգամայն բավարար էին սյունակեցութեան համար:

Եղիշե առաքյալ վանքի վաղ միջնադարից մինչև ուշ միջնադար ունեցած մեծ հեղինակութեան վկայություններն են Վաչագան Բարեպաշտ թագավորի վանքում թաղվելը, կաթողիկոսանիստ, եպիսկոպոսանիստ լինելը, ավելի ուշ՝ նշանավոր Մելիք Ադամին այստեղ հողին հանձնելը:

Սակայն վանքի համարիբում վաղ միջնադարից մեզ ոչինչ չի հասել: Ներկայիս բոլոր շինությունները՝ թե՛ պաշտամունքային և թե՛ աշխարհիկ պատկանում են Արցախի ճարտարապետական դպրոցի գոյութեան ժամանակաշրջանին:

Եղիշե առաքյալ վանքի եկեղեցիները և մատուռները շարված են մոտավորապես մեկ գծի վրա՝ հյուսիսից հարավ ուղղությամբ: Բոլորն էլ կառուցված են կոպտատաշ բազալտի քարերից, բացառությամբ Վաչագան Բարեպաշտի մատուռ-գամբարանի, որը շինված է սրբատաշ քարերով: Վանքի գլխավոր եկեղեցին՝ (հյուսիսից շորորդը) առանձնանում է իր համեմատաբար խոշոր շափերով և գավթի առկայությամբ: Այն միանավ, թաղածածկ դահլիճ է, առանց թաղակիր կամարների, և ունի նույնատիպ հայկական հուշարձաններում հազվագեղ հանդիպող առանձնահատկություն՝ կիսաշրջանաձև խորանը ներսում սահուն անցումով, առանց անկյունների, ձուլվում է երկայնական պատերին: Մուտքերը երկուսն են՝ հարավից և արևմուտքից, որը բացվում է այս կողմից կից ժամատան մեջ: Եկեղեցու արևմուտյան մուտքին որպես բարավոր օգտագործված խաչքարը, ըստ վրայի արձանագրության, կերտվել է 1165 թ.⁸²: Ժամատան արևմտյան մուտքի տիպանին փորագրված է հուշարձանի շինարարական արձանագրությունը՝ «Թի: ԶԺԳ: (1264) ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՄ ԽԱՉԱՏՈՒՐ ՇԻՆՅԻ ԶԺԱՄԱՏՈՒՆՍ ԱՆԱՋՆՈՐԴՈՒԹԻ ՏՐ ՍԻՄԵՆՆԻ ԱՂԱՉԵՄ ԶԶԵՅ ՅԻՇԷՔ Ի ՔՍ»⁸³, Հետևաբար, վանքի գլխավոր եկեղեցին կառուցվել է 1165—1264 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում (հավանական է XIII դ. առաջին կեսում): Ժամատանը մեկ զուլգ, քառակուսի կտրվածքով մույթերով, թաղածածկ շենք է, որի

⁸² Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 105:

⁸³ Նույն տեղում, էջ 106:

տանիքին բարձրանում է զանգակատան ոտտոնդան: Պատերին կան բազմաթիվ նվիրատվական արձանագրություններ, իսկ ներսում՝ XIII—XVII դդ. տապանաքարեր⁸⁴:

Համալիրի հյուսիսից երկրորդ եկեղեցու բարավորի արձանագրությունից՝ «Թ. ՈՂԳ. (1244) ՆՍ ՍԵՐՈՐ ՍԱՐԿԱՒԱԳ ՍԲ ՈՒՆՏԻՍ ՇԻՆՆՅԻ ԶՄԲ ԱՌԱՔԵԱՄ Ի ՎԵՐԱՅ ԱՌԱՋԻՆ ՀԻՄԱՆ ՅԱՂԱԹՍ ՅԻՇԵՆՅԷՔ»⁸⁵, հայանի է դառնում, որ այն կառուցվել է վանքի հնագույն տաճարներից մեկի հիմքերի վրա, որի ժամանակ, ըստ երևույթին, կրկնվել է սկզբնական շինությունից հարինվածքը:

Համալիրի հյուսիսից չորրորդ եկեղեցին, ըստ արձանագրության, կառուցվել է 1281 թ.⁸⁶:

Գլխավոր եկեղեցուց հյուսիս-արևելք կանգուն է վաչազան Բարեպաշտի մատուռ-բամբարանը: Այն նույնպես XIII դ. կառուցվել է հնագույն դամբարանի վրա՝ «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՍ ՎԱԶԱԳԱՆ ՔԱԳԱՒՈՐԻՆ ԱՅՈՂՈՐՄԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՍ ԵՒ ՈՅՐ ԾՆՈՂԱՅՆ ՈՐ ՇԻՆՆՅ ԶԵԿԵՂՆՅԻՍ ՅԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԻ ՏՐ ՍԻՄԵՒՈՆԻ ԹԻԻ: ՉԼԵ: (1286) ԷՐ»⁸⁷:

Վանքի մյուս մատուռները և եկեղեցիները շինարարական արձանագրություններ չունեն: Սակայն նրանք իրենց ճարտարապետությամբ և շինարարական տեխնիկայով սերտորեն առնչվում են թվագրված հուշարձաններին և նույնպես պատկանում են XII—XIII դդ.:

Ուշագրավ են Եղիշե առաքյալ վանքի եկեղեցիների և մատուռների խորանների ձևերը: Գլխավոր, վեցերորդ և յոթերորդ (հյուսիսից հաշված) եկեղեցիներն ունեն կիսաշրջանաձև խորան, երկրորդը, երրորդը և ութերորդը՝ ուղղանկյուն բեմ, իսկ առաջին՝ և հինգերորդ եկեղեցիները՝ զույգ խորաններ:

Խորանների այսպիսի բազմազանությունը մեկ մեծաստանում բացառիկ է հայկական համալիրներում: Զույգ խորանները Հայաստանի ճարտարապետության մեջ զարգացած միջնադարում տարածված են եղել⁸⁸: Կրկնակի խորաններ ունեն Սյունիքի, Լոռու, Վասպուրականի մի շարք եկեղեցիներ: Դրանցից լավագույն նմուշները Սանահնի ս. Հարություն (XIII դ.) և Հերհերի ս. Սիոն վանքի ս. Աստվածածին (1282) եկեղեցիներն են, որոնք թե՛ անաղարտ են պահպանվել և թե՛ որոշակի թվագրում ունեն:

⁸⁴ նույն տեղում, էջ 108—109:

⁸⁵ նույն տեղում, էջ 109:

⁸⁶ նույն տեղում:

⁸⁷ նույն տեղում, էջ 110:

⁸⁸ О. Халпахчьян, Двухабсидные базилики Армении, «Известия АН Арм. ССР,

Մխանավ թաղածածկ դահլիճներ են, ընդ որում ուղղանկյուն խորանով, «Օխար Եղյի» վանական համալիրի բոլոր երեք եկեղեցիները: Վանքը գտնվում է պատմական Պարեցիք բնակավայրից (այժմ Բաղարա գյուղ, ԼՂՀ Ասկերանի շրջանում) մոտ 8 կմ հյուսիս-արևմուտք, համանուն դեռի աջ ափին, անտառածածկ բլրի թեք լանջին⁸⁹: Այստեղ կան տանյակից ավելի, տարբեր պահպանվածության շինություններ, տրոնյից միայն երեքն են եկեղեցի, այն դեպքում, երբ վանքի այժմյան ժողովրդական անվանումը նշանակում է «Յոթ Եկեղեցի»: Համալիրի կենտրոնական մասում կանգուն գլխավոր, համեմատաբար մեծ եկեղեցուն կից հյուսիսից ուղիղ անկյան տակ կառուցված է երկայնական, հյուսիս-հարավ ուղղությամբ ձգվող տապանատան թաղածածկ շենքը, որը մուտք ունի հյուսիսային պատից: Վանքի հարավ-արևելյան եկեղեցու հարավային կողմում կա պայտածե խորանով մի փոքրիկ մատուռ, որին արևմուտքից կից է ուղղանկյուն մի շենք (հավանաբար գավիթ): Մի այլ մատուռ, ուղղանկյուն խորանով, գտնվում է այս եկեղեցու հյուսիսային կողմում և մուտք ունի միայն վերջինիս աղթ-թասրահից:

Համալիրի հիմնական հուշարձանախմբի արևմտյան կողմում պահպանվել են աշխարհիկ ուղղանկյուն մի շինության ավերակներ, որի առկայությունը ստացվում է ներքին բակ, դեպի ուր բացվում են ինչպես այս շենքի, այնպես էլ վանքի գլխավոր և արևելյան եկեղեցիների ու գավթի մուտքերը:

Համալիրի հյուսիս-արևելյան կողմում, մեկուկի, գտնվում է վանքի երբորդ եկեղեցին: Բոլոր շենքերն էլ շինված են անտաշ կամ կոպիտ տաշված տեղական քարերով: Վանքի կառույցները շինարարական արձանագրություններ. շունեն (արձանագիր են միայն համալիրի խաչքարերը): Տապանատան ներսում, արևելյան պատի տակ եղել են չորս խաչքար, որոնցից տեղում մնացել է միայն մեկը, կերտված սպիտակ կրաքարից և ներկված կարմիր ներկով: Այն կանգնեցրել է Սմբատ իշխանը 1158 թ. իր որդի Դավթոնի հիշատակին⁹⁰: Հուշարձանախմբի տարածքում, ինչպես նաև նրա-

⁸⁹ Ս. Կարապետյան, Պարեցիք դեռահովտի պատմա-հարապատմական հուշարձանները և նրանց պատմությունը, «Լրագր», 1934, № 8:

⁹⁰ Ս. Կարապետյան, նշված աշխ., էջ 77:

նից արևմուտք գտնվող գերեզմանոցում կան XII—XIII դդ. բազմաթիվ խաչքարեր: Վանական համալիրի շենքերը նույնպես, անկասկած պատկանում են այդ դարերին՝ Արցախի ճարտարապետական դպրոցի ծաղկման ժամանակաշրջանին:

ԿՈՇԻԿ ԱՆԱՊԱՏ

Կոշիկ անապատը գտնվում է Քոլատակ դյուղից (կոչ Մարդակերտի շրջան) 10—12 կմ հարավ-արևմուտք, անտառապատ լեռան վրա: Հիմնական հուշարձանախումբը կազմված է իրար կից երեք եկեղեցիներից, որոնցից միջինը՝ գլխավորը, քառակուսի աղոթասրահով, պայտածե խորանով շենք է: Որին հյուսիսից կից է ուղղանկյուն, իսկ հարավից՝ կիսաշրջանաձև խորանով ավելի փոքր եկեղեցիներ: Գլխավոր և հյուսիսային եկեղեցիներին արևմուտքից կից է թաղածածկ, եռակամար սրահ (կամարներն այժմ փակված են): Սրահին հյուսիսից, իսկ հարավային եկեղեցուն հարավից կից են ուղղանկյուն, ձգված շենքեր, որոնց պատերի ստորին մասն է միայն պահպանվել:

Հուշարձանախմբի հյուսիսային կողմում գտնվում է կիսաշրջանաձև խորանով փոքրիկ մատուռ, իսկ հարավում՝ միմյանց հաղորդակցվող, իրար կից թաղածածկ երկու սենյակ: Արևելյան կողմում նկատվում են տնտեսական շենքերի ու խցերի հետքերը, իսկ դեպի հյուսիս՝ վանքի գերեզմանատուն է:

Կոշիկ անապատը եղել է իշխանական, տոհմական տապանատուն. այդ պարզվում է գլխավոր եկեղեցու բեմի ճակատին Բաղաց թագավորի թոռ, Հասանի որդի իշխան Խերխանի 1265 թ. արձանագրությունից: Տապանատուն նորոգման հետ Խերխանը վերանորոգել է Անապատի ս. Ստեփանոս և մյուս եկեղեցիները նս⁹¹: Համալիրի հուշարձաններից շինարարական արձանագրություն ունի միայն սրահ-տապանատունը. ըստ Ս. Բարխուդարյանի վերծանման, այն պատկանում է 1199 թ.⁹²: Կոշիկ անապատը հարուստ է XII—XIII դդ. բազմաթիվ գեղաքանդակ խաչքարերով, ազուցված շենքերի պատերին, կանգնեցված համալիրի տարածքում և գերեզմանատանը:

ՀԱԿՈՔԱՎԱՆՔ

Քոլատակի մոտ գտնվող (մոտ երկու կիլոմետր հյուսիս) Հակոբավանքը Արցախի նշանավոր կրոնական և մշակութային կենտրոններից մեկն է:

91 Գիվան հայ վիճագրության, պրակ 5, էջ 29:

92 Նույն աղբյուր, էջ 26:

Այն եղև է հայտնի ուխտատեղի, եպիսկոպոսանիստ, որոշ ժամանակ նույնիսկ կաթողիկոսանիստ: Հակոբավանքը միջնադարում նաև կրթական կարևոր կենտրոն է եղև: Վանքի անվանումը ծագում է Մծբինի հռչակավոր հայրապետ սուրբ Հակոբի անունից, որի մատուցը (աջը) պահվել է այստեղ: Միաժամանակ այն գրականության մեջ կոչվում է նաև Մեծիրանից վանք, դավառի անունով:

Վանքն ունի արևելքից արևմուտք բավական ձգված, համարյա ուղղանկյուն զլխավոր հատակագիծ: Համալիրը պարսպապատ է, աշխարհիկ շինքերը (բնակելի և տնտեսական) խմբավորված են արևմուտքում՝ դարպասի շուրջը և արևելքում, իսկ եկեղեցիները և դավիթը կից են հյուսիսային պարսպին: Եկեղեցիները երկուսն են՝ միանավ, թաղածածկ, կիսաշրջանաձև խորաններով: Նրանցից արևմայանը ունի նույնպես թաղածածկ դահլիճի հորիվածք, արևմուտքից կից դավիթ, իսկ հարավային ճակատի առջևում՝ եռակամար սրահ: Այս սրահն են բացվում եկեղեցիների մուտքերը և դավթի արևելյան դուռը: Ինքնատիպ է արևելյան եկեղեցին՝ այն հյուսիսային կողմից, ողջ երկարությամբ ունի շորս, մոտ քառակուսի հատակազոով ավանդատներ, որոնցից երեքը մուտք ունեն աղոթասրահից, իսկ արևելյանը՝ խորանից: Վանքի հիմնադրման, կամ շինքերի կառուցման վերաբերյալ չկան պատմական կամ վիճաբանական տեղեկություններ: Արևմտյան եկեղեցու պատում ագուցված մի խաչքարի պատվանդանի վրա կա 853 թ. արձանագրություն⁹³, հետևաբար վանքի հիմնարկումն ամենաուշը IX դ. է տեղի ունեցել: Արևմտյան եկեղեցին ունի վերանորոգման (ավելի ձիշտ՝ հիմնովին վերակառուցման) արձանագրություն՝ սրահից բացվող մուտքից վերև փորագրված է՝ «ՈԿԱ: (1212): ԹԻԻ ԵՍ ԽՈՐԻՇԱՀ ԱՄՈՐԻՍԻՆ ՎԱԽՏԱՆԳԿ ՏՐ ԽԱԶՆՈՅ ԴՈՐՍՏՐ ՄԵԾԻՆ ՍԱՐԳՍԻ ՔՈՅՐ ԶԱՔԱՐԻ ԵՒ ԻԻԱՆԱՅ ՎԵՐԸՍԻՆ ՇԻՆՅԻ ԶԵԿԵՂԵՅԻՍ ՄԵԾԱՐԱՆԻՑ ...»⁹⁴:

Արևմտյան եկեղեցու մուտքին կա մի այլ վերակառուցման արձանագրություն, որը տեղի է ունեցել XVIII դ.՝ «ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ՇԻՆՆԷՐԷՅԻ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՇԻՆՅԻ ՍՐԱՀՍ ԵՒ ԶԵՆԿՈՒ ՍԵՆՆԱԿՍ ... Ի: ՌՃՀԴ: (1725) ԹՎ»⁹⁵: Այստեղ սրահի վերաբերյալ «շինել» բառը պետք է ընդունել միայն նորոգման իմաստով, որովհետև սրահի պատերին կան XIII դ. բազմաթիվ արձանագրություններ⁹⁶:

Հակոբավանքի եկեղեցիների, դավթի, սրահի կառուցման ժամանակաշրջանը որոշելուն կարող է օգնել Սյունիքի համարյա նույն զլխավոր հատակագիծը, սրահով եկեղեցու ու դավթի հորինվածքն ունեցող Որոտնավան-

93 նույն տեղում, էջ 12:

94 նույն տեղում:

95 նույն տեղում, էջ 19:

96 նույն տեղում, էջ 15—16:

քի ճարտարապետությունը: Բազմաթիվ օրինակները արդեն վկայեցին, որ պատմական Հայաստանի այս երկու հարևան նահանգների շինարարական արվեստը միջնադարում, հատկապես IX—XIII դդ. ունեն բավական էական քնդհանրություններ, զարգացել են միևնույն օրինաչափություններով: Մակայն ճիշտ չի լինի առաջնութուն տալ հայկական ճարտարապետության այս երկու դպրոցներից՝ Աբջախի և Սյունիքի, որևէ մեկին: Նրանց զարգացումը և նվաճումները համաժամանակ են և նմանությունները բխում են նման սոցիալ-տնտեսական իրավիճակից և մշակութային, քաղաքաշինական և ճարտարապետական մակարդակից:

Որոտնավանքը, Հակոբավանքի նման, ունի արևելքից արևմուտք ձգված հատակագիծ և հիմնական կառույցները այստեղ ևս տեղադրված են այդ ուղղությամբ, մեկը մյուսին կից⁹⁷: Արևելքում նույնպես գլխավոր եկեղեցին է (միայն այստեղ այն գմբեթավոր է, կառուցված 1006 թ.), նրան արևմուտքից կից դեպի հյուսիս գտնվող երկրորդ՝ ս. Ստեփանոս եկեղեցին է, որն ունի հարավից սրահ, իսկ արևմտյան կողմում՝ գավիթ: Սյունիքն առկա է նույն գլխավոր հատակագիծը, ինչ ունի Հակոբավանքը: Ուշագրավ է, որ նման են նաև եկեղեցու և գավթի հորինվածքները: Ս. Ստեփանոս եկեղեցին միանավ է, թաղածածկ, կիսաշրջանաձև խորանով և, ինչպես Հակոբավանքում, հյուսիսային պատին կից, ողջ երկարությամբ, ունի ավանդատներ (միայն մի տարբերությամբ, որ կա մեկ ավանդատուն նաև հարավում): Արևմուտքից կից գավիթը թաղածածկ դահլիճ է, ինչպես և Հակոբավանքում: Որոտնավանքի հուշարձանները, Ստ. Օրբելյանի տեղեկություն շնորհիվ, որոշակի թվագրված են՝ «շինեալ մեծ բարեպաշտուհու Շահանգըխտոյ կոփածոյ քարամբք եկեղեցի յանուն սրբոյ Նախավկային Ստեփանոսի ի 449 թուականին Հայոց ... Շինէ և տուն աղօթից կրաշաղախ վիմօք ի դրան եկեղեցւոյն ...»⁹⁸:

Որոտնավանքի մեզ հետաքրքրող հուշարձանները շինվել են X—XI դդ. սահմանագլխին՝ ուղիղ 1000 թվականին, և պետք է միանգամայն հավանական համարել Հակոբավանքի համալիրի հիմնական հուշարձանները՝ նույնպես X—XI դդ. կառուցված լինելը, որը միանգամայն համապատասխանում է նրանց ճարտարապետությանը (հետևաբար ճիշտ չէ Ս. Բարխուդարյանի այն տեսակետը, որ դրանք կառուցվել են «...IX դարից շատ ավելի առաջ», այսինքն վաղ միջնադարում)⁹⁹:

97 Ստ. Մեռցախանյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Եր., 1960, էջ 75:

98 Ստ. Օրբելյան, նշված աշխ., էջ 302:

99 Դիվան հայ վիճագրության, պրակ 5, էջ 11:

Երկու միանավ թաղածածկ եկեղեցի ունի Բերդաձորի ս. Գրիգոր կամ Կարմիր վանքը, որը գտնվում է Վաղուհաս գյուղից (172 Մարդակերտի շրջան) մոտ 10 կմ հեռու, անտառապատ լեռան լանջին: Գլխավոր եկեղեցուն արևմուտքից կից է գավիթը, իսկ հարավ-արևելյան կողմում, բավական մոտ կանգուն է վանքի երկրորդ եկեղեցին: Ըստ գլխավոր եկեղեցու հյուսիսային պատի արձանագրության, այն կառուցել է վախճանգյան իշխանակահ: Ետն Սահոյան հյուղի հիմնադիր Սահո իշխանը 1224 թ.¹⁰⁰: Արևմուտյան մուտքի ճակատաքարին կա ճարտարապետի արձանագրությունը (ցավոք, անունը չի հիշատակել, նշված է միայն «վարդապետ»): Հետաքրքրական է, որ շենքի հարավային պատի արձանագրությունում նշվում է, որ ճարտարապետին վարձատրել է Ամարասի եպիսկոպոսը¹⁰¹: Գավիթը և երկրորդ եկեղեցին շինարարական արձանագրություններ չունեն և հավանաբար պետք է կառուցված լինեն XIII դ. երկրորդ կեսին: Գլխավոր եկեղեցին, որը վերանորոգել է Սահոի որդի Գրիգորիս իշխանը 1281 թ., ունի հետաքրքիր առանձնահատկություն՝ խորանի հարավային ու հյուսիսային պատերը թեքված են դեպի եկեղեցու ընդերկայնական առանցքը, իսկ խորանի անկյունները կորացված են, որի պատճառով այն միջանկյալ տեղ է գրավում ուղղանկյուն և կիսաշրջանաձև հատակագծով խորանների միջև: Ինքնատիպ է գավթի հորինվածքը՝ այն արևմուտքում ունի նախասրահ հիշեցնող հավելյալ մաս, հարավից և հյուսիսից՝ կամարակապ խորշեր, որոնցից մուտքեր են բացվում դեպի գավթի ավանդատները: Ինտերյերում գավթի ունի խաչաձև հատակագծային լուծում, որով և այն տարբերվում է Արցախի նույնատիպ հուշարձաններից:

ՄԱՐԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՅԻ ՎԱՆՔ

Դագիվանքից մոտ 3 կմ արևմուտք, Թարթառ գետի աջ ափի ապառաժոտ լեռան լանջին տեղադրված է Մարի իշխանության վանական համալիրներից մեկը՝ Սուրբ Աստվածածինը (այժմ Ազրբեջանի Քյալբաշարի շրջանում): Համալիրը կազմված է երկու հուշարձանախմբերից, նրանցից արևմուտք և հարավ գտնվող այժմ ավերակ բնակելի և տնտեսական

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 116:

¹⁰¹ Նույն տեղում:

շինություններից¹⁰²: Վանքի հնագույն՝ ս. Աստվածածին եկեղեցին (որը, ըստ շինարարական արձանագրությունների 1174—1178 թթ. կառուցել է Մածնաբերդի Կյուրիկե թաղապետի աղջիկը՝ Մամքանը) գտնվում է հյուսիսային հուշարձանախմբում: Այն ոչ մեծ, միանավ, թաղածածկ կառույց է, կիսաշրջանաձև խորանով: Նրանից հարավ-արևելք, անկյունով կից կանգուն է փոքր, նույնպես միանավ, թաղածածկ մատուռ, ուղղանկյուն խորանով: Ս. Աստվածածին եկեղեցին արևմուտքում ունի թաղածածկ, նույն լայնություն ունեցող գավիթ, որին կից է մի երկրորդ, ավելի խոշոր, աշխարհիկ շենք (նշանակությունը պարզ չէ): Հարավային հուշարձանախմբը կազմված է մեկ զույգ մուկթերով եռանավ բազիլիկից (XVII դ.) և նրան արևմուտքից կից, մոտ քառակուսի հատակագծով գավիթից:

Վանքի տարածքում կան XII—XIII դդ. խաչքարեր և գերեզմանաքարեր, որոնք վերջին տարիներին բավական վնասվել են:

ՀՅՈՒՐԵԿԱՎԱՆՔ

Միայն մեկ՝ միանավ եկեղեցի ունեցող վանական համալիրների շարքում ուշագրավ է Հոռեկա (կամ Հյուրեկա) վանքը Մարգակիրտի շրջանի Թալիշ գյուղից մոտ հինգ կմ հարավ-արևմուտք, անտառապատ սարալանջին: Վանքն ունի թաղածածկ, ուղղանկյուն խորանով միանավ եկեղեցի և արևմտյան կողմից կից գավիթ: Ըստ շինարարական արձանագրությունների եկեղեցին կառուցվել է 1279 թ., իսկ գավիթը՝ 1284 թ.¹⁰³: Եկեղեցին ունի Աբցախի ճարտարապետությունում համարյա չհանդիպող մի մանրամասն՝ խորանը լուսավորվում է երեք պատուհանով: Կա տեսակետ, որ եկեղեցիների խորանների եռյակ լուսամուտները վկայում են վանքերի քաղկեդոնիկ լինելու մասին¹⁰⁴: Սակայն այդ օրինաչափությունը միշտ չէ, որ համապատասխանում է իրականությանը, ավյալ դեպքում պատմական ոչ մի տեղեկություն չկա Հյուրեկավանքի քաղկեդոնիկ լինելու վերաբերյալ:

Հյուրեկավանքի գավիթը ուղատկանում է հայկական գավիթների ու ժամատների XIII դ. տարածված տիպին՝ երկու զույգ խաչվող կամարների վրա հենվող ծածկով:

Հյուրեկավանքի հատակագծային հորինվածքն ունի Մեսեսավանքը (XII—

102 В. А. Арутюнян, С. Г. Карапетян, Н. М. Саркисян, Монастырский комплекс Сурб Аствацацин, в гаваре Цар, Вестник общ. наук, Ереван, 1989, № 7.

103 Դիվան հայ վիճագրության, պրակ 5, էջ 102:

104 Ա. Երևմյան, VII դ. հայկական հուշարձանների կրած մի փոփոխության մասին՝ «ԳՊՁ», 1966, № 4:

XIII դդ.) Մարդակերտի շրջանում, միայն այնտեղ եկեղեցու խորանը կիսաշրջանաձև է, իսկ գավիթը ծածկվում է թաղով¹⁰⁵:

ԿԻՉՍՆԻ ԱՆԱՊԱՏ

Կիչանի անապատի համալիրը գտնվում է Մարդակերտի շրջանի համանուն գյուղից մոտ 3 կմ հյուսիս-արևելք, Խաչեն գետի ձախ ավտով ձգվող լեռնաշղթայի գագաթներից մեկի վրա¹⁰⁶: Համալիրի կազմում են երկու, միմյանց կից եկեղեցի, գավիթ, նրանցից հարավ սեղանատունն է և բնակելի սենյակները: Անապատի հնագույն՝ հյուսիսային եկեղեցին (XII—XIII դդ.) ունի ինքնատիպ հատակազծային լուծում՝ այն միանալ է, թաղածածկ, արևելքում պայտաձև խորանով, հյուսիսից և հարավից կից ավանդատներով, որի շնորհիվ արտաբուստ ստացվել է խաչաձև ծավալային հորինվածք: Ավանդատներն արևելքից ավարտվում են «օմեգա» տառի ուրվագիծ ունեցող հատակազծով խորաններով, որոնք ավելի մեծ են, քան ավանդատների աղոթարարհները: Եկեղեցին կառուցված է կիսամշակ և անմշակ տեղական քարերով, Երեսից սվաղված է: Արևմուտքից կից է երկարավուն հյուսիսից հարավ ձգվող գավիթը, որը արևելյան կողմում ունի զույգ, քառակուսի հատակազծով թաղածածկ ավանդատներ:

Հարավային միանավ, թաղակիր կամարներով համեմատաբար խոշոր եկեղեցին, ըստ հարավային մուտքի բարավորի շինաբարական արձանագրության, կառուցվել է 1759 թ.¹⁰⁷:

Թերադիր տեղանքի վրա կառուցված թաղածածկ սեղանատան տանիքի նիշը հավասար է զլխավոր հուշարձանախմբի կառույցների հատակի նիշին: Նման լուծում ունի Սյունիքում Շինուհայրի Կուսանաց անապատի սեղանատունը, որի տանիքը նույնպես բակ է ծառայում համալիրի եկեղեցու համար¹⁰⁸:

105 Ե. Մկրտչյան, *Կղզիքի աշխ.*, էջ 44:

106 Ս. Կարապետյան, *Քաջառիկ հորինվածքով միջնադարյան հուշարձան*, «Էջմիածին», 1983, Գ, էջ 58—61:

107 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 90:

108 Մ. Հասրաթյան, Սյունիքի XVII—XVIII դդ. հարտարպետական համալիրները, Եր., 1973, էջ 114—116:

Արցախը հարուստ է պաշտպանական կառույցներով. դարավոր պայքարը օտար նվաճողների դեմ պատճառ է հանդիսացել սկսած վաղ միջնադարից մինչև ուշ միջնադար երկրամասում բազմաթիվ ամրոցների կառուցման: Առավել հայտնի հին բերդերի թվում են Գախը, Խոխանաբերդը, Կաշակաբերդը: Արցախի ամրոցներն իրենց ճարտարապետությամբ և շինարարական տեխնիկայով, հատակազծային լուծումներով սերտորեն առնչվում են կենտրոնական Հայաստանի, հատկապես Սյունիքի նույն ժամանակաշրջանի բերդերին (օրինակ, Մմբատաբերդին, Որտոնաբերդին, Պոռաբերդին և այլն): Սակայն սխալ կլինի նամուրթյունը և նրանց ճարտարապետության առանձին բաղադրիչների նույնությունը բացատրել ազդեցություն գործոնով: Պաշտպանական կառույցների (մինչհրազենի օգտագործումը) ճարտարապետությունը միջնադարում ուղջ արևելքում (և ոչ միայն արևմեկը) բնորոշվում է ձևերի պահպանողականությամբ և ընդհանրականությամբ: Այս տեսակետից առավել հետաքրքրական է և կարևոր Արցախի ճարտարապետական դպրոցի եվաճումների բացահայտման համար Խաչենի իշխանական դղյակը, որն իր ինքնատիպ առանձնահատկություններով աչքի է ընկնում միջնադարյան Հայաստանի նույնատիպ աշխարհիկ և պաշտպանական կառույցների շարքում:

Խաչենի իշխանական դղյակը (XIII դ.) գտնվում է Գանձասարի վանքի դիմաց, Խաչենագետի աջափնյա անտառապատ սարերից մեկի վրա¹⁰⁹: Այժմ Գարպասներ անունը կրող դղյակը խիստ ավերված է, սակայն գլխավոր հատակագիծը այժմյան վիճակով ևս հնարավոր է շահագրել և ուսումնասիրել: Ենթադրվում է, որ դղյակը կառուցել է իշխան Հասան Զալալը (1214—1261 թթ.) իր տիրակալության առաջին տարիներին՝ մինչև 1220 թ.: Դղյակը հատակազծում ուղղանկյուն է, հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ձգված, շրջապատված հաստ (1,6—1,8 մ լայնությամբ) պարիսպներով, որոնք ուժեղացված են անկյուններում տեղադրված շրջանաձև, սնամեջ բուրգերով: Պարսպի հարավ-արևմտյան հատվածում պահպանվել է կիսաշրջանաձև, հոծ մի ալլ բուրգ ևս, որը հավանաբար պատկանել է տեղում ավելի վաղ գոյություն ունեցող և հետագայում դղյակի վերածված պաշտպանական շինություն: Միակ դարպասը, որը գտնվում է հյուսիս-արևելյան պարսպապատում, ունեցել է զույգ որմնասյուներով երկկենտրոն կամարով շքամուտք:

Դղյակի ճարտարապետության ամենահետաքրքրական և արժեքավոր տարրերը իշխանական դահլիճը ու բակն են: Ուղղանկյուն, հյուսիս-արևմուտքից—հարավ-արևելք ձգված դահլիճը թաղածածկ է, երեք երկկենտրոն թա-

¹⁰⁹ Դղյակի ճարտարապետության մասին մանրամասն տե՛ս Ա. Ղուլյան, Խաչենի իշխանական ապարանը, Լրաբեր հաս. գիտ., 1984, № 3:

դակիր կամարներով, որոնք հանգչում են դահլիճի պարագծով թաղի հիմքով ձգվող քրմնագոտու մեջ ազուլված պահուսակների վրա: Երկայնական պատերը սվաղված են մինչև որմնագոտին, լայնական պատերը՝ ամբողջ բարձրությամբ: Դահլիճի հորինվածքի ուշագրավ տարրը թաղածածկ, ուղղանկյուն մեծ խորշ—բնմահարթակն է՝ հարավ-արևելյան կողմում: Բնմահարթակի հետ միասին դահլիճն ունի 54 քառ. մ մակերես, թաղի թևիչքն է 6,3 մ¹¹⁰,

Պետք է նշել, որ դղյակի իշխանական դահլիճն իր հատակազծային և ծավալա-աարածական հորինվածքով հար և նման է Արցախի XII—XIII դդ. ուղղանկյուն խորանով եկեղեցիներին: Սա խոսում է Արցախի շինարարական արվեստում XII—XIII դդ. գոյություն ունեցող պաշտամունքային և աշխարհիկ ճարտարապետության ձևերի սերտ առնչությունների և ընդհանրությունների, պալատական կառույցների հորինվածքների համար եկեղեցիների և դահլիճների արդեն մշակված տիպերի կիրառման մասին (ինչպես, օրինակ, Դաղիվանքի պալատական «խրախճանյաց» դահլիճի համար քառամուկի ծամատան հորինվածքի կրկնելը և այլն): Դղյակի ընդունելության այս դահլիճի խորքը, որտեղ ըստ երևույթին դրվել է իշխանի գահավորակը, երկկենտրոն հաղթակամարով բաժանվում է դահլիճի հիմնական ծավալից: Վերջինիս և դղյակի հարավ-արևելյան պարսպի միջև կա մի թաղածածկ, ներսից սրբատաշ պատերով, նույնպես երեք թաղակիր կամարներով մի սենյակ, որը դռնով հաղորդակցվում է դահլիճի հետ: Սենյակի պատերին եղած խորշերը՝ «պատրհանները», բուխարին վկայում են նրա բնակելի բնույթի մասին. պետք է կարծել, որ այն եղել է իշխանական բնակարանը:

Խաչենի իշխանական դղյակի ճարտարապետության մյուս ինքնատիպ առանձնահատկությունը ուղղանկյուն ընդարձակ բակն է, որը իր հատակազծով կրկնում է խորշավոր դահլիճի հորինվածքը: «Ամենայն հավանականությամբ այն ծառայել է բազմամարդ ծիսակատարությունների, տոնախմբությունների կամ դատավարությունների համար. խորշաձև մասում էլ, որը լեհեա եղել է ծածկված, բազմել են իշխանը և նրա մերձավորները: Առանձնապես նշելի է, որ հորինվածքային այս տարրը (բակի խորշաձև, ծածկված հատվածը) հետագայում ևս հարատևել է և որոշ փոփոխությամբ (երկու կողմի սենյակներով) լայն տարածում ստացել ու միջնադարում: Այսպիսի բաժանմունքներ ունեն (որոնց ծածկված լինելը ակնհայտ է) Գյուլիստանի Մեղիք-Բեզլարյանների, Ջրաբերդի Մեղիք-Իսրայելյանների Մոխրաթաղում գտնվող ապարանքները (երկուսն էլ XVIII դար), ինչպես նաև նույն շրջանի Շուշիի որոշ հուշարձաններ»¹¹¹:

¹¹⁰ Ն. Պապուխյան, Չայրվող ծածկերով բնակարանների տեղն ու դերը Հայաստանի հին և միջնադարյան ճարտարապետության մեջ, «Հայ արվեստին նվիրված միջազգային 2-րդ սիմպոզիում» (Ձեկուցումների ժողովածու), հատ. 2, Եր., 1981, էջ 334:

¹¹¹ Ա. Ղուլյան, նշված աշխ., էջ 55—56:

ԱՐՅԱԽԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՊՐՈՑԻ ԲՆՈՐՈՇ ԳՄԵՐԸ

Արցախի միջնադարյան հուշարձանների և, առաջին հերթին, նրա համալիրների ու պաշտամունքային շենքերի ուսումնասիրությունը պարզորոշ ցույց է տալիս այն ընդհանուր օրինաչափությունները, որոնք զոյսություն ունեն ինչպես այս հրկրամասի, այնպես էլ պատմական Հայաստանի մյուս նահանգների ճարտարապետական դպրոցների ձևավորման ու զարգացման պրոցեսում¹: Նախ և առաջ դիտարկենք այն ընդհանրությունները, որոնք կան Արցախի և Այրարատի, Մյունիքի, Լոռու XI—XIII դդ. մոնումենտալ ճարտարապետության մեջ:

Արցախում զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում վանական համալիրների և առանձին կանգնած եկեղեցիների համար կիրառվել են հիմնականում միանավ բազիլիկի և հայկական ճարտարապետության մշակած գրմբեթավոր դահլիճի ու «նեբրժված խաչ» հորինվածքները, որոնք ողջ միջնադարյան Հայաստանի պաշտամունքային շենքերի ամենատարածված ու հիմնական տիպերն էին:

Գտչավանքի գլխավոր և Դադիվանքի հարավային եկեղեցու համար ընդունված² գրմբեթավոր դահլիճի միայն մեկ զույգ մույթով (արևելյան մույթիցը համատեղված են խորանի անկյունների հետ) ենթատիպը XI—XIV դդ. լայնորեն կիրառվել է հատկապես հայ ճարտարապետության Անիի և Լոռու դպրոցներում: Այդպիսի լուծում ունեն Բջնիի Աստվածածին, Կեշառիսի ս. Գրիգոր, Թեղենյաց վանքի, Վանստանի (Իմիրզեկ), Հովհաննես Կարապետ վանքի, Մաքրավանքի, Աշտարակի Մարինե եկեղեցիները Այրարատում, Հեռոմոսի ս. Հովհաննես, Անիի Տճգրան Հոննեցի և Աշոտի, Պեմզաշենի Առաքելոց և Մաչարավանք եկեղեցիները Շիրակում, Դսեղի Քառասնից Մանկանց, Ծաղկավանքի (Շխմուրադի վանքի), Սրվիղի, Առաքելոց, Դեղյնուտի վանքերի, Հաղարծինի ս. Աստվածածին, Գոշավանքի ս. Աստվածածին և ս. Գրիգոր եկեղեցիները Լոռի-Գուգարքում, Սպիտակավոր

¹ В. Арутюнян, Едини по духу и воплощению, «Коммунист», Ереван, 1989, № 194. № 194.

Աստվածածին մենաստանի եկեղեցին Սյունիքում և այլն²: Այս ենթատիպը միջանկյալ դեր է խաղում Հայաստանի վաղ միջնադարի դասական դրամբեթավոր դահլիճներից (Զովունի, Պողնի, Արուճ, Գրամշեն) դեպի ներքուստ խաչածե, շոքս անկյուններում ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն եկեղեցիների հորինվածքին անցնելը, որի համար հաջորդ քայլը եղավ որմնամուկյների և արևմտյան սյատի միջև ընկած տարածություններում ավանդատներ տեղավորելը: Այս նոր ճարտարապետական տիպը մասնաբիտական գրականության մեջ համարս կոչվում է «խաչածե գմբեթավոր» կամ ինկրցիայով ուղղակի «գմբեթավոր սրահ», որոնք ճիշտ չեն բնորոշում նրա հորինվածքի առանձնահատկությունները և ավելի նպատակահարմար է նրան, որպես միանգամայն նոր տիպ, անվանել առանձին անունով՝ «Երգծված խաչ», որը համապատասխանում է շինության հատակագծային կազմվածքին:

Արցախի նշանավոր վանքերի՝ Գանձասարի և Գաղիվանքի գլխավոր եկեղեցիները սյատկանում են «ներգծված խաչ» տիպին, որը առաջանալով X դ., լայն տարածում ստացավ հատկապես XIII դ.: Ուղղանկյուն, ներսից խաչածե, շոքս ավանդատներով հորինվածք ունեն, խաչենի բշխանության կրոնական այս խոշոր կենտրոններից բացի, XIII դ. կառուցված Գեղարգի, Նորավանքի, Հովհաննավանքի, Սաղմոսավանքի, Հատիճավանքի, Խորակերտի և ուրիշ շատ վանքերի եկեղեցիները: Նշված բոլոր հուշարձանները իրենց հատակագծային-ծավալային լուծումով, համաչափություններով ավելի մոտ են կենտրոնագմբեթ եկեղեցիներին ու արդեն դժվար է նկատել նրանց կապը գմբեթավոր դահլիճների հետ, որոնցից և առաջացել է ճարտարապետական այս տիպը:

Արցախում, առանձին կանգնած գմբեթավոր եկեղեցիների համար, սահմանափակ, կիրառվել է նաև «սղատ խաչի» միախորան տիպը (Ամենափրբկիչ, Խունիսավանք)³: Այս հուշարձաններն իրենց ծավալա-տարածական հորինվածքի և հատակագծի համաչափություններով կրկնում են վաղ միջնադարի հայկական նույնատիպ կառույցներին⁴:

Արցախում XII—XIII դդ. ամենատարածված՝ միանավ բաղիլիկ տիպին անդրադառնալու հարկ չկա, որովհետև եկեղեցու այս ամենապարզ հորինվածքը կիրառվել է ողջ քրիստոնեական աշխարհում վաղ միջնադարից սկսած մինչև XX դ.:

Արցախի վանական համալիրները, ինչպես և Հայաստանի այլ նահանգ-

² Работы Ганево. Архитектура Армена, Т. I, Рома, 1938.

³ Ս. Կարապետյան, Խաչածե գմբեթավոր երկու եկեղեցիներ Արցախ նահանգում, «ՊԲՀ», 1983, № 2—3:

⁴ Վ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Եր., 1982:

ների վանքերը, ունեն հայ ճարտարապետության զարգացման արգասիք և միայն նրան հատուկ ինքնատիպ կառուցվածքներ՝ գավիթներ ու ժամատներ: Ինչպես Հայաստանում ամենուրեք, Արցախում ևս գավիթները կառուցվել են համալիրի գլխավոր եկեղեցուն արևմուտքից կից և մեծ մասամբ ունեն թաղածածկ դահլիճի հորինվածք (Գտշավանք, Կոշիկ անապատ, Կարմիր վանք, Կիչանի անապատ, ս. Վարդան, Մեսեսավանք և այլն), որոնք արքնշվում են Սյունիքի հնագույն՝ Գնդեվանքի, Քարկոփի, Վահանավանքի նույնատիպ գավիթներին⁵:

Արցախի վանքերից Գանձասարի, «Բոի եղցի», Հյուրեկավանքի գավիթներն ունեն երկու զույգ խաչվող կամարներով ծածկ: Խաչվող կամարներով են կառուցված Անիի Առաքելոց (XII դ.), Հոռոմայրի, Հաղբատի, Խորակերտի, Մշկավանքի, Գեղձնուտի, Իջևանի Առաքելոց, Ուշիի ս. Սարգիս, Արատեսի, Նոր Վարագավանքի գավիթները, Հաղբատի և Հաղարծնի սեղանատները, Հաղբատի և Գոշավանքի գրատները (բոլորը XIII դ.): «Իրենց կառուցվածքով համարձակ և հորինվածքով նույնքան տրամաբանական բուլբուլի կերտվածքները հայ գեղարվեստական հանճարի առավել արտահայտիչ դրսևորումներից են»⁶:

Արցախի և հայկական մյուս ճարտարապետական դպրոցների միջև եղած ընդհանրություններն արտահայտվում են ոչ միայն պաշտամունքային և աշխարհիկ շենքերի հորինվածքներում, այլ նաև ճարտարապետական կոնստրուկցիաներում, մանրամասներում, հարդարանքում, շինարարական տեխնիկայում:

Արցախի վանական համալիրների գլխավոր եկեղեցիների (Գանձասար, Դադիվանք, Գտշավանք) ճակատները մշակված են զույգ, հունկյունաձև կտրվածքով խորշերով: Այս խորշերն ունեն ինչպես կառուցողական, այնպես էլ գեղարվեստական նշանակություն: Նրանք թեթևացնում են եկեղեցու խաչաթևերի և ավանդատների միջև շարվածքի հոծ զանգվածը, լույս ու ստվերի խաղով շեշտում ճակատների հիմնական մասերը, հարստացնելով նրանց արտահայտչականությունը: Մշակված լինելով Հայաստանում դեռ վաղ միջնադարում և լայն տարածում ստանալով արդեն VII դ., տարրին ճակատների այս խորշերը գրականության մեջ իրավամբ անվանվում են «հայկական խորշեր», որովհետև IX—XIV դդ. հայկական հուշարձաններում նրանք դառնում են ճարտարապետական պարտադիր տարրեր:

Գանձասարի ու Դադիվանքի Կաթողիկեները հարդարված են դեկորատիվ կամարաշարերով: Եկեղեցիների արտաքին ճակատները կամարաշարով զար-

5 Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Եր., 1960, էջ 160—166:

6 Ա. Յակոբսոն, Գանձասար, Եր., 1937, էջ 11:

դարեւը հատուկ է միջնադարյան հայ ճարտարապետութեանը և իր ակունքներն ունի VII դ. հուշարձաններում (Զվարթնոց, Թալինի տաճար, Զորավար և այլն): Այս գեղարվեստական հնարքն իր զարգացումն ունեցավ IX—XI դդ.⁷ Բազրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիում և շարունակվեց կիրառվել նաև հետագայում՝ XII—XIV դդ.:

Գանձասարում և Գտշավանքում գմբեթների վեղարի հովանոցաձև ծածկը նույնպես բնորոշ է Անիի ճարտարապետական դպրոցին (այսպիսի ծածկ ունեն, օրինակ XI դ. Մարմաշենի գլխավոր և Ամբերդի եկեղեցիների զբմբեթները):

Գաղիվանքում և Գանձասարում, ինչպես նշվեց, կան թեմատիկ պատկերաքանդակներ (նվիրատվական բնույթի), եկեղեցիների մանրակերտներով: Եկեղեցիների քարե մանրակերտները տաքածված են միջնադարյան հայ ճարտարապետության մեջ: Նրանք ըստ նշանակութեան լինում են չորս տեսակ՝ նվիրատվական, մասունքների պահպանման տուֆ, ճակտոնազարդ և տիպար⁷: Գանձասարի տաճարի թմբուկի և Գաղիվանքի Կաթողիկեի հարավային ու արևելյան պատերի մանրակերտները՝ կառուցողների պատկերաքանդակների հետ պատկանում են նվիրատվական խմբին, որոնք հանդիպում են Հայաստանի բազմաթիվ վանքերում (Աղթամար, Հաղբատ, Սանահին, Հառիճավանք, Հաղարծին և այլն):

Գանձասարում կա մանրակերտների մյուս տեսակը ևս՝ ճակտոնազարդ ծառայող, որը հույնպես բավական տարածված է Հայաստանի ճարտարապետական համալիրներում (Բարձրաբաշ և Գրիգոր վանք, Հառիճավանք, Գեղարդ, Ամաղու նորավանք և այլն):

Արցախի ճարտարապետական դպրոցում հնավանդ ձևերի կրկնության օրինակ է նաև եկեղեցիների խորանների պայտածև հատակագիծը (Քոլատակի Հակոբավանք, Կարմիր վանք, Կռչիկ անապատ, ս. Վարդան, Կիչանի անապատ և այլն): Նման ուրվագծով խորանները հատուկ են վաղ միջնադարի հայկական հուշարձաններին և, թեև սահմանափակ կիրառվել են նաև հետագայում:

Արցախի մեմորիալ ճարտարապետությունը նույնպես ողջ հայկական գեղարվեստական մշակույթի օրգանական մասն է կազմում: Վանական համալիրներում տեղագրված և գերեզմանատներում կանգուն խաչքարերը, հուշակոթողները իրենց ոճական առանձնահատկություններով սերտորեն առնչվում են հատկապես հարևան Սյունիքի մեմորիալ հուշարձաններին: Դա վերաբերում է, առաջին հերթին, «որմնափակ խաչքար» կոչվող ինքնատիպ կոթողներին, որոնց լավագույն նմուշները գտնվում են «Բոհի եղցի» վանքի համալիրում:

⁷ Paolo Cuneo, Les modèles en pierre de l'architecture arménienne, ReArm, tome VI, Paris, 1969.

Արցախի շինարարական արվեստը ոչնչով չի տարբերվում վաղ միջնադարից մինչև ուշ միջնադար Հայաստանի ողջ տարածքում ընդունված շինարարական տեխնիկայից ու շինարարական գործի կազմակերպումից: Այստեղ ևս մոտմենտալ շենքերի պատերը իրականացվել են շարվածքի «միդիս» եղանակով, որպես շինանյութ օգտագործվել են բազալտ, տուֆ, ֆելզիտ, որպես կապակցող նյութ կիրառվել է կրաշաղախը: Օգտագործվել է ինչպես մաքուր տաշած, այնպես էլ կիսամշակ քար, ընդ որում վերջին դեպքում կառույցի պատասխանատու հանդույցները (պատի անկյուններ, որմնամուկներ, կամարներ) շարվել են սրբատաշ քարից: Հարկ է նշել, որ կիսամշակ քարից պատերի շարելը և դրա զուգակցումը մաքուր տաշած քարերից շենքի կարևոր կոնստրուկցիաների իրականացումը Սյունիքի ճարտարապետական դպրոցի հիմնական հատկանիշներից է⁸:

* * *

Արցախի միջնադարյան ճարտարապետությունը, ինչպես և յուրաքանչյուր ստեղծագործական դպրոց, ունի իրեն հատուկ, հատակ նկատվող առանձնահատկություններ: Հիմնական հատկանիշներից մեկը Արցախում վանական եկեղեցիների համար թաղածածկ դահլիճի կիրառումն էր: Եթե XII—XIII դդ. պատմական Հայաստանի այլ նահանգներում միանալ դահլիճի հորինվածքը հիմնականում կիրառվում էր մատուռների, վանական համալիրների փոքր եկեղեցիների համար, ապա Արցախում պաշտամունքային շենքի այս տիպը կիրառվել է անհամեմատ լայն: Այսպես, օրինակ, արցախյան շատ վանքերում բոլոր եկեղեցիներն էլ ունեն թաղածածկ դահլիճի հորինվածք. մի երևույթ, որ չի հանդիպում Հայաստանի մյուս ճարտարապետական դպրոցներում:

Թաղածածկ դահլիճ են Արցախում Եղիշե առաքյալ վանքի բոլոր ութ, «Օխտ եղջիր» հինգ, «Բոի եղջիր» չորս, Կոշիկ անապատի երեք, ինչպես նաև մի շարք վանական համալիրների միակ եկեղեցիները:

Հայաստանի մյուս նահանգներում այս ժամանակաշրջանում (XII—XIII դդ.) թաղածածկ դահլիճի հորինվածքի կիրառումը վանքերի գլխավոր կամ միակ եկեղեցիների համար բացառիկ երևույթ է՝ կարելի է նշել միայն Մշկավանքի, Սեղվի և Թեթառուչքի վանքերի օրինակները:

Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցի մյուս՝ կարևոր առանձնահատկությունն է եկեղեցիներում ներսից ուղղանկյուն խորանի՛ զանգվածային կիրառումը: Այստեղ, առանձին կանգնած ծխական եկեղեցիների հետ, վանական համալիրների մեծ մասում մեկ կամ մի քանի եկեղեցի-

⁸ Ս. Մեացակաևյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, էջ 241—242:

ցինք ու մատուռներ ուղղանկյուն խորան ունեն, այն դեպքում, երբ Այրա-
րատում, Վասպուրականում, Սյունիքում ուղղանկյուն խորան վանքերում շի-
կիրառվել (հայտնի միակ օրինակը Յաղաց քարի վանքն է Վայոց ձորում):
Արցախում ուղղանկյուն խորան ունեն Դադիվանքի, Գտչավանքի, «Բոհի եղ-
ցիի», Եղիշն առաքյալ վանքերից բացի, նաև շատ այլ վանական համա-
լիրներ: Նմանատիպ խորանով են Մարթակերտի շրջանի Կարմիր վանքի
հարավային, առանձին կանգնած մատուռը, «Օխտ եղցիի» երկու եկեղե-
ցին և նրանց կից մատուռը, Կարմիրքարի վանքի երեք եկեղեցիներն էլ,
Չարեքտարի վանքի երկու եկեղեցին, Մեսեսավանքի եկեղեցին (անկյուն-
ները կորացրած են) և մատուռը, Հյուսիսավանքի միակ եկեղեցին, Կոշիկ
անապատի հյուսիսային եկեղեցին, ս. Աստվածածին վանքի եկեղեցիներից
մեկը և ուրիշները⁹:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է կանգ առնել եկեղեցիների ավագ
խորանի ուղղանկյուն ձևի կիրառման վրա և պարզաբանել, թե որքանով է
այն բնորոշ միջնադարյան հայ ճարտարապետության համար:

Եկեղեցու բեմի ուղղանկյուն եղբարիժը վաղ միջնադարից հանդիսա-
նում է քրիստոնեական աշխարհի պաշտամունքային ճարտարապետության
համար ընդունված և օրինաչափ ձևերից մեկը: Խորանի այս տիպը IV դ.
սկսած կիրառվել է Սիրիայի, նաև Միջագետքի, Եգիպտոսի, Արևմտյան Եվ-
րոպայի միանավ ու եռանավ բազիլիկաներում: Եվրոպայում ներսից ուղղան-
կյուն բեմը լայն տարածում ստացավ հատկապես IX—XII դդ. և նույնիսկ
պարտադիր դարձավ ցիստերցյան վանքերի եկեղեցիների համար:

Վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Հա-
լաստանում (նաև Վրաստանում), վաղ միջնադարից սկսած, կառուցողները
մշակել են ուղղանկյուն բեմով եկեղեցու թեման, ստեղծագործական իրենց
այս փորձերում բավական ինքատիպ ու հետաքրքիր լուծումներ առանա-
լով¹⁰:

Գոյություն ունի այն տեսակետը, որ հայ ճարտարապետության մեջ ուղ-
ղանկյուն բեմի խորանը կիրառվում է IV դ. սկզբից¹¹, երբ Հալաստանը
աշխարհում պետականորեն առաջինն ընդունեց քրիստոնեական կրոնը: Այս
տեսակետի կողմնակի ապացույցն է ուղղանկյուն բեմի նկարագրությունը
Սահակ Պարթև (387—436 թթ.) կաթողիկոսի տեսիլքում, որը տալիս է պատ-
միչ Չազար Փարպեցին¹²: Ենթադրվում է, որ հայկական վաղադույն թաղի-

⁹ M. A. Lala Cunenno, P. Curcio, S. Manu san. Garabagh, Milano, 1968, p. 88-89.

¹⁰ M. M. Асратян, Архитектура грузинских и армянских церквей с прямоуголь-
ным внутри алтарем, II Международный симпозиум по грузинскому искусству,
Тбилиси, 1977.

¹¹ Ս. Սաֆինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Եր., 1955, էջ 69—72:

¹² Չազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թիֆլիս, 1907, էջ 60—61:

վիկնեբը ուղղանկյուն խորան են ունեցել¹³: Վերջին տարիների հետազոտութ-
 յթյունները Հայաստանում բացահայտեցին մտտ մեկուկես տասնյակ տար-
 բեր տիպի հուշարձաններ, որոնք ունեն ուղղանկյուն արտիք: Նրանց մեծ
 մասը պատկանում է թաղածածկ դահլիճի տիպին (ինչպես և հարևան Վրաս-
 տանում): Ժամանակագրական առումով հնագույնը պետք է համարել (մեղ
 հասածներից) Արագյուղի Աստվածածին եկեղեցին: Այստեղ ուղղանկյուն
 խորանը, երկայնական պատերի հաստացման շնորհիվ աղտթասրահից զգալի
 նեղ է: Եկեղեցու ձգված ծավալը բարձրանում է աստիճանաձև գեոմետրիա-
 րիսիսի վրա: Կալ պահպանված հարավարին մուտքի շրջանակը նման է Եղ-
 վարդի բազիլիկայի (V—VI դդ.) հարավային ճակատի հյուսիսային դռան
 շքամուտքին: Արագյուղի հուշարձանի դռան կողմին կա վաղ միջնադարյան
 հայ գեկտրատիվ արվեստին բնորոշ վարդապի: Փարպիս ս. Գրիգոր եկեղե-
 ցին (XIII դ., վերակառուցված XIX դ.) ունի համանման հորինվածք, սա-
 կայն ավելի փոքր չափերի:

Ուղղանկյուն բեմով հայկական հուշարձանների շարքում առանձնա-
 նում է Բյուրականի եկեղեցին՝ որպես ճիշտ թվազրված և ճարտարապետա-
 կան հարուստ մանրամասներ ունեցող: Այն կառուցել է Հովհաննես Գրաս-
 խանակերտցի պատմիչ-կաթողիկոսը (858—929 թթ.)¹⁴: Հուշարձանը թեպետ
 միջնադարում ենթարկվել է վերանորոգման, լրիվ պահպանել է թե՛ իր
 սկզբնական ծավալա-տարածական հորինվածքը, թե՛ գեկտրատիվ հարդա-
 րանքը: Ուղղանկյուն աղոթասրահը արևելքում ավարտվում է համարյա քա-
 ոակուսի հատակազծով բեմով, որի երկու կողմում կան ավանդատներ: Գահ-
 լիճը և բեմը թաղածածկ են: Նրանք, հնագույն բազիլիկաների պես, ունեն
 բարձր երկթեք ծածկ, իսկ ավանդատները և դահլիճի կողային մասերը
 ցածրացված են: Լայն դահլիճը ջլատվում է երեք հավասար մասի երկու զույգ
 հզոր որմնամույթերով և նրանց միջև ձգվող կամարներով: Բավական ինք-
 նատիպ է հուշարձանի հարդարանքը, որը վաղ միջնադարի հայկական դա-
 սական ձևերի նորովի մեկնաբանությունն է:

Չարգացած միջնադարի դարաշրջանի հայ ճարտարապետութայունից
 պահպանվել են ուղղանկյուն խորանով եկեղեցիներ Անիում, Մարցում, Չա-
 գավանքում և այլն: Մարցի Իգատակի եկեղեցին (1225 թ.) ունի փոքր խո-
 րութայամբ բեմ, որն արգեն ծածկվում է ոչ թե թաղով, այլ կամարով: Անիի
 Իգաձորի Ժայռափոր եկեղեցին (XIII դ.) ունի բավական խոր ուղղանկյուն
 խորան, կիսաշրջանաձև թաղով ծածկված և աղոթասրահից անջատված հաղ-
 թակամարով¹⁵: Անիի Ծաղկոցաձորի վիմափոր եկեղեցին ունի համանման

¹³ Ա. Սահիճյան, նշված աշխ., էջ 69:

¹⁴ Հովհաննես Գրասխանակերտցի, Հայոց պատմություն, Քիֆլիս, 1912, էջ 336:

¹⁵ Н. М. Токарский, По страницам истории армянской архитектуры, Ереван

հորինվածք¹⁶: Չազավանքի երկհարկ եկեղեցի-դանգակատունը (XIII—XIV դդ.) ունի քառակուսի հատակագիծ: Բնմը չի նեղանում, ինչպես վերը դիտարկված հուշարձաններում, այլ մի ամբողջությամբ է կազմում դահլիճի հետ, ունենալով ընդհանուր թաղն ծածկ: Այսպիսի խորանը (դահլիճի հետ միասնական թաղով) բնորոշ է Արցախի գլխավոր վանական համալիրների ուղղանկյուն բնավ եկեղեցիների համար: Գաղիվանքի, Գուշավանքի, «Բոխի կղզիի» եկեղեցիների, Խաթրավանքի կողային մատուռների, Չարեքտարի վանքի, Եղիշե առաքյալ վանքի հյուսիսային եկեղեցու ուղղանկյուն խորանները աղոթասրահի շարունակությամբ են հանդիսանում: Միևեույն ժամանակ Արցախի ճարտարապետական դպրոցում կիրառվել է նաև ուղղանկյուն խորանով եկեղեցիների այն ենթատիպը, որի բնմը նեղ է դահլիճից: Այսպիսի լուծում ունեն Կոշիկ անապատի, Եղիշե առաքյալ վանքի հարավային, «Օխտ կղզի» վանքի, Կարմիրքարի վանքի, Հոռեկավանքի եկեղեցիները և ուրիշներ:

Սակայն միջնադարյան հայ ճարտարապետների ստեղծագործական միտքը շահամանափակվեց ուղղանկյուն խորանը միայն միանավ, թաղածածկ եկեղեցիներում կիրառելով: Ստեղծվեցին այդպիսի բնավ նաև գմբեթավոր կառույցներ՝ «ազատ խաչ», «ներգծված խաչ», գմբեթավոր դահլիճի, քառամույթ և երկմույթ գմբեթավոր հորինվածքներով (ուշ միջնադարում ուղղանկյուն խորան կիրառվեց նաև Պարսկաստանի հայկական եկեղեցիներում՝ միանավ ու եռանավ բազիլիկներում):

«Ազատ խաչ» տիպին պատկանող Սառնաղբյուրի ս. Ղազար եկեղեցին (V—VI դդ.), եզակի է իր հորինվածքով՝ նրա բոլոր շորս թևերն էլ ունեն ներսից և դրսից ուղղանկյուն եզրագիծ¹⁷: «Ներգծված խաչ» տիպին է պատկանում Եղվարդի ս. Աստվածածին երկհարկ եկեղեցու (1301 թ.) երկրորդ հարկը, որը ունի ուղղանկյուն բնմ: Գմբեթավոր դահլիճի հորինվածքով եկեղեցիներից Հայաստանում ուղղանկյուն բնմ ունեն Տաթևի մոտ Յաքուտի (932 թ.) և Վասպուրականում ս. Սարգիս (XIV դ.) եկեղեցիները:

Արցախում ստեղծվեց ուղղանկյուն բնավ եկեղեցու մի հետաքրքրական տիպ՝ երկմույթ գմբեթավոր հորինվածքով: Դա Պտկեսբեքի (Պտկի ս. Գևորգ) եկեղեցին է (1283 թ.): Հուշարձանը լավ է պահպանվել: Քառակուսի հատակագծով աղոթասրահի մեջտեղում բարձրանում է դրսից ութանիստ թմբակով գմբեթը, որը հանգչում է մեկ զույգ մույթերի և բեմի անկյունների միջև գտնվող կամարների վրա¹⁸: Միջին նավն արևելքում ավարտվում է նույն բարձրությամբ ունեցող, ուղղանկյուն, բավական խոր բնավ, որի

¹⁶ Նույն տեղում, էջ 58:

¹⁷ Վ. Գրիգորյան, նշված աշխ., էջ 43:

¹⁸ Շ. Մկրտչյան, նշված աշխ., էջ 164:

երկու կողմերում ավանդատներն են: Բեմը զուտով հաղորդակցվում է հյուսիսային ավանդատան հետ: Հայկական ճարտարապետության մեջ մեկ դույզ մույթով գմբեթավոր կառույցների վաղագույն օրինակն է Արտրիի եկեղեցին, որը կառուցել է Անաստաս կաթողիկոսը (661—666 թթ.): Հետագայում նույնպես (Խճարկե սահմանափակ) այս հորինվածքով եկեղեցիներ են կառուցվել Հայաստանում, հատկապես Լոռի-Գուգարքում: Արցախում Պտկեսբերդից բացի նույնատիպ հուշարձան է նաև Մաղկավանքը (XII դ., վերակառուցված 1682 թ.): Պտկեսբերդի հեաաբբրական առանձնահատկությունն է գմբեթի իրականացումը երկու դույզ խաչվող կամարներով: Ինչպես արդեն նշվեց, ծածկի այս կոնստրուկցիան տարածված էր հայկական դավիթներում: Բայց կա մի եկեղեցի ևս, որն ունի խաչվող կամարներով ծածկվող գմբեթ՝ Զորադիրի ս. Եջմիածինը (VI—VII դդ.): Ընդունված է այն տեսակետը, որ Զորադիրում գմբեթը XVII դ. վերակառուցման արդյունք է: Բացառված չէ, որ Պտկեսբերդում նույնպես մենք գործ ունենք ուշ միջնադարի էական վերակառուցման հետ, որի ընթացքում գմբեթի թմբուկը ստացել է այժմյան իր ծածկը:

* * *

Ինչպես տեսանք, Արցախի ճարտարապետական դպրոցի հետազոտությունը ցույց է տալիս, որ նրա առանձնահատկությունները ևս զուտում են միջնադարյան հայկական շինարվեստի շրջանակներում:

«Ունենալով տեղական պայմաններից բխող ինքնատիպություն, արցախյան ճարտարապետական դպրոցը (ինչպես և շիրակյան, գուգարքյան, սյունիքյան, վասպուրականյան դպրոցները) կենտրոնական Հայաստանի ճարտարապետության հետ սերտ կապի մեջ է եղել: Տարբեր են այս ընդհանրության ասպեկտները: Նրանք արտահայտվել են շինարարական տեխնիկայում, ավանդական շինանյութի՝ քարի կիրառման եղանակներում, կոնստրուկտիվ լուծումներում, տարբեր շենքերի հատակազածային և ծավալա-տարածական հորինվածքներում, նրանց օրինաչափություններում, ավանդական յախունքներում, դարձամոտիվներում և այլն: Ամբողջությամբ վերցրած նրանք համոզիչ վկայում են, որ «Հայաստանի Արևելից կողմանց» կամ պատմական Արցախի ճարտարապետությունը, մշտապես ստեղծագործական կապ է պահպանել կենտրոնական Հայաստանի ճարտարապետության հետ, սնվել նրա նվաճումներով և հանդիսանում է զուտ հայկական»¹⁹:

¹⁹ В. Арутюнян, Едини по духу и воплощению, «Коммунист», Ереван, 1989, № 194.

Արցախի ճարտարապետության տեղական առանձնահատկությունները դադարեցին գոյություն ունենալ ուղ միջնադարում: XVII—XVIII դդ. այստեղ կիրառվեցին ողջ հայկական ճարտարապետության մեջ այդ ժամանակաշրջանում տարածված քառամույթ գմբեթավոր հորինվածքը և եռամյակ բաղիլիկան, կառուցվեցին վանք-ամրոցներ:


Ինչպես հարեան Սյունիքում, Արցախում ևս երկու զույգ մույթերով եռամյակ բաղիլիկաների հետ (Տողի ս. Հովհաննես, Թաղասեռի անապատ, Կավաքավանք, Ավետարանոցի ս. Աստվածածին) կառուցվեցին Հայաստանում XVII դ. մշակված բաղիլիկայի այն ենթատիպը, որը ունի միայն մեկ զույգ մույթ (Ծարի վանք, Հակակու ս. Աստվածածին, Եղիշակուսի անապատ, Ավետարանոցի Կուսանայ անապատ, Ծամձորի Աստվածածին, Եղիշեի վանք և այլն)¹:

Քառամույթ գմբեթավոր բաղիլիկաներից ուշագրավ է Հերհերի ս. Գրիգորիս եկեղեցին (1667—1676)² նրա ցածրադիր թմբուկով գմբեթը շենքի ծավալում համարյա չի արտահայտվում:

